Թ. ԽԶՄԱԼԵԱՆ
Գ. ՄԽԻԹԱՐՅԱԼԵԱՆ

3700

ԿԱՅԾԵՐ

491.99-8
Խ-49

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

Երկրորդ տպագրութիւն

Գ. ՏԱՐԻ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Ց. Գ. Սահեանցի
1913.

2010

491.99-8
Խ-49

Թ. ԽԶՄԱԼԵԱՆ
Գ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

428
112-ԽԶ

ԿԱՅԾԵՐ

8689
ԳԻՆԸ 70 ԿՊ.

Չորրորդ տարեւայ դասագիրք հայ եկեղեցական-ծիսական դպրոցների չորրորդ բաժնի
եւ
Պետական դպրոցների համապատասխան դասարանների համար։

Երկրորդ բարեփոխած հրատարակութիւն։

Մեր իրաւունքով ճկարների, ինչպէս եւ փոխադրած յօդուածների արտատպութեան իրաւունքը վերապահուած է։

№ 2002

10850

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Արագատիպ-տպարան Յ. Գ. Սանոյեանցի.
1913

82479-ան
363-90

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

(ՉՐՈՅՑՆԵՐ, ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՌԱՆՑՊԵՂՆԵՐ)

1. ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

Դպրոցի առաջին օրն է։ Երազի պէս անցան գիւղում արձակուրդի երեք ամիսները։ Մայրս այս առաւօտ տարրական դպրոցը տարաւ ինձ՝ երրորդ դասարանը մտցնելու համար. մտքերս դեռ ամարանոցի հետ էին և ես ակամայ էի գնում մօրս յետևից։ Երեխաներն աղմկում ու վազվզում էին փողոցներում։ Ծնողները լցել էին երկու գրավաճառի խանութները և պայուսակներ, թղթակալներ, տետրակներ էին գնում։ Դպրոցի դռանը այնքան բազմութիւն էր հաւաքւած, որ սպասաւորները հազիւ էին մուտքը պահպանում։ Դռան մօտ մի

մարդ ուսիս դիպչելով կանգնեցրեց ինձ. դա երկրորդ դասարանի միշտ գլարթ, շիկագոյն ու գանգրահեր վարժապետս էր։

—Ուրեմն, Հէնրիկո, մենք բոլորովին բաժանւում ենք իրարուց։

Ես այդ լաւ գիտէի, բայց և այնպէս տխրեցի։ Հազիւ հազ ներս մտանք։ Տիկիններ, բանւորներ, մեծաւորներ, աղախիններ՝ ամենքն էլ մի մի տղայ ու խնդրագիր բռնած, լցւել էին նախասենեակն ու սանդուխները. մտնողը կըկարծէր, թէ թատրոն է եկել։

Առաջին դասարանի վարժուհիս իր դասատան դռնից ողջունեց ինձ և ասաց.—Հէնրիկո, այս տարի դու վերին յարկը կ'երթաս. էլ չեմ տեսնիլ այս տեղով անցկենալդ։—Այս ասելով՝ նա տխրութեամբ ինձ նայեց։

Վշտագին կանայք շրջապատել էին տեսչին, որովհետև իրանց որդոց համար արձակ տեղ չէր մնացել։

Աշակերտներից ոմանք մեծացել էին, միւսները գիրացել։ Առաջին բաժանմունքի տղերքը չէին ուզում դասարան մտնել, փոքրիկ իշուկների պէս կամակորում էին. ստիպւած էին բռնի ներս տանել նրանց։ Մի քանիսը նստարանների վրայից փախչում էին, միւսները՝ տեսնելով ծնողների հեռանալը, լաց էին լինում։ Ծնողներն էլ ստիպւած էին վերադառնալ, մխիթարել նրանց կամ տուն տանել։ Ժամը տասին արդէն ամենքս հաւաքւած էինք—յիսուն և չորս տղայ, որոնցից միայն տասն և հինգը իմ նախկին ընկերներս էին։

Դպրոցը շատ փոքր ու տխուր երևաց ինձ. յիշեցի անտառը, լեռները, ամառը։ Յիշեցի և երկրորդ դասարանի բարեսիրտ վարժապետիս, որ միշտ հեռներս ծիծաղում էր։ Նա փոքրահասակ էր և կարծես մեր ընկերը լինէր։ Ցաւում էի, որ այլ ևս տեսնելու չեմ դասարանում նրա քրքրւած շէգ մազերը։ Մեր նոր վարժապետը բարձրահասակ է, անմօրուս, երկար ու գորշ մազերով, ճակատի վրայ մի ուղղաձև խորշ ունի, ձայնը զօրեղ է

Ահա և առաջին օրը։ Դեռ ինչեր ամիս կայ։ Քանի՞ ամսական քննութիւններ, որքան աշխատանք։ Փափագում էի շուտով մօրս տեսնել։ Նա սպասում էր ինձ մուտքի մօտ, ես վազեցի նրա ձեռքը համբուրելու։

Ուրախս գլարթ տուն գնացի։ Սակայն չըկայ այլ ևս իմ առաջին վարժապետը, չըկայ նրա բարի ու քաղցր ժպիտը, և դպրոցն առաջւայ պէս գեղեցիկ չէ թւում ինձ։

2. ԱՆԳՐԱԳԷՏ

Երբէք մէկին չեմ նախանձում
Ես աշխարհիս երեսին,
Միայն, գրագէտ դուք պարոններ,
Նախանձում եմ ձեր բաղդին։
Ա՛խ, գթացէք գեղջուկ որբիս,
Մի լաւութիւն միայն արէք—
Տուէք մի թերթ ինձ ճերմակ թուղթ,
Մի փետուրէ գրիչ տուէք,
Եւ ինձ գրել սովորեցրէք,
Սովորեցրէք լաւ, շուտով,
Որ գրիչս կայծակից էլ
Արագ թռչէ գրելով.
Որ պատմելով թղթի վրայ
Ես ձեզ ցոյց տամ ամեն բան—
Մեր աշխատանք, մեր չարչարանք
Ու մեր խաչը վկայութեան...
Կը յայտնէի, ինչ ցնորքներ,
Ի՞նչ մտքեր կան իմ գլխում,
Մի ողջ աշխարհ ցոյց կը տայի
Ես աննման պատկերում...
Բայց այժմ անհետ չքանում են
Բոլոր իմ քաղցր երազներ.
Ես անգրագէտ, ես անուս եմ...
Սովորեցրէք պարոններ։
Կըգրէի, ինչպէս ամառն։
Արշալոյսն էր փայլփլում

Եւ քարերին զարնելով
Կայտառ ջուրն է խոխոջում.
Ինչպէս արտում ցորենի հետ
Զրոյց է անում մեղմ քամին,
Եւ աղօթքի հրաւիրում
Փոքրիկ զանգը մեր ժամին.
Ես աղօթել կամենում եմ,
Բայց չըկիտեմ աղօթքներ—
Ես անգրագէտ, ես անուս եմ...
Սովորեցրէք, պարոններ։
Շատ լաւ բան է դիր իմանալ։
Գրագէտ է վաշխառուն,
Գրագէտ են դատարանի
Ծառայողներն անկշտում.
Եռանդով էլ նրանք գրում են,
Նրանցն է դրախտն աշխարհի,
Իսկ այդ գրելն ինչ փոյթ՝ որ խեղճ
Մարդու հոգին պիտ հանի...
Շուտով. շուտով գրիչ տուէ՛ք,
Սովորեցրէ՛ք գործ ածել,
Կամիմ գրել ազգիս համար,
Նրա համար աշխատել.
Եւ ես նրան կըպաշտպանեմ —
Չարագործից, յիմարից,
Կ՚արտագրեմ աւետարանն
Ես բոլորը սկզբից...
Ա՛յ դու, սաղ իմ ճերմակ թևիկ,
Քեզ տուել եմ կերակուր,
Քեզ սիրել եմ—փոխարէնը
Թևիցդ ինձ մի գրիչ տուր.
Սիրուն դու սաղ, տո՛ւր, խնդրում եմ.
Ինձ թռչելու զոյգ թևեր,
Ուր ամենքը գրագէտ են...
Սովորեցրէ՛ք, պարոններ։



Պատմեցէք ամ պատմութիւն ինչպիսի բանվորներ են նոցա ամէն։

3. ՄԵՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Մեր նոր ուսուցիչը առաջին դասից յետոյ ինձ ևս դուր եկաւ։ Երբ մենք դասարան մտանք, նա արդէն գրաւել էր իր տեղը։ Մեր դասարանի մօտով անցնելիս նրա անցեալ տարւայ աշակերտները մօտենում էին դռանը և սիրալիր բարևում. երևում էր, որ նրանք սիրում էին իրանց ուսուցչին։ Իսկ ուսուցիչը սիրով և քաղցրութեամբ ընդունում էր նրանց բարևը։

Մեր անցած ու սովորածից մի քանի բան հարցնելուց յետոյ, ապա նա գրքից մի կտոր սկսեց թելադրել, իսկ ինքը մեզ գալով աշակերտների մէջ նայում էր տետրակները։ Նկատելով, որ աշակերտներից մէկի երեսը կարմրել է, կարծես դուրս տուած լինի, նա մօտեցաւ նրան, բռնեց կզակը և ձեռքը գլխին դրեց, որպէսզի իմանայ, թէ նա տաքութիւն չունի։ Այդ ժամանակ մի աշակերտ նրա յետևից սկսեց ծամածռութիւններ անել։ Ուսուցիչը յանկարծ յետ դարձաւ։ Երեխան արագ նստեց տեղը, գլուխը քարշ ձգեց, ապատելով հետևանքին։ Ուսուցիչը ձեռքը նրա գլխին դնելով ասաց. «այսուհետև այլևս այդպիսի բաներ չանես»։ Եւ ուրիշ ոչինչ։

Այնուհետև նա շարունակեց թելադրել։

Երբ մեր գրաւոր աշխատանքը վերջացաւ, նա լռութեամբ նայեց մեզ, ապա ցածր, կոշտ, բայց դուրեկան ձայնով ասաց. «լսեցէք, երեխաներ. մենք պէտք է ողջ տարին միասին անցկացնենք։ Ուրեմն ջանանք լաւ անցկացնել նրան։ Ես ընտանիք չունիմ։ Անցեալ տարի դեռ մայրս կենդանի էր, բայց այժմ արդէն մեռած է։ Աշխարհումս այժմ ոչ ոք չունիմ, բացի իմ աշակերտներից։ Դուք կլինէք իմ զաւակները։ Ես կըսիրեմ ձեզ, դուք ևս ինձ սիրեցէք։ Ինձ հաճելի չէ պատժել ձեզանից որևէ մէկին։ Ցոյց տուէք որ դուք լաւ երեխաներ էք։

Զանգը տուեց։ Մենք հանդիստ դուրս եկանք դասարանից։ Ծամածռութիւն անող աշակերտը մօտեցաւ ուսուցչին և դողդողուն ձայնով ասաց. «պարոն ուսուցիչ, ներեցէք ինձ»։

Ուսուցիչը համբուրեց նրա ճակատը և ասաց. «գնա որդեակս, խաղ արա»։

4. ՆԱԲԷԿԻ ՆԺՈՅԳԸ

Արաբ Նաբէկը մի այնպիսի հազւագիւտ և գեղեցիկ նժոյգ ունէր, որ ամենքը նախանձում էին նրա տիրոջը։ Մի արաբ ուրիշ ցեղից, անունը Դագեր, կամենում էր ձեռք բերել այդ նժոյգը։ Իզուր էր նա առաջարկում Նաբէկին նժոյգի փոխարէն անհամար ուղտեր և անթիւ գանձեր։ Նաբէկը ոչ մի կերպ չէր համաձայնւում տալ իր սիրելի նժոյգը։

Այն ժամանակ Դագերը խորամանկութիւն բանեցրեց։ Մի օր նա իր երեսը խոտի հիւթով ներկեց, ցնցոտիներ հագաւ, վիզն ու ոտները փաթաթեց, իբրև մի ցաւագար մուրացկան ու գնաց նստեց մեծ ճանապարհի վրայ, որով պիտի անցնէր Նաբէկը։ Երբ Նաբէկը մօտեցաւ Դագերին, Դագերը ասաց կեղծ, նւաղած ձայնով.

—Ես մի ազքատ օտարական եմ։ Երեք օր է, որ այստեղ նստած եմ ու չեմ կարողանում տեղից շարժւել, որ գնամ, մի կտոր հաց ճարեմ։ Ցաւից մեռնում եմ, օգնիր ինձ, Աստուած քո վարձքը չի մոռանայ։

Նաբէկը առաջարկեց ծպտեալ աղքատին նստել իր ձիու քամակին և միասին գնալ իրանց տուն։ Բայց խաբեբան պատասխանեց.

—Ես չեմ կարող ոտքի կանգնել, ուժ չունիմ։

Գթասիրտ Նաբէկը ձիուց վայր թռաւ, մօտեցրեց ձին Դագերին և մեծ դժւարութեամբ նստեցրեց նրան։ Երբ Դագերը իրան թամբի վրայ զգաց, նա զարկեց նժոյգին սապանդակներով և առաջ սլացաւ, ասելով.

Այս ես եմ, Դագերը. ահա վերցնում եմ նժոյգդ և տանում եմ իմ տունը։

Նաբէկը յետևից կանչեց, որ գոնէ իր մի խօսքը լսէ։

Դագերը համոզւած էր, որ ոչ ոք իրան չի հասնի, ուստի, շուռ տուեց ձիու գլուխն ու կանգ առաւ, միայն թէ Նաբէկից բաւականին հեռու, որովհետև նրա ձեռքին նիզակ կար։

Եւ Նաբէկն ասաց.

—Դու խլեցիր իմ նժոյգս, եթէ այդպէս էր Ալլահի կամքը, բարի վայելես. բայց միայն մի բանի մասին եմ ես քեզ աղաչում,—խոստացիր ոչ ոքի չասել, թէ ինչ հնարքով տիրացար ձիուս։

—Ինչու,—հարցրեց Դագերը։

—Նրա համար,—շարունակեց Նաբէկը—որ մի ուրիշ մարդ կարիքի ժամանակ կարող է օգնութիւն խնդրել, և կըկարծեն՝ չըլինի թէ խաբում է։ Ես կըլինիմ այն ժամանակ պատճառ, որ մարդիկ այլևս միմեանց ոչ մի բարերարութիւն չեն անի, որովհետև ամենքն էլ կըվախենան ինձ պէս խաբւելուց։

Դագերը այս խօսքերից ապշած՝ մտածմունքի մէջ ընկաւ, յետոյ նա իջաւ ձիուց և ասաց.

—Ես մոլորուեցի, որովհետև նախանձը կուրացրել էր ինձ. դու ինձ ճշմարտութեան ճանապարհը ցոյց տուիր։ Ներիր ինձ։

Եւ նա գրկեց Նաբէկին ու վերադարձրեց նրան նժոյգը։

Սրանից յետոյ Դագերը ճանապարհ ձգեց Նաբէկին մինչև նրա վրանը և մնաց նրա մօտ երեք օր ու եղբայրացաւ նրա հետ։

Միայն Նաբէկը մի այնպիսի նապաստակ և գեղեցիկ նժոյգ ունէր, որ ամենքը նախանձում էին նրա արագրոցը։ Մի ապար ուրիշ գեղից, անունը Դագեր, կամենում էր ձիոց բերել այդ նժոյգը։ Թշուառ էր նա առաջարկում Նաբէկին նժոյգի փոխարէն անհամար ուղտեր և անթիւ գանձեր։ Նաբէկը ոչ մի կերպով չէր համաձայնում տալ իւր սիրելի նժոյգը։

5. ԿՈՅՐ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Կոյր։ Ոչ երկինքը տեսնել, ոչ արևը, ոչ հօրը, ոչ մօրը, և ոչ մի բան ամբողջ աշխարհում։ Յաւիտենական խաւար, ինչպէս գերեզմանում։ Հապա փորձեցէք աչքերդ փակել և երևակայել, որ յաւիտեան այդպէս պիտի մնաք։ Սոսկալի, զարհուրելի բան. ձեզ այնպէս կրթայ, թէ դրան անկարելի է համբերել, թէ խելքներդ կրթոցնէք կամ կրմեռնէք... Եւ սակայն... թշուառ մանուկներ. երբ առաջին անգամ մտնում էք

կոյրերի դպրոցը դասատիչոցին, լսում էք նրանց ջութակ ածելը, սրինգ նուագելը, բարձր-բարձր խօսելը, ծիծաղելը, ազատագատ մանեգալը,—մտքերովդ անգամ չի անցնի, թէ նրանք թշուառներ են։ Այնտեղ կան տասն և վեց, տասն և ութ տարեկան երիտասարդներ ուրախ, զօրեղ, կարծես թէ բոլորովին հաշտուած են իրանց կուրութեան հետ։ Սակայն նրանց դէմքերի արտայայտութիւնը լուրջ է, հպարտ,—իսկոյն տեսնում էք, որ շատ չարչարանք, շատ վիշտ պիտի կրած լինեն, մինչև որ ընդմիշտ հաշտուել են իրանց դառն դժբաղդութեան հետ։ Պատահում են և ուրիշ դէմքեր՝ գունատ, խոնարհ, հեզ, տխրամած...

Ոմանք զրկուել են աչքի լոյսից մի քանի օրում, ուրիշները տանջուել են ամբողջ տարիներ, շատերն էլ կուրացել են տարապիելի վիրահատութեան պատճառով... վերջապէս կան և այնպիսիները, որոնք կոյր են ծնուել... ծնուել են անլոյս գիշերուայ մէջ, մտել են աշխարհ, իբրև մի գերեզման, և չգիտեն—ինչ ասել է մարդու պատկեր։ Երևակայեցէք, թէ որքա՜ն հոգեկան ցաւ են քաշել նրանք և դեռ քաշում են, զգալով առողջների և իրանց մէջ եղած տարբերութիւնը։ Մեր ո՞ր մեղքերի համար է այս տարբերութիւնը, հարցնում են նրանք։

Կոյրերը սովորում են գրել--կարդալ և հաշուել։ Յատուկ նրանց համար տպած գրքեր կան, ուռուցիկ տառերով։ Կոյրերն այդ տառերի վրայ մատն ածելով մատները, որոշում և արտասանում են բառերը։ Խեղճերը սահուն են կարդում, բայց և շատ կարմրում են մի սխալ կարդալիս։ Գրում են առանց թանաքի՝ հատ ու կոպիտ թղթի վրայ մի բարակ երկաթէ ձողով, որ հետքեր է թողնում թղթի վրայ։ Թղթի հակառակ կողմը դուրս են գալիս ուռուցիկ տառեր, և կոյրը, մատները նրանց վրայ մատն ածելով՝ կարող է կարդալ իր կամ ուրիշների գրածը։ Այսպէս նրանք գրում են շարադրութիւններ, նամակներ և թւաբանական խնդիրներ։ Մտաւոր հաշիւները կատարում են վերին աստիճանի արագ ու թեթև՝ առանց ցրուելու իրանց միտքը որևէ ուրիշ բանի վրայ։

Կոյրերը չափազանց սիրում են լսել ուրիշների ընթեր-

ցումը։ Արժէ ականջ դնել նրանց դատողութիւններին մի կարդացած նիւթի մասին։ Նրանք ճանաչում են ուսուցչին քայլուածքից, ձայնի հնչիւնից. նկատում են նրա ոգու տրամադրութիւնը։ Նրանք սիրում են, որ վարժապետը իրենց քաջալերելիս շոյէ, շօշափէ ձեռքերը. իրանք էլ շնորհակալութիւն յայտնելիս բռնում են վարժապետի ձեռքը։ Պատահած չէ, որ կոյրերը սիրեն մէկին ու յետոյ ատեն. բարեկամութիւնը նրանց սփոփանքն է։ Նրանք վերին աստիճանի արդարամիտ են և պարզ ու ճիշտ որոշում են չարն ու բարին։ Ոչ ոք այնքան չէ ոգեւորւում որևէ վսեմ գործի պատմութիւնով, որքան կոյրերը։

Կոյրերն երաժշտութեան ջերմ սիրահար են։ Երաժշտութիւնը նրանց բերկրանքն է, կեանքն է։ Մինչև անգամ երեխաները պատրաստ են մի քանի ժամ անշարժ կանգնել երաժշտութիւն լսելու համար։ Ածելը հեշտ են սովորում և ածում են աշխուժով։ Եթէ վարժապետը միկին ասէ, թէ նա նուագածութեան շնորհք չունի, շատ կըտխրի, բայց և այնպէս կըշարունակէ մեծ եռանդով սովորել։

6. ՓՈՂՈՑԻ ՏՂԱՆ

Տեսնում եմ յաճախ, ինչպէս մարդաշատ լայն փողոցներով
Թրև է գալիս փողոցի տղան ամբողջ օրերով,
Սոված, կիսամերկ, արհամարհելով իր սև վիճակը,
Չէ խորշում կեղտից, ոչ գողութիւնից մանուկ հասակը։

Ո՞վ գիտէ, գուցէ նրա ծնողներն ընկած են բանտում,
Կամ գործարանում քրտինք թափելով հաց են աշխատում.
Միակ պարապը ինքն է որ կայ, ապրում է ազատ
Փողոցի տղան, որպէս ամբոխի որդին հարազատ։

Քարեր է նետում անցուդարձ անող անասուններին,
Նրանց տանջանքով հրճւում է սրտանց մանուկ վայրենին.

Ու մի վայրկեանում սոսկաց իմ հոգին, երբ միտս բերի
Սրա պէս անխնամ մանկանց վիճակը անթիւ որբերի։

Ես խղճում էի փողոցը նետուած անխնամ մանկանց,
Արդէ՞օք, իմանամ, թշուառ մանուկներ, փողոցում ծնուած,
Ի՞նչ է սպասում ձեզ ապագայում, որպիսի՞ վիճակ,
Աշխատող մեղո՞ւ, թէ՞ բոռ կըմնաք, երբ առնէք հասակ։

Զարատանջ, հիւծող բուժարաններն են գուցէ ձեզ կանչում,
Կամ տաժանակիր սև աշխատանքը հեռուից սպասում...
Ա՜խ, ինչպէս ցաւում, ինչպէս տանջւում է հոգիս ձեզ համար,
Ա՜յ անտուն, անտէր մանուկ թռչնիկներ, փոքրիկներ կայտառ։

Ես արտասւում եմ, մաշւում եմ անվերջ ձեր դառն վիճակով,
Մօր պէս փայփայել, տաքացնել ուզում եմ ձեզ իմ ջերմ կրծքով.
Ա՜խ, ես էլ ձեզ պէս մանուկ հասակում տարել եմ զըրկանք,
Լսել անէծքը անգութ վիճակի, կրել բիւր տանջանք...

7. ԱՆՁՆԱԶՈՀ ԸՆԿԵՐ

Քաղաքի մի հսկայական շինութեան բարձրունքների վրայ կանգնած էին երկու քարտաշ. նրանցից մէկը ծեր էր, իսկ միւսը երիտասարդ։ Ներքևը, նրանց ոտքերի տակ, աղմկում էր մեծ քաղաքը, իսկ նրանց շուրջը փչում, վայում էր սառն քամին։

Քարտաշները սիրով աշխատում էին, ուշադրութիւն չդարձնելով ցրտին ու մռնչող քամուն։ Քամին հետզհետէ սաստկանում էր։ Վերելակները երերում էին։ Յանկարծ քամու մի ուժգին հոսանք միմեանցից բաժանեց վերելակների կապերը, և նրանք դղրդալով ցած թափուեցան։ Անվնաս մնաց միայն մի տախտակ գերանակալի հետ։ Քար-

տաշները մի հնարքով կարողացան բռնել այդ տախտակից և այդպես կախված մնացին բարձրում օդի մէջ։

Քամին մոնչում էր աւելի ուժգին, տախտակը ճարճատում և կոբանում էր մարդկանց ծանրութիւնից։ Այն ժամանակ երիտասարդ քարտաշն ասաց ծերին.

Երևի մեր վերջը հասել է։ Մինչև մարդկանց օգնութեան հասնիլը մենք չենք կարող կախված մնալ այս տախտակից։ գուցէ մեզանից մէկը կարողանայ, բայց երկսով անկարելի է այդ, որովհետև տախտակը շուտով կրկոտուի։

—Տէր Աստած,—հառաչեց ծերը,—Ի՞նչ կըլինի իմ երեխաների վիճակը, եթէ ես մեռնեմ։

—Երեխաներ շատ ունիս։

—Հինգ հատ։

—Իսկ ես մենակ եմ և ոչինչ ու ոչ ոքի չեմ կորցնիլ, եթէ մեռնեմ։ Հարց էլ չի կարող լինել, թէ մեզանից որը պէտք է մեռնի։ Մնաս բարև, ընկեր։

Եւ երիտասարդ քարտաշն զգուշութեամբ բաց թողեց տախտակն ու թռաւ դէպի ցած։ Նրա մարմինն ուժգին թափով դիպաւ սալայատակին ու ջարդ ու փշուր եղաւ։

Իսկ ծերունին, ընտանիքի հայրը, ողջ և անվնաս մնաց և իր ամբողջ կեանքում երախտագիտութեան արցունքներն աչքերին՝ յիշում էր իր անձնազոհ ընկերոջը։

8. ԻՆՉՈ՞Վ Է ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆՈՒՄ ՄԱՐԴ

(Հնդկական զրոյց)

I

Հարաւային Հնդկաստանում ապրում էր մի մեծատուն։ Նա այնքան հարուստ էր, որ նրա միայն պալատը արժէր հարիւր հազար ոսկի։ Այդ պալատն ամբողջապէս շինուած էր սև մարմարիոնից, նրա ներքնատան նկուղների մէջ ամբարուած գանձերի արժէքը մարդկային երևակայութիւնից բարձր էր։

Մէկ անգամ այդ մեծատունը կանչեց իր երեք որդիներին և ասաց.

—Զաւակներս... Աշխարհումս ինձանից էլ հարուստ չկայ, և որպէսզի հարստութիւնս մաս-մաս չըլինի, որոշել եմ ձեզ-

նից մէկին ինձ ժառանգ նշանակել։ Ահա ձեզ երեք փղոսկրեայ արկղներ։ Նրանց ամեն մէկում տասը հազարական ոսկի կայ։ Վեր առէք այդ ոսկիները և երեք տարով հեռացէք, որտեղ կամենաք։ Ես որոշել եմ ժառանգութիւնս թողնել նրան, ով կարողանայ իր կեանքը ամենից շատ երջանիկ անցկացնել։

Երեք տարին անցաւ, ինչպէս մի օր։

Հասաւ ժամը, երբ նրանք պէտք է վերադառնային։ Ծերունի հայրը խնճոյք սարքեց և բազմաթիւ հիւրեր հրաւիրեց։ Կոչունքը դեռ նոր էր սկսուած, երբ դռան բեհեղեայ վարագոյրները բացուեցին և ծանրագին հագուստներով մի վաճառական ներս մտաւ։ Նա գլուխ տուեց տան տիրոջը և ասաց.

—Ես Լախմանն եմ, քո աւագ որդին։ Երեք տարի առաջ ես դուրս եկայ այս տանից, որ ինքս իմ կեանքս երջանկացնեմ։ Տեսայ, որ բոլոր մարդիկ զարճութեան յետևից են ընկնում, հասկացայ որ այս աշխարհի մէջ երջանկութիւն ձեռք ձգելու միջոցը՝ ոսկին է։ Սրա համար ես գնեցի անուշահոտ իւղեր ու համեմներ, ձեռք բերի ուղտեր, բարձեցի նրանց փղոսկրով ու մետաքսեղէնով, և գնացի հեռաւոր երկիրներ առուտուր անելու։ Ես բերանս պատառ չէի դնում, աչքիս քուն չէր գալիս, անդադար աշխատում էի։ Այժմ ես ձեռք եմ բերել մեծ հարստութիւն, որով կարող եմ ամեն բան ունենալ։

Հիւրերը պատկառանքով նայեցին Լախմանին։

—Եւ դու երջանիկ ես, հարցրեց հայրը։

—Երբ ես Քաֆրիստանի լեռներումն էի,—պատասխանեց Լախմանը,—մէկ անգամ, վրանիս տակ պառկած ժամանակ լսեցի իմ ուղտապանի երգելը։ Նրա երգը լիքն էր ազատութեան ու երջանկութեան արտայայտութիւնով և շատ յուզեց սիրտս։ Ես այդ ժամանակ առաջին անգամ զգացի, որ՝ «կարելի է երջանիկ լինել և ուղտապանի քուրձերի մէջ»։

—Լաւ, բայց դու, դու ինքդ երջանի՞կ ես,—նորից հարցրեց հայրը Լախմանին։

Լախմանը չըպատասխանեց. նա դրական պատասխան տալ չէր կարող հօրը։

II.

Այդ միջոցին դռան առջև աղմուկ բարձրացաւ։ Ծառաները էին, որոնք չէին թողնում մի աղքատի ներս մտնել, բայց նա դէս ու դէն հրելով ծառաներին, սրարշաւ ներս ընկաւ հիւրասենեակը։

—Ես Դոսրատն եմ, գոռաց նա տան տիրոջ վրայ։ Ես քո միջնակ որդին եմ։

—Ամենքն էլ ա՛խ քաշեցին։

—Թող իմ աղքատութիւնս և ցնցոտիները ձեզ չզարմացնեն... Ես Դոսրատն եմ, ասում եմ ձեզ։

Հայրը ճանաչեց որդուն, նա ուղիղ որ Դոսրատն էր, իր միջնակ որդին։

—Փողերս տի՛ աղքատներին,—ասաց Դոսրատը,—ես ապրում էի քաղաքներում, մարդկանց մէջ, և տեսնում էի, թէ ինչպէս չարութիւնն ու թշուառութիւնը թագաւորում են ամեն տեղ։ Ձեր զօրքերը կոտորում են ժողովրդին։ Դուք հարստահարում էք անմեղներին։ Շռայլութիւնը, քաղցը և հիւանդութիւնները կործանում են ձեզ։ Դուք, ողորմելի որդեր, մոռացել էք առաքինութիւնը և Բրահմային։ Ես չէի կարող ապրել ձեր մէջ, որտեղ ամեն բան ունայնութիւն է, որտեղ չկայ արդարութիւն, ես առանձնացայ անապատում։ Եւ այնտեղ՝ առանձնութեան մէջ՝ հոգով վերանում էի դէպի Նիրւանան, դէպի յաւիտենական խաղաղութիւնը։ Հաւատս բողբոջ արձակեց սրտիս մէջ՝ ինչպէս լոտոսի ծաղիկը. ես դարձայ ճգնաւոր և պաշտելի դարձայ նոյն իսկ Բրահմիններին։

—Բայց երջանի՞կ ես դու, որդեակ իմ,—հարցրեց ծերունին։

Դոսրատը նայեց հօրը, ձեռքը դրաւ ճակատին և մտածութեան մէջ ընկաւ։

—Ցիշում եմ՝ մի գիշեր,—շշնջաց նա մեղմիկ,—ամպերը որոտում էին անապատի վրայ, կայծակը ճեղքում էր երկինքը։ Բարձր արմաւենիները կռացնում էին ճղները մինչև գետին։ Նոյն իսկ քարերը՝ կարծես՝ մրրկի նման բարձրանում էին։ Եւ ես մրրկի բերանն ընկած սկսեցի ապաստարան որոնել։ Յանկարծ հեռուում մի լոյս փայլեց. այդ մի պարբայի հիւղ էր։ Մօտեցայ և տեսայ, թէ ինչպէս էր վառւում կրակը օջախի մէջ։ Պարիան նստած էր խարոյկի մօտ և երեխաները կշտին։ Նրանք ընթրիք էին անում։ Նրա կինը օրօրում էր երեխային։ Փոքր խարոյկի ճայթող տաշեղները երևում է՝ լաւ տաքացնում էին նրանց և այդ կրակի մէջ մի ինչ որ խաղաղ, գրաւիչ և ուրախ բան կար, ինձ համար անծանօթ։ Ես չուզեցի մտնել պիղծ պարիայի հիւղը և հեռացայ, բայց այդ ժամանակից անդադար հալածում է ինձ այն միտքը, թէ ես ևս կարող էի նոյնպէս նստել, շրջապատած ընտանիքով, ճաշակելով նրա քաղցրութիւնը, մինչ ես միայնակ եմ, և ոչ ոքի պէտքական չեմ... Զունիմ ոչ ոք սիրելու և ոչ ոք, որ սիրէր ինձ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/II 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆ
L 002
8689
363—90

Եւ արտասուքը աղուեցին Դոսրատի աչքերը։ Հազիւ նա մի կողմը քաշուեց, նրա տեղը բռնեց երիտասարդների մի խումբ, որ նոր էր եկել կոչունքին։ Նրանք ամենքն էլ ուրախ ու զուարթ էին։ Նրանց մէջ մի բարձրահասակ և սպիտակագլուխ մարդ կար։ Նա աչք ածեց հիւրերին և գլուխ տուաւ։

—Ռամախ,—գաւակս, բացականչեց տան տէրը,—ճանաչելով նրան։

—Ես եմ, հայրիկ,—պատասխանեց նա հանդարտ։ Ինչպէս խաղաղ աստղերի աղօտ լոյսը ցօղի կաթիլների մէջ, ինչպէս սոխակի երգի արձագանքը անտառի մէջ, ինչպէս կապուտակ երկնքի ցոլացումը սուրբի աչքերի մէջ,—այսպէս և իմ օրհնութիւնը թող անդրադառնայ ձեր սրտերի մէջ... Թէ ով եմ ես, հարցրէք ինձ շրջապատողներին. դրանք իմ բարեկամներս են, իմ աշակերտներս։ Ես սիրեցի մարդկանց և ձգտեցի դէպի ճշմարտութիւնը։ Այժմ պալատում և խրճիթում ինձ հանդիպում են ուրախութեան ժպիտով։ Ամբողջ Հնդկաստանը երգում է իմ երգերը և աշակերտներս համախմբւում են ինձ մօտ։ Ուրախ

եմ, որ կարող եմ հաղորդել մարդկանց մի վայրկեան ուրախութիւն։

—Դու երջանիկ ես, Ռամախ,—միաձայն հարցրին նրան եղբայրները։

—Զրգիտեմ, պատասխանեց նա,—բայց կարծեմ, ես աւելի քիչ դժբաղդ եմ, քան միւսները։

Հայրը գրկեց կրտսեր որդուն, իսկ Լախմանը և Դոսրատը գլուխները քաշ դցեցին։

9. ՄԵԾԸ

Գնա, իմ որդեակ, աշխարհքս անցիր,
Պանծալի անուն Մեծի դու ստացիր։
Ու գնաց որդին, շատ քրտինք թափեց,
Մեծ հարստութիւն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձաւ հօրը. ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քո կարծիքով։
—Չէ, չէ. թէև դու բօրսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակաւին մեծ մարդ։
Նա գնաց, մտաւ իմաստնոց տաճար,
Եղաւ խորիմաստ, գիտուն ու հանճար,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քո կարծիքով։
—Չէ, չէ թէև դու գիտութեանց ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։
Պահով, աղօթքով մտաւ անապատ,
Քուրձ հագաւ մարմնուն,
հրաշքներ գործեց շատ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քո կարծիքով։
Եղեմայ դրախտին էլ լինես դու զարդ,

Ես քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ.
Ու գնաց որդին, դարձաւ զօրավար,
Խելքով, քաջութեամբ տիրեց շատ աշխարհ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քո կարծիքով։
Չէ, չէ՛, թէև դու գոռ դաշտին ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։
Ու գնաց որդին մի երկիր օտար,
Հրէշք ու ցաւերէ մաքրեց այն աշխարհ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քո կարծիքով։
—Օտար աշխարհի թէև եղար զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։
Ու գնաց որդին գլխակոր, տրտում,
Հոգին վըրդոված, ցաւ ու դարտ սրտում,
Մաշւում էր խեղճը, զօռ տալով խելքին—
Հէ՞ր չարժանացաւ հօր գովասանքին...
Նրա եղբայրը գերի է տարած,
Թշնամու ձեռքով տունը աւերած.
Ճիգ արաւ, գլուխը վտանգի ձգեց,
Ազատեց եղբօրը ու տունը կանգնեց...
Յանկարծ... սար ու ձոր, ծով դղրդեցան,
Բիւրք բիւրուց բերնով
գոչեց ազգ մարդկան
«Մեծ մարդու անուն դու այժմ ստացար—
«Եղբօրդ յիշեցիր ու քեզ մոռացար»։



1) Գարնանը ի՞նչ էր տեսնում ծառի ճիւղերի վրայ։

2) Ի՞նչ են դառնում կոկոնները։

3) Կոկոններից յետագայում ի՞նչ են դուրս գալիս։

4) Ամառը ծաղիկների մէջ ի՞նչ է գոյանում։

5) Ե՞րբ են հասունանում պտուղները։

6. Ի՞նչ է լինում տերևները աշնանը։

Դիտեցէք իւրաքանչիւր պատկերը. նախ պատմեցէք եւ ապա գրեցէք ամբողջի բովանդակութիւնը։

10. ԱՂՋԻԿՆ ՈՒ ԼՈՒՅԿԻՆԵՐԸ

I.

Սառաթիկ ցուրտ էր։ Ձիւնը քուլա քուլա թափւելով՝ ծածկում էր գետինը։ Արդէն սկսում էր մթնանալ. այդ գիշեր հին տարին հրաժարական ողջոյն էր տալիս ամբողջ աշխարհին, իսկ վաղը նոր տարի էր—բերկրանքի և ուրախութեան օր։ Այդ միջոցին ձիւնապատ փողոցովն անցնում էր գլխաբաց և ոտաբոբիկ մի խեղճ աղջիկ։ Իրաւ է, տանից դուրս գալիս նա հագել էր մօր մաշիկները, բայց փողոցի մի ափից միւս ափն անցնելիս՝ նա ընկաւ երկու միմեանց հանդէպ ընթացող կառքերի մէջ տեղը և շտապելուց ու շփոթւելուց՝ մաշիկները կորցրեց։ Մաշիկներից մէկը իսկապէս կորաւ, իսկ միւսը թոցրեց մի փոքրիկ չարաճճի տղայ, որ նաւակ շինի նրանից և զարճանայ։

Աղջիկը գնում էր ոտաբոբիկ. նրա փոքրիկ ոտները կարմրատակել էին ցրտից ու փէտացել։ Նա իր կրծքի վրայ ամբացրած փոքրիկ արկղիկում դարսած ունէր լուցկիների մի քանի կապոց, իսկ մի կապոց բռնած էր ձեռքին։ Վատ եղանակը շատ էր ՁԼասում նրան. փողոցի անցուդարձը համարեա կտրւած էր, չրկային գնողներ, այդ պատճառով նրա գրպանում ևս չրկար ոչ մի կոպէկ։ Համ մրսում էր, համ քաղցած էր ողորմելին, և հէնց երեսիցն էլ երևում էր, թէ որքան չարաչար տանջւում էր նա։ Անբախտ արարած։ Ձիւնը քուլանեբով թափւում էր նրա բաց-խարտեաշ մազերի վրայ, որոնք գեղեցիկ գանգուրներով շրջապատում էին նրա փոքրիկ, չբնաղ վիզը։ Բայց ամենևին ուշք չէր դարձնում իր գանգուրների վրայ. նրանց մասին չէր էլ մտածում։ Պատուհանները վառւում են բազմաթիւ ճրագներով, խորտիկների հոտը բռնել է ամբողջ փողոցը, ամենքը պատրաստւում են դիմաւորելու նոր տարուն, ամեն տեղ եռում է կեանք—ահա ինչով էր զբաղւած նրա միտքը։

Վերջապէս մի խուլ անկիւն գտաւ երկու տների մէջ տեղում և, ոգնու պէս կուչ գալով, նստեց այնտեղ։ Սառնամա-

նիքը փէտացնում էր նրա ամբողջ մարմինը. բայց նա չէր համարձակւում տուն գնալ և ինչպէս վերադառնար երբ մէկ հատիկ լուցկի անդամ չէր ծախած և դրպանումն էլ կոպէկ չունէր։ Առաջինը՝ որ հայրը նրան կրթակէր՝ տեսնելով աղջկանը դատարկաձեռն տուն վերադարձած, և երկրորդն էլ— միթէ միևնոյն չէր՝ տուն գնալ, թէ փողոցում մնալ. չէ՞ որ նրանց տանն էլ նոյնքան ցուրտ էր, որքան և դուրսը, բաց երկնքի տակ։ Նրանք ապրում էին շարդախում և քամին չորս կողմից ազատ ներս ու դուրս էր անում, չընայելով որ ամենամեծ անցքերն ու ճեղքերը խցած էին յարդով ու զանազան փալաս-փուլուսներով։ Խեղճ աղջկայ ձեռքերը կապել, լեղակի գոյն էին ստացել։—Ա՜խ, ինչ կըլիներ գէթ լուցկու աղօտ բոցով տաքանամ։ Բայց ինչո՞ւ չըհանել մի լուցկի, չըքսել պատին և չըտաքացնել սառած մատներս։ Նա հանեց լուցկին և ծկըը՜ալ՝ քսեց պատին, օ, ինչպէս բոցավառւեց։ Աղջիկը ձեռքով ծածկեց աղօտ բոցը և լուցկին սկսեց այրւել, ինչպէս փոքրիկ ճրագ։ Եւ խղճուկին թւում էր՝ թէ նա նստած էր երկաթէ մեծ վառարանի առաջ և փէտացած մարմինը տաքացնում էր նրա հրաշալի բոցով։ Օ՜, ինչ գեղեցիկ վառւում է կրակն այդ հսկայ վառարանում՝ տարածելով շուրջը ախորժելի տաքութիւն։ Ողորմելին ձեռքերը մեկնեց, որ տաքացնի, բայց յանկարծ բոցը հանգաւ, վառարանը չքացաւ և ինքը դարձեալ նստած էր փողոցի մութ անկիւնում, այրւած լուցկին ձեռքում։

Նա հանեց երկրորդ լուցկին և քսեց պատին։ Լուցկին վառւեց, լուսաւորեց պատը և լուսաւորւած տեղը պատի վրայ դարձաւ թափանցիկ, կարծես լուսաւորուՁիւնը գազային էր։ Աղջիկը տեսաւ մի շքեղազարդ սենեակ, որի մէջ տեղը դըրւած էր սպիտակ սփռոցով ծածկւած սեղան։ Սեղանի վրայ կարգով շարւած էին փայլուն ճենապակեայ ափսէներ. իսկ մէջ տեղը՝ մեծ սկուտեղի վրայ դրւած էր սալորով և խնձորով գեղեցիկ համեմած ու տապակած սագ, որից այնպիսի մի անուշ հոտ էր բուրում, որ ամենակուշտ մարդու ախորժակն անդամ կըշարժէր։ Օ՜, երջանկութիւն. յանկարծ սագը վեր

կացաւ սկուտեղի վրայից և գլորւեց յատակի վրայ։ Նրա մէջքի մէջ ցցւած էին դանակ և պատառաքաղ։ Նա գլորւելով մօտեցաւ մանուկ աղջկանը։ Բայց լուցկին այդ միջոցին հանգաւ, և նրա առաջ կանգնած էր դարձեալ նոյն սառն ու հաստ պատը իր դաժան կերպարանքով։

Բայց ահա վառւեց երրորդ լուցկին, և աղջիկը տեսաւ, որպէս թէ ինքը կանգնած էր մի շքեղազարդ ծննդեան ծառի առաջ։ Այս ծննդեան ծառն անհամեմատ հարուստ ու բարձր էր այն ծննդեանից, որ նա անցեալ ծննդեան ծնին տեսել էր ապակեայ դռների միջով մի հարուստ վաճառականի տանը։ Տօնածառի կանաչ ճիւղերի վրայ վառւում էին հազարաւոր մոմեր, իսկ սենեակի պատերի վրայ կախկխւած բազմաթիւ գեղագրական պատկերները, որպիսիք նա յաճախ տեսել էր խանութների պատուհաններում դուրս դրած, կարծես ժպտում էին նրան։ Նա վեր բարձրացրեց իր փոքրիկ ձեռքերը, բայց, աւաղ, լուցկին հանգաւ. ծննդեան մոմերն սկսեցին պանալ բարձր, և աղջիկը տեսաւ, որ այդ աստղեր էին... Այդ միջոցին մի աստղ վայր ընկաւ և երկնքի երեսին գծագրեց մի երկայն հրային շերտ։

II.

«Մեռնող եղաւ»,—մտածեց աղջիկն ինքն իրան։ Նրա հանգուցեալ տատը, որից միայն վայելում էր նա փաղաքշանք ու գուրգուրանք, յաճախ ասում էր նրան՝ «երբ աստղ է վայր ընկնում, այդ նշանակում է, որ մէկի հոգին արդէն թռաւ դէպի Արարչի օթևանը»։

Նա պատին քսեց դարձեալ մի լուցկի։ Շուրջը տարածւեց շքեղ լոյս և հրաշալի լոյսի մէջ երևաց նրա պառաւ տատը՝ հեզ և փայլուն ժպիտը երեսին։

«Տատի ջա՛ն,—գոչեց աղջիկը՝ փէտացած կռնները տարածելով առաջ,—տա՛ր ինձ քեզ մօտ։ Ես գիտեմ, որ երբ լուցկին կըհանգչի, դու էլ չես լինիլ. դու կըչքանաս, ինչպէս չքացան երկաթէ վառարանը, տապակած սագը և շքեղ ծննդեան ծառը»։

Նա շտապով վառեց կապոցում մնացած միւս բոլոր լուցկիները, որովհետև սրտով ցանկանում էր, որ տատիկը չբնռանայ։ Լուցկիները մի ակնթարթում բոցավառուեցին և չորս կողմը տարածեցին մի այնպիսի գօրեղ լոյս, որ կարծես թէ ցերեկ լինէր։ Ոչ մի ժամանակ այնքան գեղեցիկ չէր եղած նրա տատը, որքան այդ բոպէին։ Նա վերցրեց թոռնիկին իր ձեռքերի վրայ և երկուսն էլ ուրախ ու զարթ պայծառ լոյսի շերտը ճեղքելով սլացան բարձր, բարձր—այնտեղ, ուր չըկար ոչ ցուրտ, ոչ քաղց, ոչ տանջանք...

Երբ վրայ հասաւ ցուրտ առաւօտը, աղջկանը գտան երկու տների մէջ տեղը, խուլ անկիւնում նստած։ Նրա այտերը կարմիր էին. շրթունքները ժպտում էին։

Խեղճ ոդորմելին մեռել էր։

Նա փէտացաւ նոր տարւայ նախընթաց գիշերը։ Նոր տարւայ առաջին օրը լուսաւորեց թշուառութեան մի անմեղ և անպաշտպան զոհի դիակ, որ մի քանի ժամ առաջ սրտագրաւ պատկերներ տեսնելով լուցկու փայլուն լոյսի մէջ ժպտում ու հրճւում էր, ինչպէս ճրագի շուրջը ճախրող թիթեռ։ Լուցկիների մի կապոցը բոլորովին այրուած էր։ «Երևի նա ուզեցել է տաքանալ»—ասաց մէկը։ Եւ ոչ ոքի մտքովն անգամ չանցաւ, թէ ինչպիսի հրաշալի տեսիլներ էին նկարուել փոքրիկ աղջկայ չքնաղ աչիկներին, ոչ ոք չմտացաւ, թէ որպիսի փառքով և շքեղութեամբ գիմաւորեց նա նոր տարուն իր սիրելի տատիկի հետ միասին։

11. ԱՆԻԻ ՏԱԿ

Օ՛, անմեղ տեղից քանի՛ զուր տանջանք
Բերում ես դու մեզ, անողոք սև կեանք,
Չէ՛, էլ չենք տեսնիլ մխիթարութիւն։
Չէ՛, չի՛ պակասելու մեզ թշուառութիւն։
Տեսայ ես մի օր—թիւը աղջկան
Զարդել էր, կախել արագ մեքենան,
Ասես՝ թէ կսկիծ, խուլ հառաչանքներ
Եւ արիւնալից սև տեսարաններ

Էին պահանջում մեռած ոգիներ։
Օ՛, երանի՛ թէ իմանաք դուք էլ,
Քանի՛ տառապանք, վշտեր անհամար
Տանում է մարդը սև հացի համար։
Խեղճ հաշմանդամը այժմ ի՞նչ անի.
Կարիքի հոգսը արդեօք կրտանի՞...
Հարուստը նրան հօ չի մօտ գալու,
Այս կրակ ցաւին լուծումն տալու։
Ու պիտի մուրայ... ուրիշ ելք չըկայ,
Խեղճ հաշմանդամը անտուն ու անտէր,
Եւ այս վիճակուեց այն որբ աղջկան,
Որը ուխտել էր ցմահ աշխատել։

Օ՛, անմեղ տեղից քանի՛ զուր տանջանք
Բերում ես դու մեզ, անողոք սև կեանք,
Չէ՛, էլ չենք տեսնիլ մխիթարութիւն,
Չէ՛, չի՛ պակասելու մեզ թշուառութիւն։
Տեսայ ես մի օր—թիւը աղջկան
Զարդել էր, կախել արագ մեքենան,
Ասես՝ թէ կսկիծ, խուլ հառաչանքներ
Եւ արիւնալից սև տեսարաններ
Էին պահանջում մեռած ոգիներ։

12. ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՏԱՆԻ

Հայրն իր ամբողջ հարստութիւնը բաժանեց երեք որդիների մէջ՝ իր մօտ պահելով միայն մի շատ թանկագին մատանի։

—Այս մատանին,—ասաց նա,—ես կըտամ ձեզանից նրան, ով մեծ բարիք կըգործէ։ Գնացէք օտար երկրներ և ուզիղ մի տարի յետոյ վերադարձէք տուն. և այն ժամանակ կըպատմէք ինձ, թէ ով՝ ինչ է արել։

Անցաւ մի տարի։ Որդիքը վերադարձան և պատմեցին հօրը. ինչ որ անցել էր իրանց գլխովը։

—Մի հարուստ մարդ,—ասաց մեծ որդին,—առանց ստացականի յանձնեց ինձ մի պարկ ոսկի և բացի երկուսից՝ ուրիշ ոչ ոքի յայտնի չէր այդ. շուտով այդ հարուստը մեռաւ։ Ես այդ փողը վերադարձրի նրա այրիին։

—Դու ազնիւ ես գտնուել որդեակ,—ասաց հայրը։

—Մի օր ես անցնում էի Ջրաղացի մօտով,—խօսեց միջնակ որդին,—տեսնեմ՝ մի երեխայ ընկաւ ջուրը և քիչ էր մնում, որ խեղդուէր։ Ես լնկայ ջուրը և ազատեցի նրան։

—Դու զաւա՜կս, մեծահոգութիւն ես արել, քո կեանքը՝ ուրիշին ազատելու համար վտանգի ենթարկելով։

—Անտառի միջով անցնելիս,—պատմեց կրտսեր որդին,—տեսայ որ երկու աւազակ կողոպտում են մի մարդու. այդ մարդը իմ ոխերիմ թշնամին էր, բայց ես վազեցի նրան օգնութեան և մենք երկուսով փախցրինք այն անպիտաններին։

—Ո՜հ, թանկագին զաւա՜կս, ե՛կ՝ համբուրեմ ճակատդ,—բացագանչեց հայրը.—տա՛, վեր ա՛ռ մատանին, սա քոնն է։ Թշնամիներին ծառայելը ամենամեծ բարիքն է։ Վատութեան դէմ բարիք գործելով մարդս Աստծուն է նմանում։

13. ԽՈՐԹ ԵՂԲԱՅՐՍ

I

Փոքր էի, հազիւ տասներեք տարեկան, բայց լաւ յիշում եմ, որ այն երեկոյ հայրս զայրացած տուն վերադարձաւ այդուց։ Փոքրիկ հորթին պարանից քարշ տալով եաւից և կանաչ, թարմ, խոտի մի կոյտ թեւի տակ՝ նա բակը մտաւ խոր-

հրդեւոր լռութեամբ։ Ես նկատեցի, որ նրա մորթէ փափախը կախուած էր ծոծրակի վրայ՝ բայց թողնելով խիստ կնճռոտ ճակատը. շալէ չուխայի և արխալուղի թեերը սովորականից աւելի վեր էին քաշուած, ասել էր՝ թէ նա այդուամ խոտ հնձելուց յետոյ՝ մոռացել էր ցած բերել. և որ ամենից աւելի գըլխաւորն էր ու նշանակալիցը, կեռ ծայրով իր ձեռնափայտը հորթի պարանի հետ միատեղ՝ շատ սպառնական ձեւով էր պահել աջ ձեռքում։

Հայրս խոտը ցած դրեց, մօտեցաւ սրահի թմբին ու նստեց, փայտն ու գլխարկը դնելով կողքին։ Մայրս կովկիթն էր լանում, սպասելով կովերին, կթելու համար։ Ես աչք չէի հեռացնում հօրից։ Նա անհանգիստ էր և մի քանի անգամ ճակատը շփեց ու դարձաւ մեծ քրոջս.

—Ա՛ղջի, Թորոսը այս առաւօտ կովերը ո՞ր կողմով դաշտ տարաւ. այդու կողմո՞վ, թէ՞ նախրի ճանփով։

—Չըգիտեմ, հայրիկ, առաւօտը երբ քաղհանի էինք գնում, նա մեզանից առաջ քշեց, գիւղից դուրս եկաւ, նրան չըհասանք։

—Այդու կողմից, իհարկէ. նա միշտ այն կողմից է տանում,—բայց կանչեցի ես, հէնց այնպէս, առանց մտածելու, թէ իմ ասածը որևէ բանի կարող է ծառայել։

—Նա՛ է, ուրիշ ո՞վ կարող է լինել, նզովեց արմատ, միշտ նա,—մռմռաց հայրս ու լռեց։

Թորոսը իմ խորթ եղբայրն էր, հօրս առաջին ամուսնութիւնից մնացած միակ տղան։ Ես և քոյրերս մեր ամենափոքր հասակից տեսել էինք նրան միշտ լռակեաց, մռայլ, մտածկոտ ու յամառ։ Նա չէր սիրել մեզ և մենք չէինք սիրել նրան։ Նա արդէն տասներեօթ-տասներուք տարեկան էր այժմ, բայց դարձեալ թախծոտ ու լռակեաց, դարձեալ անմատն ընտանեկան կեանքին, դարձեալ առանց սիրոյ ու մենաւոր։ Ինչու չէինք սիրում նրան, ես չըգիտեմ. նա մեզ երբէք վատ բան չէր արել. գուցէ հէնց այն պատճառով, որ նա միշտ լուռ էր և նրա այդ լռութեան տակ կարծես խորին արհամարհանք կար դէպի մեզ։

Հայրս չէր սիրում նրան, որովհետև նա յամառ էր ու միշտ մռայլ և երբէք մարդու երեսին ուղիղ չէր նայի։ «Կախ-գլուխ տղայ է, մանկութիւնից այդպէս էր», ասում էր նա առանձին ցաւով, աւելացնելով, որ «կախ-գլուխ» մարդիկ միշտ կասկածելի են։

Եւ մենք բոլորս առանց այդ նկատելու կամաց-կամաց նրա դահիճներն էինք դարձել։ Բոլոր մեր ծածուկ յանցանքների ու սխալների համար պատասխանատուն ու մեղաւորը միշտ նա էր։ Եթէ աման էր կոտրուած, անպատճառ Թորոսն էր կոտրել. մածունի կամ կաթի սերը, թարմ կարագը՝ անպատճառ նա էր գողացել, ինչպէս և այգում կամ բոստանում հասած առաջին պտուղը։ Մենք արդէն վաղուց դադրել էինք նկատելուց, թէ որքան անարդար, որքան անողորմ ենք, և մեզ բոլորովին բնական էր թւում վերջ ի վերջոյ, որ Թորոսը մեր մեղքերը քաւի։ Չի բողոքում, միշտ լուռ է, թող կրի ուրեմն։

II

Բարեբախտաբար մեզ բոլորիս և Թորոսի համար, հայրս թէև խիստ, բայց վերին աստիճանի դթոտ էր. նրա բոլոր դըժգոհութիւնն ու զայրոյթը վերջանում էր սովորական անէծքով կամ մօրս առաջ անվերջ գանգատներով։

Թորոսն ամբողջ օրը դաշտումն էր լինում, մեր տաւարի ետևից։ Երբ երեկոյեան տուն էր գալիս և հայրս սկսում էր նրան յանդիմանել որևէ յանցանքի համար, նա առանց նայելու մօտենում էր հացի տաշտին, մի հաց վերցնում փաթաթում, գնում թևի տակ և լռութեամբ դուրս գալիս, թողնելով, որ հայրս շարունակի իր անէծքը, գանգատն ու տրտունջները։

Կովերը դաշտից վերադարձան։ Թորոսն էլ նրանց յետևից ներս մտաւ դռնից, ինչպէս միշտ, գլուխը քաշ, դէմքն արևառ, յոգնած ու մռայլ։ Կովերը ներս քշեց գոմը, թողնելով բակում նրանց, որոնք պիտի կթուէին։ Ապա ձեռնափայտը դրաւ մի անկիւն, նստեց իր սովորական տեղը, սրահի մի հատիկ աստիճանի վրայ և սկսեց տրեխների միջից թափ տալ աւազի հատիկները և գուլպաների վրայից հանել մանր ու մեծ փշերը։

Մայրս կովերն էր կթում, քոյրերս օգնում էին նրան։

—Թորոս,—յանկարծ լսեց հօրս ձայնը.

—Հը, եղաւ պատասխանը։

—Զոռ ու ցաւ, հրամմէ էլ չի կարողանում ասել։ Այս առաւօտ տաւարը որ կողմով տարար դաշտ։

Հօրս ձայնը դողդողում էր, նա վրդովմունքից ասես խեղդւում էր. ես նրան երբէք այդ աստիճան բարկացած չէի տեսել. վախեցայ ու կծկւեցի։

Թորոսի փոյթը չէր. նա լուռ էր։

—Լեզուդ պապանձի, խօսի էէ, այդին մտել ես։

Թորոսը շարունակում էր լռութեամբ թափ տալ տրեխները։

—Սարգիս,—դարձաւ ինձ հայրս,—գնա այն իմ բերած խոտը քանդի, մէջը բան կայ, բեր այստեղ։

Ես մօտեցայ, խոտը բաց արի և միջից դուրս հանեցի խաղողի որթի մի մեծ ճիւղ, վրան մի քանի կիսահաս ողկոյզներ։ Զեռքս առայ և քարացայ տեղումս... ես էի կոտրել. կոտրել էի ու լռել. ողկոյզը քաշքշել էի, ճիւղը կոտրուել էր և ես թողել փախել էի։

—Սա,—շարունակեց հայրս աւելի և աւելի տաքացած,—Աստուած նզովի քեզ, ով է տեսել, որ հայ քրիստոնեան Աստուածածնից իրկու շաբաթ առաջ խաղող ուտի. հարամ չէ՞. նայի, ինչ ես արել. թող ձեռքդ կոտրուէր դրա փոխարէն։

Մայրս մէջ մտաւ.

—Ի՞նչ ես այդքան տաքացել, տնաշէնի մարդ, դէ բան է, պատահել է, գուցէ Թորոսը չի, գող է մտել. խօ գիտես, քաղցած գէլերի պէս չոլերն ընկած աւերմունք են անում։

—Խելքիդ ի՞նչ ասեմ, ախր կնիկ ես էէ՞. գողը մի ճութ խաղողի համար այդի չի մանի, բոլոր թմբերը պէտք է ոտի տակ տար, մէկիկ-մէկիկ փնտռէր, գտնելու համար. տանու գող է, քեզ ասում եմ. այ, այս նզովածն է, որ լկւել է։ Չէ՞, թող ասի որ ինքը չի. տեսնում ես, կարկամել է, Աստուած վերցնի սրան։

—Ա՜յ որդի,—Թորոսին դարձաւ մայրս կամացուկ,—ինչի՞ ես կողքդ դէմ տուել, տեսնում ես, հէրդ թնդուել է, դէ մի ձայն տուր, ասա որ դու չես, ասա՝ գողերն են արել, խօմ բերանդ չի ցաւի, մի խօսք ասա էլի։

II.

Ես ախորժեամբ նայում էի Թորոսին։ Շրթունքներս դողդողացին, ուզում էի ճչալ, լալ, գլխիս խփել... բայց էլի շրթունքներս կծեցի, երբ տեսայ, որ Թորոսը պատրաստւում է դուրս գնալու։ Փոթորիկը դրանով կըվերջանար, միշտ այդպէս էր լինում։

Ահա նա վեր կացաւ և առաջեց նոյն իսկ իր սովորական հացը վերցնելու տաշտից, շարժւեց դէպի դուռը. նա պիտի անցնէր հօրս առաջից, որ լուռ հետևում էր նրա շարժումներին։ Հայրս գունատ էր, շունչը քթածակերից դուրս էր գալիս փընչացնելով, իսկ ձեռնափայտը դողում էր ձեռքի մէջ։ Նա երբէք այդպէս սարսափելի, այդպէս անողորմ տեսք չէր ունեցել։

«Մի՞թէ խփելու է Թորոսին», մտածում էի ես. «այդ անկարելի էր, նա այնպէս բարի՞ է». և ինձ թւում էր, եթէ նրան խփի՝ ես կըմեռնեմ, չըգիտեմ ինչից, բայց անպատճառ կըճչամ ու կըմեռնեմ, երևի կըխեղդւեմ։

Էլ ոչինչ չէի տեսնում, ոչինչ չըկար դլխումս, բացի այն փայտից, այն դեղնաւուն հոնի փայտից... Եւ ես տեսայ... որ նա բարձրացաւ, այն զարհուրելի փայտը, բարձրացաւ հօրս գըլխից վեր, ճօճւեց օդի մէջ...

—Հայրիկ, հայրիկ... մի՛ մի՛... Բառերը խեղդւեցին իմ կոկորդում. նեռւեցի հօրս ու Թորոսի մէջ, բայց անօգուտ, ես շատ էի փոքր և անզօր. ձեռնափայտն ահագին թափով իջաւ եղբօրս թիկունքին, բարձրացաւ, մէկ էլ իջաւ նոյնպէս թափով, նոյնպէս անողորմ։

Թորոսը չըշարժւեց, կանգնած մնաց իր տեղում, դարձեալ լուռ, առանց բողոքի. նայեց հօրս, ապա աջ ձեռքով շօշափեց

թիկունքի ցաւած տեղը ու երկու կաթիլ արցունք կախւեցին նրա մռայլ, մթագնած աչքերից, իջան, իջան և այտերի վրայ քարացան մնացին։

Օ՜, այդ երկու կաթիլ արցունքը. նրանք իջան իմ սրտի վրայ, քանդեցին, աւերեցին կուրծքս և խորտակեցին ինձ։ Հայրը կանգնած էր դողդղալով, նայում էր ոտների առաջ, կարծես չըգիտէր, թէ ինչ պատահեց։

Ե՞ս եմ, հայրիկ, ես եմ կոտրել, ես եմ գողացել, Թորոսը մեղք չունի, միշտ ես եմ։ Ների՛ր. ների՛ր, Թորոս ախպէր, իմ խեղճ ախպէր, ասացի ես։

Բոլորը քարացան. կարծես երկինքը յանկարծ փուլ եկաւ. մայրս շւարած՝ կովկիթը ձեռքից բաց թողեց, որ ընկաւ կոտրւեց և կաթը հոսեց բակում. քոյրս հորթը թողեց, որ կրկին վազեց դէպի մայրը. հայրս գլուխը բարձրացրեց, ինձ նայեց չռած ու ապշած աչքերով ու ետ-ետ գնաց, կարծես ես թունաւոր օձ լինէի. ապա ճակատը բռնեց, մնաց կանգնած։ Քիչ յետոյ լուռ մօտեցաւ Թորոսին ու ձեռքը դրաւ նրա թիկունքին.

—Ձեռքս կոտրւէր, որդի,—ասաւ հեկեկալով։—Սարգի՛ս, Սարգի՛ս... Թող Աստուած քեզ... դու իմ հոգին կորցրիր... Թող Աստուած քեզ...ի՞նչ ասեմ. . Ու շարունակել չըկարողացաւ, չուզեց անիծել, արցունքը թափւեց աչքերից հեղեղի պէս։

—Էլ չեմ անի, հայրիկ... էլ չեմ անի, երբէք...

Թորոսը թևով սրբեց աչքերը, նստեց թմբի վրայ, գլուխը ձեռների մէջ առաւ և մնաց լուռ։

Այն գիշեր հայրս երկար ժամանակ չէր քնում. անքուն էի և ես. այրւում էի և էլի երկար-երկար լաց եղայ։

14. ՄԱՅՐԻԿՍ

Հայրենիքէս հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ.
Ազիզ մօրէս բաժանւել եմ,
Տխուր, տրտում, քուն չունիմ։

Սարէն կուգաք նախշուն հաւքեր,
Ա՜խ, իմ մօրը տեսա՞լ էք.
Ծովէն կուգաք մարմանդ հովեր,
Արդեօք բարև բերա՞լ էք։

Հաւք ու հովեր եկան կշտիս,
Անձէն դիպան ու անցան.
Պապակ սրտիս,—փափաք սրտիս՝
Անխօս դիպան ու անցան։

Ա՜խ, քու տեսքին, անուշ լեզուին,
Կարօտցել եմ մայրիկ ջան,
Երնէկ, երնէկ, երազ լինիմ,
Թրուչիմ մօտդ, մայրիկ ջան։

Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,
Սրտիդ կպնեմ վառ կարօտով,
Լամ ու խնդամ, մայրիկ ջան։

15. ՀՕՐ ՀԻԻԱՆԴԱՊԱՀԸ

I

Մի անձրևային առաւօտ Նէապոլի գլխաւոր հիւանդանոցի դռնապանին մօտեցաւ գիւղացու պէս հագնուած մի կեղտոտ ու թրջուած տղայ։ Տղան ձեռքին ունէր մի կապոց։ Նա ցոյց տուեց մի տոմսակ և հարցրեց հօր մասին։

Գեղեցիկ էր այդ տղան. երեսը կլոր ու թուխ, աչքերը խելօք, շրթունքները լիքը, ատամները ձիւնափայլ։

Նա գալիս էր Նէապոլի մօտակայ մի գիւղից։ Անցեալ տարի նրա հայրը գնացել էր Ֆրանսիա մշակութիւն անելու. վերադարձին իջել էր Նէապոլ և յանկարծ հիւանդանալով՝ նամակ էր գրել ընտանիքին, թէ պառկած է հիւանդանոցում։ Կինը

սաստիկ վշտանում է, բայց չի կարողանում տանից դուրս գալ. երեխաներից մէկը հիւանդ էր, միւսը դեռ ծծկեր։ Նա մի քիչ փող տալով իր աւագ որդուն, նրան ուղարկեց Նէապոլ, որպէսզի հօրը խնամէ։

Դռնապանը տոմսակը կարդաց, կանչեց հիւանդանոցի սպասաւորին և առաջարկեց հօր մօտ տանել տղային։

—Գնանք, ասաց սպասաւորը։

Տղան գնաց նրա յետևից. նա վախենալով աջ ու ձախ էր նայում։ Իր չորս կողմը նեղած ու մաշուած դէմքեր էին։ Ոմանք պառկած էին մեռելի նման աչքերը գոց. ոմանք անքթիթ ու պշնած յառաջ էին նայում. ոմանք էլ երեխաների պէս հեծեծում էին։ Սրահը մութն էր, օդը լցուած դեղերի հոտով։ Ողորմութեան երկու քոյրեր ձեռքերին սրուակներ բռնած՝ կարգով անցնում էին մէկ մահճից դէպի միւսը...

—Ահա հայրդ,—ասաց վերջապէս սպասաւորը, յետ քաշելով անկողիններից մէկի վարագոյրը։

Հիւանդի ձեռքն անշարժ ընկած էր վերմակի վրայ։ Տղան բռնեց այդ ձեռքը և հեկեկալով գլուխը խոնարհեց հօր ուսի վրայ։ Հիւանդը շարժուեց։ Տղան գլուխը բարձրացրեց և լռիկ լաց էր լինում։ Հայրը շուռ եկաւ, երկար նայեց նրան, կարծես թէ ճանաչեց, բայց և ոչ մի բառ չարտասանեց... Խեղճը սաստիկ փոխուել էր, որդին հազիւ էր ճանաչում նրան, նա սպիտակել էր, մօրուքը երկարացել, երեսը ուռել, թխացել էր, աչքերը սեղմուել էին, շրթունքը կախուել... բոլորովին անծանօթ դէմք։ Անփոփոխ էին մնացել միայն ճակատն ու յօնքերը։

—Հայրիկ, իմ հայրիկ,—կանչում էր տղան։ Այս ես եմ, չե՞ս ճանաչում. Զիչիլիօնն եմ, քո Զիչիլիօնը։ Եկել եմ գիւղից, մայրիկս է ուղարկել։ Մի լաւ նայիր վրաս։ Չե՞ս ճանաչում։ Գոնէ մի խօսք ասա։

Հիւանդը նայեց ու աչքերը խփեց։

Տղան վշտագին մտածմունքի մէջ ընկաւ։ Յիշում էր հօր ճանապարհ ընկնելը, նրա հրաժեշտը, նրա ուղևորութիւնից ակնկալուած մեծ յոյսերը, նրա նամակը և մօր թախիծը...

II.

Տղան դարձաւ հիւանդապահ։ Նա ձեռքից եկածի չափ խնամում էր հօրը. վերմակն էր շտկում, ձեռքերից բռնում, ճանճերին քշում... Կոյսը դեղ էր բերում. տղան վերցնում էր շիշը և դեղը գտալի մէջ ածելով, տալիս էր հօրը խմելու։ Հիւանդը նայում էր, բայց կարծես դարձեալ չէր ճանաչում որդուն։ Մխիթարականն այն էր, որ հօր աչքերն օր ըստ օրէ աւելի երկար էին կանգ առնում որդու վրայ, մանաւանդ երբ նա սրբում էր իր արտասուքը։

Օրերն անցնում էին։ Տղան գիշերները քնում էր երկու աթոռի վրայ և լուսանալուն պէս շարունակում էր իր առօրեայ հոգատարութիւնը։

Մի անգամ նրան այնպէս թւաց, թէ հօր աչքերում մի բան ցոլաց, մի գաղափար, յեռոյ գգւանք, իբրև պատասխան որդու գորովալից խօսքերին...

Անցնում էին ժամեր, օրեր, և Զիչիլիօն շարունակում էր իր խնամատարութիւնը, ցնցւում էր հօր հառաչանքից ու նայւածքից, մերթ յուսալով, մերթ վհատելով։ Հինգերորդ օրը հայրը յանկարծ շատ թուլացաւ։ Բժիշկը թափ տւեց գլուխը և կարծես ասաց «պրծաւ»։ Զիչիլիօն աղիողորմ ճիչ հանեց։ Հօր դրութիւնը վատացել էր, բայց որդուն այնպէս էր թւում, թէ ուշքի է եկել։ Հիւանդը նայում էր աւելի հաստատ, աւելի ազդու, աւելի քնքուշ. միայն տղայի ձեռքիցն էր խմում և շարունակ փորձեր անում մի բան ասելու։ Այս ճիգերն այնպէս յաճախ էին կրկնւում, որ Զիչիլիօն հիւանդի ձեռքը բռնում էր, անմիտ յոյսեր տածելով, թէ բժիշկը սխալւած է, հայրը կառողջանայ, և միշտ կրկնում էր.—հանգիստ եղիր, հայրիկ ջան, դու կառողջանաս, կ'երթանք, մայրիկի մօտ կ'երթանք... Մի քիչ էլ համբերիր...

Չորրորդ ժամն էր։ Տղան երկիւղով, յուսով նստած էր։ Մօտիկ սենեակից քայլեր լսեցան և մէկն ասաց.

—Ցտեսութիւն, քոյր իմ։

Զիչիլիօն յետ նայեց։ Ներս մտաւ մի տղամարդ, իսկ նրա յետևից ողորմած քոյրը։

—Զիչիլիօ,—աղաղակեց ներս մտնողը, նայելով մանկանը, և վազեց դէպի նա։

Հայրիկ...

Մանուկն ուրախութիւնից խեղդւելով, հօր գիրկն ընկաւ։

Վրայ հասան կոյսերը, սպասաւորուհիները, բժշկի օգնականը և շտապած կանգ առան։ Մանուկը չէր կարողանում խօսք ասել։

—Իմ Զիչիլիօս,—գոչեց հայրը, համբուրելով նրան։ Զիչիլիօ, որդեակ իմ. ինչպէս պատահեցաւ այս բանը։ Քեզ բերել են մի օտարի մօտ։ Իսկ ես մաշւում էի, որ չես գալիս։ Մայրիկը գրել էր, որ քեզ ուղարկել է ինձ մօտ։ Ինչո՞ Զիչիլիօ։ Բայց ինչպէս է պատահել այս շփոթմունքը, ես գլուխս կորցրել էի, մտածում էի, քեզ էի սպասում... Ի՞նչ է անում մայրիկը, ի՞նչ է անում Կոնչէտէլլան, ինչպէս է մեր փոքրիկը...

Դէ գնանք, ասաց հայրը, երեկոյեան տանը կըլինենք։ Գնանք։ Տղան շուռ եկաւ ու նայեց հիւանդին, որը նոյնպէս այդ բոպէին նրան էր նայում։

—Ոչ, հայրիկ, չեմ կարող, շտապով ասաց Զիչիլիօն։ Տես, ահա այդ ծերունին... ես դրան հինգ օր խնամել եմ։ Այժմ ինձ է նայում։ Նա գրեթէ հոգեվարքի մէջ է։ Խղճում եմ դրան, չեմ կարող մենակ թողնել։ Ես վաղը կըվերադառնամ տուն։ Հայրը համբուրեց որդուն և գնաց։

III.

Անցաւ էլի երկու օր։ Տղան կրկնապատկեց խնամքը և միշտ հիւանդին էր նայում։ Հիւանդն էլ աչքը չէր հեռացնում տղայից և շրթունքը դժւարութեամբ շարժելով, ցոյց էր տալիս, թէ մի բան ունի ասելու։ Նրա աչքերը սեղմւում ու մթանում էին. սակայն նրանց մէջ մի անօրինակ գորովանք էր ցոլանում։ Այդ գիշեր տղան մի վայրկեան անգամ քուն չեղաւ։ Լուսադէմին ողորմած քոյրն եկաւ, նայեց, շտապով գնաց և իսկոյն յետ եկաւ։ Նրա հետ եկան բժիշկը, օգնականը և սպասաւոր կինը։

—Հոգին տալիս է,—ասաց բժիշկը։

Զիչիլիօն բռնեց հիւանդի ձեռքը. հիւանդը մի վայրկեան աչքերը բաց արաւ. տղան կարծեց թէ...

—Ձեռս սեղմեց, գոչեց նա։

Հիւանդը ձգուեցաւ։ Կոյսը հանեց պատի վրայից խաչելութիւնը։

—Մեռաւ, - աղաղակեց Զիչիլիօն։

- Գնա, որդեակ իմ, —ասաց բժիշկը։ Քո սուրբ գործը վերջացաւ։

Գնա, բաղդաւոր եղիր, դու արժանի ես այդպէս լինելու։ Աստուած քեզ օգնական։

Պատմեցէք եւ ապա գրեցէք, թէ ի՞նչպէս է մայրը խնամում իր հիւանդ զաւակին։

Մանուկ

Դու մանուկ էիր, երբ ծաղկպէս,
Որքան քնքուշ էս, որքան սիրասուն,
Նայում էր վերադ—և տոգրս նորից
Զգում է նոր կեանք, նոր երջանկութիւն։
Ահա, ինչպէս սիրով այդ փոքրիկ գլխիդ
Մի-քիրս դրուած էս քիրս, սրտիս անդ
Հոգոյ կանէր, որ ամէնը միշտ միշտ
Ամենպանէր այդպէս մաքուր, անարատ։

17. ԱՂԲԻՒՐ

I.

Գաղթականների խումբը թշնամուց փախչելով մէկ ամայի տեղ հաստատեց իր բնակութիւնը։ Ժամանակը գարնանային էր. շուտ-շուտ տեղացող անձրևների պատճառով գաղթականները ուշադրութիւն չդարձրին այն հանգամանքի վրայ, որ նրանց բնակութեան մօտերքը ոչ գետ կար, ոչ աղբիւր։ Գաղթականներից մէկը, որ աւելի հեռատես էր, առաջինը ուշ դարձրեց այդ ճախողակ բանին և իր բռնած տեղի վրայ սկսեց

ջրհոր փորել. նրա միամիտ ընկերները, որովհետև ազատ ժամանակ ունէին, սրտանց օգնում էին նրան։ Հազիւ թէ բահը մի քանի անգամ գետնին զարկեցին, ով հրաշք, խրցուած աղբիւրի ակը բացւեց և միջից սկսեց ջուրը առատօրէն բղխել։ Տէրը—նրա անունը Հագա էր—շատ ուրախացաւ. նրա հետ միասին ուրախ էին նրա միամիտ ընկերները՝ Աստուծոյ այս անակնկալ ողորմութեանը, որ շնորհել էր նա իրանց դրացուն. նրանք վստահ էին, որ երկնքի անձրևը տարին տասներկու ամիս նրանցից անպակաս պիտի լինի, բայց եթէ երբեմն ջրի պակասութիւն էլ լինէր, նրանք երկիւղ ունենալու չէին, որովհետև նրանց դրացին ունէր առատ աղբիւր, որի ջրից անշուշտ նա մասն պիտի հանէր կարօտեալներին, մանաւանդ որ նրանք այդպէս էին կարծում.—այդքան ջուր նա երբէք չի կարողանալու ապառեցնել և նրա պէտքից միշտ պիտի աւելանար, թէև նրանց առողջ դատողութիւնը, այդպէս էր կարծել տալիս նրանց, բայց Հագայի կարծիքը բոլորովին ուրիշ տեսակ էր։ Իսկ աղբիւրի ջուրը շարունակ վազում, գնում էր։

Դաշտերը վարեցին և ցանեցին. անձրևները շարունակ գալով և արեգակն էլ իր ջերմութիւնը տարածելով դաշտերի երեսին՝ սերմերը ծլեցին և բոյսերը կանաչեցին ու մի քանի ժամանակից ցորենի ցօղունները մէկ թիզ բարձրացան գետնից։ Եղանակը փոխւեց, առաւօտից մինչև երեկոյ անընդհատ պարզ էր երկինքը։ Արևը աւելի էր սաստկացնում իր ջերմութիւնը. արևելքից չոր քամիները փչելով՝ սկսան դեղնացնել ցորենի բոյսը։ Աղբիւրի տէրը անհոգ էր. նա ջուրը տարաւ, ջրեց իր արտը և նրա ցորենը ապահով մնաց երաշտից։ Միւս գաղթականները՝ տեսնելով ջրի այդպիսի բարերար զօրութիւնը, նոյնպէս ուզում էին ջրել իրանց արտերը, բայց Հագան նրանց առջև պայման դրաւ, ասելով. «Եթէ ինձ օգնէք ջրաղաց շինելու, այն ժամանակ ոչ միայն կրտամ ձեզ ջուր, այլև շինելիք ջրաղացս ամառուայ մէջ ձեր ցորենը կաղայ և ալիւր կանի»։

Գաղթականները տեսան, որ իրաւ է նրա ասածը, որ ջրաղաց պէտք է. ուստի ուրախ ուրախ սկսան ջրաղաց շինել, և

նրանց աշխատանքի փոխարէն Հագան թոյլ տւեց նրանց արտերը ջրելու։ Ամառուայ մէջն էր. հասան ցորենները։ Երբ գաղթականները արտերը հնձեցին, կալ տարան, կալսեցին ու ցորեն ստացան, եկան Հագային ասացին. «Ծուր ջրաղացդ ցորենները աղանք»։ Հագան ասաց. «Իմ բնակարանիս շուրջը շինեցէք քարէ ամուր պատ, այն ժամանակ ես կրթողնեմ ջրաղացիս մէջ ձեր ցորենը աղաք»։ Նրա տան չորս կողմը հատ ու բարձր քարէ պատեր ու ամուր դռներ շինեցին, և գաղթականները աղացին իրանց առաջին հունձի ցորենը։ Ամեռը անցաւ, գարունը եկաւ, գաղթականները նորից վարուցանք արին։ Հագան նրանց ասաց. «Վարեցէք, ցանեցէք, հնձեցէք իմ արտերը, ապա թէ ոչ՝ չեմ տալ ձեզ ոչ արտերդ ջրելու ջուր և ոչ ցորենները աղալու ջրաղաց»։ Գաղթականները միտք արին, և յօժարեցան նրա պահանջը կատարել. վարեցին, ցանեցին և հնձեցին նրա արտերը, իսկ ինքը Հագան ոչ միայն չէր աշխատում, այլև գլխները վրայ պառոյտ գալով՝ սաստիկ հրամաններ էր տալիս նրանց, առանց թագի թագաւոր էր նրանց վրայ։ Փոքր ինչ ժամանակ անցնելուց յետոյ ասաց Հագան. «Արտերիս վրայ աշխատելու համար ամառները աղբիւրիցս ջուր էք առնում, բայց ինչ վարձատրութիւն պիտի տաք ինձ տարւայ ուրիշ եղանակներին ջուրս վերցնելու համար։ Ահա ձեզ վրայ հարկ եմ դնում. ամեն մէկ կուժ ջրին այսքան բուռ (ափ) ցորեն պիտի վճարէք ինձ. ապա թէ ոչ՝ ջուր չրկայ ձեզ»։ Եւ փորեց իր բակի մէջ մի ահագին ջրամբար և աղբիւրի ջուրն այնտեղ վազեցրեց։

Ա.

Գաղթականները անջուր մնացին։ Ջուրը մարդուս ամեն օր պէտք է խմելու, լւացւելու, կերակուր եփելու, ձի ու տաւար ջրելու. գիւղացիները ամեն օր իրանց պէտք ջրի համար տանում էին իրանց ցորենը և տալիս Հագային, լցնում էին նրա ամբարները և բերաններից հացը կտրում էին։ Քանի որ Հագայի տունը լիանում էր, նրա դրացիները աղքատանում

էին, և որքան դրացիների վիճակը դառնանում էր, այնքան Հագան իրան երջանիկ էր համարում, որովհետև նա այն անգութ մարդկանցից էր, որոնց սրտի ուրախութիւնը բազմանում է ընկերների տխրութիւնից և թշուառութիւնից։

«Ո՜վ մարդ, ասում էին նրան դրացիները, Աստուած իր առատ աշխատանքը օրհնել է։ ոչ հացդ է պակաս, ոչ ջուրդ և ոչ մեր պատիւն ու ծառայութիւնը քեզանից։ Այդ անսպառ ջուրը, որ ժողովում ես անյատակ ջրամբարիդ մէջ, դու երբէք չես կարողանալու սպառեցնել. ոչ քո և ոչ զաւակներիդ պէտքերի համար. ժամանակ-ժամանակ մեզ էլ տուր նրանից. մեր բերանները պապակեցին, մեր անասունները տանջւում են, մեր մարմինը կեղտի մէջ փտեց, մեր արտերը չորանում են, խնայիր մեզ, մեր կուշտ լինելով դու երբէք չես քաղցած մնայ, ինչու անգութ սրտով նայում ես մեր տանջանքներին։ Աղքատութիւնը մաշում է մեր կեանքը. խղճա մեզ»։

Հագան առանց շահի և տոկոսի ոչ մի կաթիլ ջուր չէր տալիս իր ջրամբարից և ոչ մի բուռ ցորեն իր շտեմարանից. իր շուրջը կեցած մարդկանց լացը, արտասուքը և լալագին աղաչանքը ուրախացնում էին նրան։, բայց նրա սրտի գութը չէին շարժում։ Նա այն ժամանակ միայն ուրախ էր և ցնծում, երբ իրան շրջապատողները լացի ու սգի մէջ էին։

Մի գարնանային գիշեր, երբ Հագայի ջրամբարն արդէն բերնէ-բերան լիքն էր և նրա բակի երկաթապատի դռները ամուր փակուած ու նիգերը վրաները դրուած էին,—յանկարծ գոռացին ամպերը, փայլատակեց երկինքը և սկսեց յորդ անձրև թափել, կարծես թէ կաթիլների տեղ երկնքից կուժերով ջուր էին թափում։ Ջուրն սկսեց ջրամբարից վայր թափել, և որովհետև քարէ ամուր պատերը և փակած դռները ջրի ճամփան փակել էին, ջուրն սկսեց բակի մէջ բարձրանալ։ Անձրևը քանի գնում էր՝ սաստկանում էր և բակի ջուրը աւելի ու աւելի էր բարձրանում։ Տան դռները չդիմացան ջրի ուժին, մեխերը թռան տախտակներից, դռները բացուեցին և ջուրը այնտեղ էլ հասաւ նրանց։ Բայց անձրևը չէր դադարել, աղբիւրը առատ-առատ բղխում էր դեռնից, ջուրը մտաւ ամբարները, թրջեց ցորենը, ապականեց ամեն կերակուրների պաշարը և խեղդեց տարաւ Հագայի անասունները։ Անձրևը անընդհատ գալիս էր, ամպերը կատաղի գոռում էին. ջուրը հասաւ Հագայի կրունկին, ծնկին, ապա և վզին.., «Ա՜խ, միաք արաւ Հագան, ինչու մէկ հրաշքով չի բացւում բակիս դուռը, որ ջուրը ազատ ելք գտնէր և ինձ խեղդելուց ազատէր...» Բայց բակի դուռը ինքը իր ձեռքով ամուր փակել էր և կողպել, որ դրացիները գաղտուկ ներս չըմտնէին և պապակած բերանները թաց չանէին։ Ջուրը ճամփայ չըգտաւ, աւելի բարձրացաւ և խեղդեց նրան, որ խեղճերից մէկ կաթիլ էր խնայում։ Այսպէս պատժուեց ագահ Հագան։

18. ԲՈՅՆ ՔԱՆԴՈՂԻ ՏՈՒՆԸ ԱՍՏԻՍԾ Է ՔԱՆԴՈՒՄ

Մեծատան շքեղ տանիքի տակին
Ծիծեռնակն իրան մի բոյն էր հիւսել,
Շատ ու շատ տարի այդ բընի միջին
Ձագեր էր հանել, պահել, թռցրել։

Ծիծառն երջանիկ իր ձագերի հետ,
Մեծատան համար միշտ կեանք էր խնդրում.
Մեր մեծատունն էլ շատ երջանկաւէտ
Կեանք էր անցնում ու բարիք դիզում։

Զրգիտեմ ինչպէս, և ինչից դրդւած՝
Ծիծեռնակի բոյնն հարուստը քանդեց,
Նրա ձագերին բնից վայր առած՝
Ոտքի տակ առաւ ու սատկացրեց։

Բնաւեր ծիծառն երբ որ այս տեսաւ,
Դառն կսկիծով մեծատանն ասաւ.
«Ա՛յ դու անօրէն, քանդեցիր իմ բոյն,
Թող որ Աստուած էլ քանդի քո շէն տուն»։

Ասաւ ծիծառը, թռաւ դէպի ժամ,
Այնտեղից բերաւ մի ծեղ այս անգամ,
Զգեց հարուստի գոյքերի վրայ,
Այսպէս իր դատը Աստծուն յանձնեց նա։

Մեծատան արտերն ժանգահար եղան,
Անասունները ժանտախտից մեռան,
Յարդի ու խոտի գեզերի հետ էլ՝
Յորենն ու գարին կրակին զոհ դարձան։

Կրակը լափեց հարուստի տունը,
Խորտակեց նրա գոյութեան սիւնը...
Եկաւ նոր գարուն, ծիծառն էլ եկաւ,
Այլ տանիքի տակ նորից բոյն դրաւ։

Իսկ մեծատունը ձեռները ծոցին,
Իր տուն ու տեղի փլուածքի միջին՝
Թափառում էր միշտ, անդադար կրկնում.
«Բոյն քանդողի տունն Աստուած է քանդում...

Համեմատեցէք «Աղբիւր» յօդուածի բովանդակութեան հետ։

Փառաւորեցէք այս պատկերի բովանդակութիւնը եւ նայեցէք գրքի ապէրը։

19. ՀԱՒԱՏԱՐԻՄ ՇՈՒՆԸ

Մի վաճառական ձիով ճանապարհորդելու դուրս եկաւ. նրա յետևից վազում էր նրա հաւատարիմ շունը։ Վաճառականը գնում էր մի մեծ գումար ստանալու։ Փողերն ստացաւ, ոսկով լիք քսակը կապեց թամբի յետևը և ճանապարհ ընկաւ դէպի տուն։ Ճանապարհին քսակի կապը կտրուեց, դարկը վայր ընկաւ, իսկ վաճառականը այս բանը չընկատեց։ Սրատես շունը տեսաւ այդ և փորձեց վերցնել քսակը իր ատամներով, բայց զգաց, որ դա ուժից բարձր է։ Այն ժամանակ քսակը թողնելով, վազեց, հասաւ տիրոջը, առաջ անցաւ, սկսեց յարձակուել ձիու վրայ և կատաղութեամբ ու յամառութեամբ հաչելով, աշխատում էր նրան կանգնեցնել։ Պատճառը չիմանալով, վաճառականը բարկանում էր շան վրայ, հայհոյում նրան, խփում էր մտրակով,—բայց ոչ մի բան չէր օգնում։ Հաւատարիմ կենդանին շարունակում էր յարձակուել ձիու վրայ այնպիսի կատաղութեամբ, որ կարծես կամենում էր ցած քաշել տիրոջը։ Տեսնելով՝ որ ոչինչ չի օգնում և որ վաճառականը հետզհետէ հեռանում է, շունն սկսեց կծոտել ձիու ոտները, որ գոնէ դրանով հարկադրէ իր տիրոջը յետ դառնալ։ Վաճառականը վախեցաւ, նա մտածեց, թէ մի գուցէ շունը կատաղել է և գիտենալով, թէ որքան վտանգաւոր են կատաղած շները, նա վճռեց սպանել իր հաւատարիմ ծառային։

Այնուամենայնիւ դեռ երկար ժամանակ վաճառականն աշխատում էր ազատուել շնից մերթ փայփայանքներով, մերթ սպառնալիքներով, մերթ մտրակի հարուածներով, բայց տեսնելով՝ որ այդ չի օգնում, հանեց ատրճանակը և սրտամորմոք արձակեց հաւատարիմ շան վրայ։ Խեղճ կենդանին վայր ընկաւ, բայց մի րոպէից յետոյ վեր կացաւ և ցաւալի ճչիւնով ու արիւնաթաթախ աշխատում էր հետևել իր տիրոջը։ Վաճառականը շատ էր սիրում իր շանը. նրա համար ծանը էր տեսնել կենդանու տանջանքը, ուստի և խթեց ձիուն ու առաջ արշաւեց։ Մի քիչ հեռանալով, նա կամեցաւ տեսնել, թէ ինչ եղաւ խեղճ կենդանին, և այստեղ միայն՝ յետ նայելիս՝ նա նկատեց, որ փողի քսակը չկայ։ Նոր հասկացաւ վաճառականը, թէ ինչու էր այդպէս կատաղաբար հաչում և յարձակուում իր վրայ հաւատարիմ շունը, և նա աւելի ցաւեց շան, քան թէ փողերի վրայ։ Նա իսկոյն յետ դարձրեց ձիու գլուխը, բայց շանն այնտեղ չգտաւ, ուր թողել էր։ Արիւնի հետքը ցոյց էր տալիս, որ շունն յետ էր դարձել։ Ո՞րքան ցաւեց բարի վաճառականը, երբ արիւնի հետքը բռնած գնալով՝ նա գտաւ հաւատարիմ կենդանուն փողերի քսակի վրայ ընկած։ Գիտակցաբար նայում էր շունը իր տիրոջը և փաղաքշանքով լիզում նրա ձեռքերը։ Մի

քանի բոպէից յետոյ շունը սատակեց, իսկ վաճառականը տխուր-տրտում վերադարձաւ տուն։

Մի վաճառական ձիով ճանապարհորդելու դուրս եկաւ. նրա յետևից վազում էր նրա հաւատարիմ շունը։ Վաճառականը գնում էր մի մեծ գումար ստանալու։ Փողերն ստացաւ, ոսկով լիք քսակը կապեց թամբի յետևը և ճանապարհ ընկաւ դէպի տուն։ Ճանապարհին քսակի կապը կտրուեց, դարկը վայր ընկաւ, իսկ վաճառականը այս բանը չընկատեց։ Սրատես շունը տեսաւ այդ և փորձեց վերցնել քսակը իր ատամներով, բայց զգաց, որ դա ուժից բարձր է։ Այն ժամանակ քսակը թողնելով, վազեց, հասաւ տիրոջը, առաջ անցաւ, սկսեց յարձակուել ձիու վրայ և կատաղութեամբ ու յամառութեամբ հաչելով, աշխատում էր նրան կանգնեցնել։ Պատճառը չիմանալով, վաճառականը բարկանում էր շան վրայ, հայհոյում նրան, խփում էր մտրակով,—բայց ոչ մի բան չէր օգնում։ Հաւատարիմ կենդանին շարունակում էր յարձակուել ձիու վրայ այնպիսի կատաղութեամբ, որ կարծես կամենում էր ցած քաշել տիրոջը։ Տեսնելով՝ որ ոչինչ չի օգնում և որ վաճառականը հետզհետէ հեռանում է, շունն սկսեց կծոտել ձիու ոտները, որ գոնէ դրանով հարկադրէ իր տիրոջը յետ դառնալ։ Վաճառականը վախեցաւ, նա մտածեց, թէ մի գուցէ շունը կատաղել է և գիտենալով, թէ որքան վտանգաւոր են կատաղած շները, նա վճռեց սպանել իր հաւատարիմ ծառային։

Այնուամենայնիւ դեռ երկար ժամանակ վաճառականն աշխատում էր ազատուել շնից մերթ փայփայանքներով, մերթ սպառնալիքներով, մերթ մտրակի հարուածներով, բայց տեսնելով՝ որ այդ չի օգնում, հանեց ատրճանակը և սրտամորմոք արձակեց հաւատարիմ շան վրայ։ Խեղճ կենդանին վայր ընկաւ, բայց մի րոպէից յետոյ վեր կացաւ և ցաւալի ճչիւնով ու արիւնաթաթախ աշխատում էր հետևել իր տիրոջը։ Վաճառականը շատ էր սիրում իր շանը. նրա համար ծանը էր տեսնել կենդանու տանջանքը, ուստի և խթեց ձիուն ու առաջ արշաւեց։ Մի քիչ հեռանալով, նա կամեցաւ տեսնել, թէ ինչ եղաւ խեղճ կենդանին, և այստեղ միայն՝ յետ նայելիս՝ նա նկատեց, որ փողի քսակը չկայ։ Նոր հասկացաւ վաճառականը, թէ ինչու էր այդպէս կատաղաբար հաչում և յարձակուում իր վրայ հաւատարիմ շունը, և նա աւելի ցաւեց շան, քան թէ փողերի վրայ։ Նա իսկոյն յետ դարձրեց ձիու գլուխը, բայց շանն այնտեղ չգտաւ, ուր թողել էր։ Արիւնի հետքը ցոյց էր տալիս, որ շունն յետ էր դարձել։ Ո՞րքան ցաւեց բարի վաճառականը, երբ արիւնի հետքը բռնած գնալով՝ նա գտաւ հաւատարիմ կենդանուն փողերի քսակի վրայ ընկած։ Գիտակցաբար նայում էր շունը իր տիրոջը և փաղաքշանքով լիզում նրա ձեռքերը։ Մի

20. ԵՐԿՆՔԻ ԶԱՆԳԱԿԸ

Հին, շատ հին ժամանակներում, երբ ոչ թագաւորներ կային, ոչ իշխաններ և ոչ դատաւորներ, մարդկանց գործերը քննուում էին մի մեծ զանգակով, որ կախուած էր երկնքից։

Մարդիկ իրանց վէճերի համար դիմում էին այդ զանգակին։ Վկաներ կանչելու սովորութիւնը չկար այն ժամանակ-

ներում և այդ հարկաւոր էլ չէր, որովհետև զանգակն այնպիսի մի հրաշալի զօրութիւն ունէր, որ առանց վկաների ցուցմունքի ինքն էր ամենաճիշտ և ամենաանաչառ կերպով ցոյց տալիս, թէ ո՞վ է արդարը, ո՞վ է մեղաւորը։

Զանգակը կախուած էր մի ընդարձակ դաշտի վրայ։ Նրա տակ, գետնից բաւական բարձր, շինուած էր մի բեմ, որի վրայ բարձրանում էին սանդուխքով։ Գանգատաւորները միայն իրաւունք ունէին բարձրանալու այդ բեմը, իսկ հանդիսատես ամբոխը կանգնում էր ներքևը՝ դաշտի վրայ։ Եւ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսւում ահագին ամբոխի միջից. զանգակը համարւում էր մի սրբութիւն, որ Աստուած ինքն էր կախել երկնքից չարամիտ մարդկանց անօրէն գործերը քննելու համար։

Գանգատաւորները բարձրանում էին բեմը և փոխէփոխ բռնում էին զանգակի լեզուակի թոկից։ Նա, ով մեղաւոր էր, բնաւ չէր կարողանում շարժել լեզուակը, իսկ նա, ով որ արդար էր, հէնց որ բռնում էր թոկից, լեզուակն իսկոյն շարժւում էր, և զանգակը զրընգզրընգում էր։

Խօսք չկայ, ինարկէ, որ մարդիկ այդ ժամանակներում շատ սիրով և հաշտ էին ապրում իրար հետ, և շատ հազիւ էր պատահում, որ մէկը միւսի հետ որևէ տարաձայնութիւն ունենար, որովհետև ամենքին էլ յայտնի էր զանգակի հրաշալի զօրութիւնը. ամենքն էլ գիտէին, որ ոչ մի դէպքում մեղաւորը արդար չի դուրս գայ, արդարը—մեղաւոր։

Բայց ինչպէս եղաւ, որ այդ զանգակն այժմ այլ ևս չըկայ, ինչպէս եղաւ, որ մարդիկ զրկուեցին մի այդպիսի անաչառ դատաւորից։

Մի անգամ մէկն իր հարևանին փող էր փոխ տուել։ Նշանակուած ժամանակից յետոյ, երբ նա պահանջեց իր փողը, պարտապանն ասաց. թէ տուել է։ Սա թէ՝ «չես տուել», նա թէ՝ «տուել եմ»։

—Դէ որ տուել ես, արի գնանք զանգակի դատաստանին, —ասաց պարտատէրը։

—Գնանք.—ասաց պարտապանը։

Գնացին։

Հետաքրքիր ամբոխը շրջապատել էր զանգակի բեմը։ Ամենքը անհամբեր սպասում էին զանգակի դատաստանին։

Գանգատաւորները բարձրացան բեմը։

Որովհետև մեղադրողը պարտապանն էր, այդ պատճառով առաջ նա պէտք է բռնէր զանգակի թոկից։ Նա ձեռքին մի հաստ գաւազան ունէր, զանգակի թոկից բռնելուց առաջ այդ գաւազանը տուեց պարտատիրոջը և դարձաւ զանգակին.

—Ա՛յ զանգակ, ա՛յ անաչառ դատաւոր, դո՛ւ ասա՝ պարտքը տուել եմ թէ ոչ։

Ասաց ու բռնեց զանգակի թոկից։

Ու բռնեց թէ չէ, զանգակը զրընգզրընգաց։ Դա նշան էր, որ պարտքը տուած էր։

Պարտատէրը մնաց տեղնուտեղը ցամաքած։

—Դէ, հիմի էլ կասես չեմ տուել—ասաց նրան պարտապանը, գաւազանն առաւ նրա ձեռքից և յաղթական կերպով իջաւ բեմից։

Ամբոխը գիմաւորեց նրան ծափերով, իսկ պարտատիրոջն սկսեց թքել ու մրել, որ պարտքը ստանալուց յետոյ չէր ամաչել զանգակի դատաստանին դիմելու։

Բայց այստեղ մի հրաշք կատարուեց. զանգակը լեզու առաւ և սկսեց խօսել ահաւոր ձայնով։

—Դուք, մարդիկ,—ասաց նա,—լսեցէք ինձ։ Այսքան ժամանակ ես ձեր դատաւորն եմ և երբէք չի պատահել, որ անարդար դատաստան անեմ։ Բայց իմ այսօրւայ դատաստանն անարդար էր, որովհետև ձեզնից մէկը յանդգնեց խաբել ինձ։ Նա իր պարտքը չէր վճարել, բայց որպէսզի իմ առաջ արդար դուրս գայ, տեսէք թէ ինչ խորամանկութեան էր դիմել. փորել էր ձեռքի գաւազանը, փորուածքի մէջ թաղցրել էր պարտք վերցրած փողերը և երբ եկաւ, որ լեզուակիս թոկից բռնի՝ գաւազանը տուեց պարտատիրոջ ձեռքը։ Այդ բոպէին յիրաւի որ պարտք վերցրած փողերը տուել էր պարտատիրոջը, և ես չէի կարող իմ զանգահարումով չըյայտարարել, որ պարտքը տուել է։ Բայց յետոյ ինչ արաւ նա։—Նա պարտատիրոջից յետ առաւ իր գաւազանը մէջն ածած փողերով և դեռ ձեզնից ծա-

փեր էլ սատացաւ, իսկ խեղճ արդար պարտատէրը ձեր կողմից թուք ու մրի արժանացաւ։ Դուք, մարդիկ, լսեցէք ինձ։ Օրինակը վարակիչ է։—այսօր ձեզնից մէկը խաբեց ինձ, վաղը նրան հետևելով՝ միւսը կըխաբի, երրորդ օրը՝ մի ուրիշը և այսպէս անվերջ։ Որ այդպէս է, դուք արժանի չէք ինձ պէս անաչառ դատաւորի. գնացէք այսուհետև դատեցէք դուք ինքներդ ձեզ, և թող ձեր մարդկային դատաստանը միշտ անարդար լինի։

Ասաց զանգակն ու ահագին դղրդիւնով թռաւ երկինք։

21. ԿԱՂՆԻՆ ԵՒ ԵՂԷԳԸ

«Ա՛յ եղէգ,
Ի՞նչ ցեղ էք»,
Ասաւ ահագին
Կաղնին եղէգին։
«Քո ուժդ ի՞նչ է,
Որ քամին փըչէ՝
Կամ պէտք է դողաս
Կամ փուեես սողաս։
Խլէգ ու ճլէգ,
Մասիս սարն եմ, տես.
Արևը գիտե՞ս,
Չի հասնում գօտիս,
Մըրիկը՝ ոտիս,
Գայիը էլի՛,
Ողորմելի,
Իմ ստուերի տակ բուսնէիր,
Վատ եղանակ չոտեսնէիր։
Իմն է կեանքը էս աշխարհում»։
Խօսքը բերնում,
Մին էլ օդում, մրթնոլորտում
Որոտ, ճայթոց,
Ամպի պայթոց,
Կայծակ ահեղ,
Կարկուտ, հեղեղ,
Խենթ ու խլոտ
Քամին դիւոտ
Փնչուն,
Վրչուն
Իրան առած,
Մի սոսկալի
Մրրիկ դառած՝
Չլեց,
Խլեց
Կաղնին տակից
Ու երկնքի
Եօթը յարկից,
Որ չը շփեց
Ցածի ժայռին,—
Փշրեց թափեց
Հսկայ ծառին։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԵԱՆՔ

22. ԱՐՑՈՒՆՔԻ ԱՂԲԻՒՐ

Մօտեցաւ արևն Արևմուտ սարին ու դօշին չոքեց։ «Գնում եմ մօրս ծոց, ճամփայ տուր, թէ չէ՝ կըվառեմ ես քեզ»։ Սարը կռացաւ ու ճամփայ տուեց, արևը ժպտաց, սարերի գլուխները, ամպեր ու երկինք կարմրեցին յանկարծ։

Նախիրն է դառնում հեռու դաշտից, գառներ են մայում, այծեր մըկըկում, կովեր բառանչում, երեխաներ ծըւում։ Ինչու՞ են լալիս սրանք լեղաճաք, այս ի՞նչ պատահեց։

—Վա՛յ, Մարէ-մէրիկ, գոռում են նրանք, օրդ խաւարեց։ Սև Զորի միջում մենք խաղում էինք ալաջա պարը, երբ վրայ ուլին մեզ յանկարծ փաշայի քուրդ նոքարները։ Նրանք մըրակով մեզ լաւ ծեծեցին ու տուն քշեցին, իսկ քո Անուշին ամուր կապեցին ու թամբին դրին։ «Մայրիկ էր կանչում, մայրիկ ջա՛ն, ո՞ւր ես, ինձ սպանեցին»։ Բայց նրանք Անուշին ապտակ խփեցին, խկոյն լռեցրին։ Նա ձայնը կտրեց, քրդերը

փախան։ Անուշդ կորաւ։ Վա՛յ, Մարէ-մէրիկ, քեզ սև լուր բերինք, օրդ սևացաւ։

Դառն կսկիծը նրա գլուխն ընկաւ, տանել չըկարաց. արցունքը ցամքեց, աչքերը պլշած ու կանգնած մնաց... Յանկարծ ծիծաղեց, խելքը կորցրած...

—Եկէք, բալաներ, այսօր Անուշին ես հարս եմ շինել, հարսանիք արել... մեռնեմ ես նրա մարմար թշերին, շիմշատ մատներին, մեռնեմ փեսայիս բոյ ու բուսաթին... դէ՛, պար բռնեցէք, հարսնիք է, բալէք»։

Ու ինքը պարեց... բայց յանկարծ ճչաց, մազերը փետեց ու դուրս արշաւեց...

Վեր կացաւ քամին, երկինք ու երկիր իրար հետ խառնեց, սև ու մութ ամպեր իր ծոցից հանեց, մէկ մէկի զարկեց։ Լռեց ամեն բան. քամին էր միայն, որ մռնչում էր, քամին էր միայն որ սուլում, ոռնում ու շառաչում էր...

Բայց ձորի միջից մի ձայն էր գալիս։ Նա էլ հեծկլտում, նա էլ է ոռնում ու վայ է տալիս։ Աղդեօք բորենին, թէ գայլն է սպառնում այս խուլ գիշերին, թէ՞ բուն է վախից սարսափած գիւղին սև շիւան բերում։ Ոչ, ոչ, չի կարող ոչ մարդագելը, ոչ գայլը, ոչ բուն,—ոչ մի շնչաւոր չի կարող դիմանալ կատաղած քամուն։ Մարէ-մէրիկն է այն ձորում նստած, Անուշին կանչում, ձայնը չի լսում, նա հեծկլտում է, մազերն է փետում...

Բայց չի դադարում կատաղած տարրը. երկինքը ելաւ, անձրև ու կարկուտ իր միջից ժայթքեց, և մելամաղձոտ նրա հետ՝ գիւղի զանգակն է հնչում, իսկ հեռու ձորից մի խուլ հեծկլտանք նրա հետ խառնում...

Անցան տարիներ։ Մարէ-մէրիկը ձորը չէր թողնում. մազը ըզգզուած, տկլոր ու նիհար խոտ էր ճարակում, աչքերին արցունք և թափառելով՝ Անուշ էր կանչում։

Այսչափ կսկծից, այսչափ արցունքից գազան փաշայի սիրտը չըկակղեց։ Բայց ժայռը կակղեց, իր սիրտը պատռեց թըշուառ մօր լացից և արտահոսեց Սև-Ձորի միջից պաղ ու վճիտ ջուր, որ մինչև այսօր այնտեղ կոչում են «Արցունքի Աղբիւր»։

23. ԲԼԲՈՒԼԻՆ

Արի՛, բլբո՛ւլ, մէկ տեղ նստենք,
Ձէն-ձէնի տանք ու երգենք.
Էս օրանից դառնանք ընկեր,
Իրար խառնենք մեր ցաւեր։
Անցա՛ւ գարուն, աշուն կուգայ,
Շատ հեռու չէ և ձմեռ,
Լաց, ընկեր չան, էլ վարդ չըկայ,
Թռչիր մնաց կիսամեռ։

Երգենք, ընկեր, ցաւը երգենք,
Դու՝ քո մեռած ալ վարդի,
Երգենք, ընկեր, ցաւը երգենք
Ես՝ իմ աւեր վաթանի...
Անցա՛ւ գարուն, վըշտոտ գարուն,
Մօտ է աշուն, ցուրտ ձմեռ,
Ա՜խ ախպերս մնաց անտուն.
Քոյրս քաղցից կիսամեռ...
Արի՛, բլբո՛ւլ, ցաւը երգենք
Վարդի, աւեր վաթանի,
Արի՛, ընկեր, իրար խառնենք
Մրմուռ ցաւը մեր սրտի։

Սիրի, թլթուլ, մէկ լիճ նստինք,
Զէն-զէնի գանք ու խրտինք.
Հա օրանից դառնանք ընկիր,
Խրար խառնինք մեր ցաւեր:
Ինչպէս գարուն, աշուն կու գայ,
Ճար մորու չէ և ցմրու
Լայ, ընկիր զան, էլ վարդ չըկայ,
Թուփը մնայ կիսամրու:

24. ՏԷՐՆԴԱՍ

Մեր գիւղի համար Տեառնընդառաջն ընդհանուր ուրախութեան օրն է. այդ երեկոյ ամենքն էլ եկեղեցին են գնում, —ծերերը Սիմէօն ծերունու աղօթքն իրանց բարեխօս խնդրելու, հասակաւորներն իրանց գլխարկների մէջ օրհնած մոմ կաթեցնելու, որպէսզի ամառը շանթ ու որոտից, հուր ու կայծակից ապահով լինին, իսկ երեխաները գնում են վառած մոմերով օրհնած կրակը բերելու Տէրնդասն այրելու համար:

Տէրնդասի համար նիւթեղէն պատրաստելու ծանրութիւնն ամբողջովին ընկնում էր մեզ՝ երեխաներիս վրայ, և մենք արդէն մի շաբաթ առաջ մեծ նեղութիւն կրելով հաւաքում էինք խոտ, յարդի կրճոնք, հին քթոցներ, փուշ, սատասկ և տաշեղներ:

Երեկոյեան վերջապէս տղաների հետ միասին ժամուորը դուրս է գալիս ժամից, և վառած մոմերի ահագին հեղեղը՝ հեղհեղալ ճիւղաւորելով գիւղի ծուռ ու մուռ փողոցներով, պատկերացնում է մի սքանչելի հրաւառութիւն, մի չըտեսնուած լուսաւոր տեսարան գիւղացու մռայլ կեանքում, որի աղօտ նմանութիւնը կրկնւում է միայն Զատկի գիշերը, երբ լուսադէմին գիւղացիները վառած մոմերով այցելութեան են գնում իրանց ննջեցեալների գերեզմաններին:

Ահա եկեղեցու մօտ գտնուող տներից մէկի կտուրի վրայ ճրթճրթալով բորբոքւեց հսկայական խարոյկը. թանձր ծուխը հրեղէն լեզուների հետ գրկախառնւելով՝ քուլա քուլա սկսեց դէպի վերև բարձրանալ. նրան հետևեց երկրորդը, երրորդը, չորրորդը.... մի բոպէ ևս, և ահա գիւղն ամբողջապէս խորասուզուած է ծխի ու կրակի ալիքների մէջ. կարծես Սոդոմ և Գոմոր մեղսալի քաղաքների նման գիւղը խեղդւում է երկնքից թափւող հուր ու ծծումբի մահաբեր տարափի տակ:

Սակայն սուգ ու շիւանի, լայ ու հառաչանքի ձայն չէր, որ լսւում էր խարոյկների շուրջը, այլ մանկական առոյգ ճիչն ու աղաղակը և աղջիկների անուշ ծիծաղն ու խնդումն էր, որ բռնել էր ամեն տեղ:

Մեր տունը գտնւում էր գետի ծայրում. երբ մենք՝ երեխաներս ժամի ճանապարհին սրա-նրա Տէրնդասի մօտ հրամցրած հատիկով ու խէծաղով գլուխներս խառնուած՝ վառած մոմերով մի փոքր ուշացած էինք տուն վերադառնում, մերոնք արդէն կազմ ու պատրաստ մեզ սպասելիս էին լինում Տէրընդասի մօտ: Սիմէօն պապս ամենայն ջերմեռանդութեամբ վեր էր առնում մեր ձեռքից վառած մոմը, նախապէս երեսը դէպի արևելք դարձնելով՝ երեք անգամ խաչակնքում էր և ապա կիսաձայն ինչ-որ մրմնջալով՝ մոմը մօտեցնում էր Տէրնդասին ու կրակ տալիս. դա ծառայում էր որպէս ազդանշան մեզ համար, և մենք ամեն կողմից կրակ տալով խարոյկը՝ բացականչում էինք, «եալլա, եալլա...»:

Մեր ձայներու վրայ տնից դուրս էին գալիս ջահիլ հարսներն ու ազապ աղջիկներն և իրանց հետ բերում էին հատիկ,

մեղրած խէծաղ, մէջը մանր յուլունքի նման շաքարեղէններ ածած, և լաղուտ. նրանք գիւղական այդ քաղցրաւէնիքը հրամցնում էին ոչ թէ միայն մեզ—տնեցիներիս, այլ և բոլոր այն հարևաններին, որոնք այդ տարի սգաւոր լինելով՝ Տէրնդաս չէին վառել և մեզ մօտ հիւր էին գտնում։

Երբ կրակի բոցերը փոքր ինչ մեղմանում էին, մենք—երեխաներս ձեռք-ձեռքի բռնած՝ սկսում էինք խարոյկի շուրջը պտոյտ գալ և ապա մէկ մէկու յետևից կրակի միջով թռչել, որպէսզի քաջ լինենք և ոչ մի բանից չըվախենանք։

Կրակը մեծ սրբութիւն է գիւղացու համար. բացի այն, որ նա տաքացնում է, նա հեռու է վանում և չար ոգիներին. նա առողջութիւն է պարգևում հիւանդներին, նա քաջութիւն է ներշնչում երիտասարդներիր և իմաստուն ծերերի համար ծառայում է որպէս հարուստ նիւթ՝ ապագայի վերաբերմամբ զանազան գուշակութիւններ անելու։

Ահա այս էր պատճառը, որ երբ խարոյկի շուրջն ամենքն իրանց գործով զբաղուեցին, պապս ու մեծ հօրեղբայրս էլ իսկոյն իրանց դերի մէջ մտան և նրանց ուշքն ու միտքն ամբողջովին զբաւուեց այն հարցով, թէ դէպի որ կողմն է թեքւում խայտոյկի ծուխը. սակայն այնքան էլ հեշտ բան չէ այդ, որովհետև մարտի քամիների նման քմահաճ ու փոփոխական է Տէրնդասի ծուխը. անորոշ կերպով նա մերթ աջ է օրօրւում և մերթ ձախ, մինչև որ վերջապէս ընդունում է մի որոշ ուղղութիւն, որից և գիւղի ալևորներն ու գիտուն կարծուածներն աշխատում են գուշակութիւններ անել, եզրակացութիւններ դուրս բերել տարւայ բերքի որակի ու քանակի վերաբերմամբ, բանն այն է, որ ծխի ուղղութիւնը ցոյց է տալիս, թէ այդ տարի գիւղի որ կողմում գտնւած արտերն ու այգիներն առատ հունձ են տալու, որոնք՝ վատ և որոնք՝ միջակ։ Օրինակ, ծխի կողմը՝ լաւ, հակառակ կողմը՝ թոյլ, իսկ աջ ու ձախ կողմերը՝ միջակ եթէ ծուխը բարձր է գնում, ասում են, աշնանացանն է առատ լինելու, իսկ եթէ ցած՝ գարնանացանը։

Այդ երեկոյ պարապ չեն և գիւղի պառաւները. խարոյկը վերջանալու մօտ, յիշում եմ ինչպէս մէջքից կորացած մամս

կոտրած թիակը ձեռքին՝ մօտենում էր կրակին, երկիւղածօրէն ինչ-որ աղօթք էր փընթփընթում և կրակախառն մոխիրը վերցնելով տանում, տան երթիքից վայր էր թափում ու բարձրաձայն կանչում երեք անգամ. «լոյսը ներսը, մութը դուրսը». իսկ մենք՝ երեխաներս տնազելով նրան ասում էինք՝ «կատուն ներսը, մուկը դուրսը»։

Գիւղական կեանքն այդ օրանից զգալի փոփոխութիւն է կրում, որովհետև գիւղացիները Տէրնդասի կրակի մէջ գցում ու այրում են բոլոր խրձընկալները, որոնցով միչև այդ ծածկում էին իրանց երթիկները, և դրանից յետոյ երթիկները բաց են թողնում։

1. Համեմատեցէք ձեր տեսած Տէրնդասը այս Տէրնդասի հետ։

25. ՍԱՐԻՈՐ

Արևը չելած՝ սարւորն արթնացաւ,
Նորից ձորերում աղմուկ բարձրացաւ,
Նորից սայլի տակ ճրռռում է ճամփան,
Փրռփրռում հարսի քօղն ու դաթիքան.
Դալար իւրդերը ամպերի տակին
Աչքերը գցած քոչւորի ճամփին՝
Ժպտալով յակինթ ցօղերով առատ,
Կանչում են կարծես բոյրով անարատ։
Կանաչի վրան աւթաւան [1]) ձեռքին՝
Կրօնասէր թուրքը չոքեց նամազի,
Ձեռները զգոյշ տանելով միրքին՝
Աղօթք է անում Աստծուն մեկուսի։
Կէսօր է արդէն, կանաչ Լալւարից
Իջնում է հանգիստ ոչխարը կրթի.

1) Զրաժանի տեսակը։

Կըթեելու մաս-մաս, անցնում է բերից, [1]
Լսւում է անուշ փըշշոցը կաթի։
Հովիւ, հովուհի նստոտած շարքով՝
Կըթում են ուրախ և անհոգ խընդում,
Երբեմն էլ այրւած անուշիկ երգով
Սէր են զարթեցնում մէկ-մէկի սրտում։
Վերջացաւ արդէն ոչխարի կիթը,
Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը.
Մէկն էլ գդակը շարժելով օդում,
Դեռ զառնարածին՝ «եկ, հէյ» է կանչում.
Երկար չանցնելով, սարի գագաթին
Գառների կայտառ հօտը երևաց.
Խառնւելով նրանք մայրերի հօտին,
Բերկրանքի յոյզով մայում են ցրւած.
Կանչում են, բայում գառն ու մաքին,
Անուշ ձայներով փընտրում են միմեանց.
Ո՛ը գտնելով իրա գառնուկին,
Ծրծել է տալիս, փայելով սրտանց,
Ո՛ը խաղում է մօր հետ կուշտ փորով,
Ո՛ն էլ մտնում է տխուր մայելով.
Եւ ամեն անգամ գառը մէր տալիս[2]
Կարծես թէ անուշ համերգ են տալիս։

1) Ոչխար կթելու տեղը։ 2) Մայրերին տալիս, ծծեցնելիս։



Գիտեցէք ա՛յս պատմիցը Ալիսանը գիտուցիս ուարն են գնում՝ և դեռ մի՛ մոռանաք։

26. ՓՈՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

Իսպանիայի Բարցելոնա քաղաքից մի ֆրանսիական նաւ մեկնեց դէպի Գենովա։ Շոքենաւում նստած էին ֆրանսիացիներ, իտալացիներ, իսպանացիներ, շւեցարացիներ. ճանապարհորդների մէջ կար տասնամեայ տարեկան վատ հագնուած մի պատանի։ Նա մի կողմ էր քաշուած և խոժոռ հայեացքով նայում էր ուրիշներին։ Իրաւունք էլ ունէր այդպէս նայելու։ Երկու տարի առաջ հայրն ու մայրը, որ Պատուայի գիւղացիներ էին, նրան վաճառել էին մի դերասանական խմբի։ Այդ խմբի հետ նա անցել էր Ֆրանսիա, Իսպանիա և սովից տանջուել էր։ Նրան սովորեցնում էին ձեռնածուութիւններ (ֆոկուսներ) անել ու ծեծում էին։ Երբ Բարցելոնա հասան, նա այլևս չէկարողացաւ տանել սովն ու հարուածները. նա փախաւ իր տիրոջից և դիմեց իտալական հիւպատոսի պաշտպանութեանը։ Հիւպատոսը խղճալով տղային, մի տոմսակ տուեց նրան ձրիաբար մինչև Գենովա գնալու։ Միաժամանակ մի նամակ էլ տուեց Գենովայի իշխանութեանը յանձնելու, որպէսզի վերջինս տղային իր ծնողներին հասցնէ. այն ծնողներին, որոնք վաճառել էին նրան իբրև մի անասուն։ Խեղճ տղան ցնցոտիներ ունէր հագին և սաստիկ նիհարել էր։ Նրան տեղ տուին շոգենաւի երկրորդ կարգում։ Ամենքը հետաքրքրուում էին նրանով և հարցեր ուղղում, բայց նա ոչ մի պատասխան չէր տալիս. լկանքից ու գրկանքից դառնացած՝ նա կարծես բոլորին էլ ատում էր։ Բայց և այնպէս ճանապարհորդներից երեք հոգի ստիպեցին նրան խօսել և նա իսպաներէն իտալերէնի հետ խառնելով, պատմեց իր արկածները։ Այդ երեք ճանապարհորդները իտալացիներ չէին, բայց հասկացան նրա պատմածը։ Մասամբ հարբած լինելով և մասամբ կարեկցելով տղային, նրանք մի քիչ փող տուին նրան։ Այդ միջոցին սրահը մտան նոր մարդիկ. այն երեքը պարծենալով նորից սկսեցին գրամներ շպրտել և գոռալ.—այս էլ վերցուր, հաւաքիր։

Տղան գրամները ժողովեց, կիսաձայն ու տրտմագին շնորհակալ եղաւ և այս անգամ նրա աչքերը կարծես փոքր ինչ

մեղմացան։ Յետոյ իր օթեակի անկողինը մտաւ և վարագոյրը քաշելով՝ սկսեց իր գործերի վրայ մտածել։ Այս փողերով կարելի է որևէ համեղ բան ուտել... Ի՞նչ լաւ կլինէր երկու տարուայ սովալլուկ կեանքից յետոյ։ Գենովա հասնելուն պէս կարելի է նաև շորեր գնել։ Ի՞նչ փառաւոր բան կլինի երկու տարի ցնցոտիներ հագնելուց յետոյ... Կարելի է տուն տանել փողերը. այն ժամանակ հայրն ու մայրը նրան մարդավարի կընդունեն։ Եթէ ոչ՝ կասեն—դարձեալ դատարկ տուն եկար... Տղան երջանիկ էր և շարունակում էր մտածել, թէ ինչպէս գործադրէ գանձը։

Այն ինչ երեք ճանապարհորդները նոյն կարգի դահլիճում նստած, խմում էին, խօսում իրանց տեսած երկրների մասին։ Վերջապէս նրանք սկսեցին և Իտալիայի մասին խօսել։

Մէկը գանգատւում էր պանդոկներից, միւսն երկաթուղիներից. յետոյ սկսեցին Իտալիայի ամեն ինչը հայհոյել։ Մէկը գոռում էր, թէ աւելի լաւ է Լապլանդիայում ճանապարհորդել, միւսը՝ թէ Իտալիայում ամենքն էլ խաբեբաներ են. երրորդը՝ թէ իտալացի պաշտօնեաներն անգրագէտ են։—Տգէտ ժողովուրդ է, ասաց առաջինը։—Կեղտոտ ժողովուրդ է, աւելացրեց երկրորդը։—Գողեր են, սկսեց երրորդը և դեռ խօսքը չէր վերջացրել, յանկարծ սոլդիներ ու ֆրանկներ էին, որ զնգզնգալով տեղացին յատակի վրայ, սեղանի վրայ և մանաւանդ նրանց գլխին։ Երեքն էլ կատաղած վեր թռան և սկսեցին դէս ու դէն նայել։ | Յետ առէք ձեր փողերը,—գոռաց տղան, դուրս նայելով վարագոյրի յետևից,—իմ հայրենիքը նախատողներից ես ողորմութիւն չեմ ընդունում։

27. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

Պաղեստինում մի ընտանիքի մէջ ապրում էին երկու կին։ Դրանցից իւրաքանչիւրը մի-մի ծծի երեխայ ունէր։ Մի անգամ, գիշերը, կանանցից մէկը քնած ժամանակ իր երեխային տակովն արաւ, խեղդեց։ Արթնանալով և նկատելով այդ՝ նա իր քնած դրացու մօտից կամացուկ վեր առաւ նրա կենդանի երեխային, իսկ մեռածին դրեց նրա անկողինը։ Առաւօտը, երբ այս վերջինը կամենում էր կերակրել

իր որդուն, յանկարծ տեսաւ, որ երեխան մեռած է և իսկոյն ճանաչեց, որ դա իրանը չէ։ «Սա իմ որդին չէ,—ասաց դրացուհուն,—այլ քոնն է, տուր ինձ իմ զաւակը»։—«Սուտ ես խօսում,—վրայ բերեց միւսը,—այդ քո որդին է, իսկ կենդանին իմն է»։

Եւ նրանք սկսեցին վիճել։ Հաւաքուեցին մարդիկ, բայց ոչ ոք չէր հասկանալ, թէ նրանցից ո՞րն է ճշմարիտը։

Այդ ժամանակ Պաղեստինում իշխում էր Սողոմոն անունով մի իմաստուն թագաւոր։ Կանայք վեր առան թէ մեռած և թէ կենդանի երեխաներին և բերին թագաւորի մօտ։

Սողոմոն թագաւորը, լսելով նրանց գանգատը, իսկոյն կանչեց իր թիկնապահներից մէկին և հրամայեց կենդանի երեխային կէս անել ու բաժանել գանգատաւորներին։ Հէնց որ երեխայի հարազատ մայրը լսեց այս հրամանը, իսկոյն թագաւորի ոտներն ընկաւ և ասաց,—«Տէր թագաւոր, մի, հրամայիր սպանել երեխային, տուր, թող նրան լինի, միայն թէ կենդանի մնայ»։ Իսկ միւս կինն ասաց—«Թագաւորն արդար դատեց. թող սա ո՛չ քեզ լինի, ո՛չ ինձ»։

Թագաւորն իսկոյն հասկացաւ թէ կանանցից ո՞րն է մանուկի հարազատ մայրը և հրամայեց նրան տալ երեխային։

Ամպիսիներում մի ընդանիքի մէջ ապրում էին իրենց կին։ Դրանցից իւրաքանչիւրը մի-մի ծիր իրիւղ ունէր։ Մի անգամ գիշերը, կանանցից մէկը քնած ժամանակ իր իրիւղային գաւգուն ապուր, խիղդից։ Ուրիշներով և նկատելով այդ նա իր քնած դրացու ծոցից կամացուկ վերցրեց նրա կենդանի իրիւղային իսկ մեռածին դրեց նրա անկողինը։

28. ՀԱՅՐԵՆԻՔ

Է՜յ ջան-հայրենիք,
ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մոգի մէջ,
Ձրերդ անուշ, հովերդ անուշ,
Մենակ բալէքդ արիւն-ծովի մէջ։
Քո հոգին մեռնեմ,
Անգին հայրենիք,
Ա՜խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ.
Երնէկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ։
Ու հազար կեանքով
քո դարդին մեռնեմ։
Բալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն.
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ
Էն էլ քո փառքի գովքը երգելուն,—
Որ արտուտի պէս
վեր ու վեր ճախրեմ
Նոր օրւայ ծէգիդ, ազիզ հայրենիք,
Ու անուշ երգեմ, բարձր ու զիլ գովեմ
Կանանչ արևդ, սիրուն հայրենիք...

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՆԴՈՒԽՏԸ

Հայ ազգը օր ըստ օրէ թողնում է իր երկրները և կենդրոնանում քաղաքներում։ Աղքատութիւնն ստիպում է նրան թողնել իր տունը, իր ընտանիքը, իր ամուսինը, իր զաւակները և գնալ Պոլիս՝ կամ այլ քաղաք աղքատութիւնից ազատելու համար։ Բայց այդ տեղերում ևս նրան դիմաւորում է էապէս նոյն աղքատութիւնը, գուցէ մի փոքր քաղաքային ամոք կերպարանքով։

Դրա վրայ աւելացրու ընտանեկան կեանքից զրկու

Օր չի անցնում, հայրենիքիս
Վառ կարոտը չայրի հոգիս։

Մատաղ լինիմ նրա պայծառ
Էն երկնքին, ուր սիրավառ
Ոսկի արևն ինձ վերևից
Փայփայել է մանուկ օրից։

Հայրենիքիս խաղաղ ծոցում,
Ինչպէս փափուկ օրօրոցում,
Ես մեծացել, կեանք եմ առել.
Նրա շնորհով մարդ եմ դառել։

Ո՞նց մոռանամ ես էն օրհնած.
Սարն ու ձորը ծաղկով լցւած,
Էն կենսատու ջուրն ու հողը,
Գարունքի էն հովն ու ցօղը։

Ո՞նց մոռանամ ես էն փարթամ
Դաշտն ու արտը, ուր շատ անգամ
Ասես թիթեռ՝ թռթռացել,
Արար-աշխարհն եմ մոռացել։

Ուր լսել եմ սրտիս աղիզ
Գեղջուկ մշակ եղբայրներիս
Դառն լացը, կուշտ ծիծաղը,
Ուրախ-ուրախ երգն ու տաղը...

Օտար երկինք, օտար արև,
Որ շողում էք գլխիս վերև,
Ինչքան շողաք... դուք ինձ համար
Միշտ կըմնաք գիշեր խաւար...

Օտար երկինք, օտար արև.
Որ շողում էք գլխիս վերև.
Ինչքան շողաք... դուք ինձ համար
Միշտ կըմնաք գիշեր խաւար..
Արարա՛ տղոր՝ չիչ նայելով,
Անկրէր, պանդուխտ կ՚անցնէ լալով,
Օր չի անցնում, հայրենիքիս
Վառ կարօտը չայրի հոգիս։

31. ԳԻՇԵՐԱՊԱՀ ՄԿՕԻ ԵՐԱԶԸ

Դաժան ձմեռան մի ցուրտ գիշեր էր։ Թիֆլիզի մեծ փողոցներից մէկում, մի շքեղ տան դռան առաջ, մի մաշւած քուրք ուսերին՝ փալանի վրայ պըզգած էր մշեցի գիշերապահ Մկօն։ Նա աչքերը ձգած գետնին՝ տխուր մտածում էր... Լռութիւն էր չորս կողմը, անցուդարձը կտրւել էր. միայն երբեմն երբեմն գիշերաշրջիկ աղաների կառքը մօտից անցնելով՝ մի բոպէ նրա ուշքը գրաւում էր և կրկին գլուխը խոնարհում։

Գիշերւայ ժամը երկուսը խփել էր և ահա մի կողմից ցուրտը, մի կողմից դադրածութիւնն ու նինջը կամաց-կամաց յաղթեց Մկօին։ Նա գլուխը թաղեց քուրքի մէջ, թիկն տաւ պատին և անշարժ մնաց տեղը կուչ եկած։ Հէնց էն է քաղցր քնի մէջ էր մտել, որ մէկը կողքին աքացի տալով զարթեցրեց.

«Տօ, ախմախ, էտէնց իս տանը մուղայլթ կենում, քեզ քանի ջէր ասել իմ ու էլի իմ ասում, մէկ էլ էսէնց շնթռած չըտեհնիմ քիզ թէ չէ...

Խեղճ Մկօն քնից վեր թռաւ, տեսաւ տանտէր աղային, որ սամուր քուրքի մէջ կոլոլուած, փուհ-փուհ անելով, բերանից հայհոյանքներ էր թափում։ «Աղա, ոտացդ մեռնիմ, բաշխի, ցուրտ կէնէր չըդիմցայ ու աչքս նոր խուփ էրի»։

—Աբա փուղը վունց ին դատում. 'երգնքեմէն խօմ դէվէր չէ թափւում. անքուն վուր չըմնաս, էլ քիզ փուղ ինչի իմ տալի. էս վիրչի գամն իմ ասում, թէ մէկ էլ մրափած տեհիլ իմ քիզ, դուս կօնիմ»։

Աղան մի քանի սպառնալիքներ էլ տալով, քաշեց տան դանգը, դուռը բացւեց և մրթմրթալով գնաց իր տաք սենեակում մինչև կէսօր խրմփալու, իսկ Մկօն վաշ-վիշ անելով, մի քանի բոպէ անցուդարձ արաւ տան դիմացը, սառած ոտները թմփթմփացրեց գետնին, որ քիչ տաքանայ ու կրկին քաշւեց դռան անկիւնը և առաջւան մտածմունքի մէջ ընկաւ։

Նրա մտածմունքները Թիֆլիզի սահմանից շատ հեռու էին, նա մտքով փոխադրւել էր Վասպուրական, իր հայրենի գիւղը. յիշում էր իր մանկութեան քաղցրիկ օրերը՝ երբ մի խումբ ընկերների հետ ճան (վէգ) էր խաղում, լճակներ շինում, դաշտում ծաղիկներ փնջում, կամ դառնուկներն առաջն արած՝ հանդում արածացնում. յիշում էր իր պատանեկութիւնը՝ երբ տափը վարելիս, հայրը գութանի մաճը բռնած, իսկ ինքը եզների լուծի վրայ հօտաղների հետ լայլայ կանչելով, երգում, աշխոյժ էր տալիս եզ ու գոմշուկին և ակօսի կողքից ընկնելով, ահագին դաշտը մի քանի օրում հերկւում, պատրաստւում էր... Յիշում էր իր երիտասարդութիւնը՝ երբ ամեն ինչ նրան ժպտում էր, ամեն ինչ նրա աչքին փայլուն էր երևում, որովհետև ոչ մի դառնութիւն դեռ նրանց շէմքից չէր մտել և հայրական տունը լիքն էր ամեն բարութիւնով։ Բայց շուտով նրա առաջ արձանացան մի շարք պատկերներ, արիւն արտասուքով ներկւած. նա յիշեց այն սոսկալի օրը, երբ հինգ տարի առաջ քրդերը մտան իրանց

գիւղը՝ սուգ ու շիւան ձգեցին ամեն տուն, թալանեցին և իրանց խրճիթը, և երբ հայրը գութանի ձևիչը ձեռին պաշտպանում էր գազանների ձեռքից իր ընտանիքը, իր կայքը, ինչպէս քրդի նիզակը նրա կուրծքը խրւեց և արիւնաթաթախ գետնին փռւեց... Յիշեց նաև հարկահանից ոչ պակաս քաշած տանջանքները և այն պարտքը, որ ընտանիքը պահելու համար արել էր և տարէցտարի դիզւում էր և իր արիւն քրտնքի վաստակը ձեռքից խլում... Եկաւ և այն դառն բոպէն, երբ պարկն ուսին, վիզը ծուռ, մնաս բարով ասեց իր մօրը, քոյրերին, ամուսնուն, համբուրեց օրօրոցում քնած փոքրիկ զաւակը և արցունքն աչքերին՝ հեռացաւ հայրական օջախից դէպի Կովկաս պանդխտութիւն...

Եւ այժմ նա Թիֆլիզում, ցերեկը փալանը կռնակին, քար ու ցեխ է կրում աղաների տունը շինելու համար, աղը է դուրս ածում, փողոցներն է մաքրում, իսկ գիշերները՝ անքուն մնում, գիշերապահութիւն անում այն ցեխ ու ձնի մէջ, որ դարձեալ նոյն աղան հանգիստ ու ապահով քնի իր տաք անկողնում և ինքը կարողանայ մի քանի կոպէկ յետ դցել իր աղքատ ընտանիքի համար...

Այս և սրա նման մտածութիւններ էին պաշարել Մկօի միտքը, որ յանկարծ քունը կրկին խժբժաց աչքերում. շատ էլ աշխատեց աղայի ահից արթուն մնալ, բայց չըկարաց... Նինջը յաղթեց նրան, գլուխը ծանրացաւ և ծուռեց կրծքի վրայ։ Նա մտաւ քնի աշխարհը, ուր թագաւորում են չար ու բարի երազները և մարդուս ներկայացնում են աշխարհիս թէ հաճոյքները և թէ չարիքները, բայց միայն խաբուսիկ ձևով։ Մկօն այդ աշխարհի մէջն էր. նրա դէմքից, շրթունքների ժպտից կարելի էր որոշել նրա ուրախ վիճակը. արդարև նա տեսնում էր իրան կրկին հայրենի տուն վերադառնալիս, շուրերը նոր, քիսան փողով լիքը, մի խուրջին ուսին չթեղէննեռով տրաքում։ Իր դիմացն են գալիս պառաւ մայրը, կինը, քոյրերը. իրար ճառով են ընկնում, նրանց պատմում է իր երեք տարւայ քաշած պանդխտութիւնը և այժմ էլ նրանցից չի բաժանւիլ, նա հարուստ է. խուրջինից հանում, բաժանում է

նրանց համար բերած ընծաները, ամենքն ուրախ են, ամենքը գոհ են... Տեսնում է նաև իր փոքրիկ Սաքօն տօտիկ-մօտիկ տուն պրծաւ, նա չի ճանաչում երան. մայրը «քո պապօն է», ասում է նրան... «Իմ պապօն», կանչում է մանուկը և ցատկում հօր գիրկը... «Սաքօ ջան...» սեղմում է իր գրկի մէջ հայրը և համբոյրներով ծածկում նրան...

Հէնց այդ հայրական գգւանքի մէջ էր Մկօն, որ կրկին մի թեթև աքացի դիպաւ կողքին։

Մկօն սարսափած վեր թռաւ տեղից. «ախ կորսուեցայ, բաշխի, աղա ջան, ոտացդ մեռնիմ, և սպասում էր աղայի նոր հայհոյանքներին, բայց սխալուեց. իր դիմացը այժմ կանգնած էր իր ընկեր Խաչօն։

—Ծօ, Մկօ, հէրիք քնես էս ցրտուն, էթանք բանատեղ, լիսը բացուեր է։

Մկօն ոչինչ չըխօսեց, մի դառն ախ քաշեց, փալանը ձգեց, ուսովը և ցրտից սրսփալով, տխուր հետևեց ընկերին...

32. ԵՐԿՐԻ ՄՇԱԿՆԵՐ

Օ՜, ծանր հոգսերի խղճուկ զաւակներ,
Որքա՜ն համբերող, քաջ է ձեր հոգին.
Տանջւում էք անվերջ, օրեր, տարիներ...
Կարծես տանջանքն է միայն ձեր բաժին...

Մանուկ օրերից ձեր մէջ ապրելով,
Վկայ եմ եղել ձեր շա՜տ ցաւերին.
Տեսել եմ, ինչպէս տանջանքի գնով
Դուք հաց էք տալիս հայրենի երկրին։

Տեսել եմ, ինչպէս յուսալից, զւարթ
Դուք մշակում էք անմշակ դաշտեր.

Ինչպէս տանջանքում անլաց, անվհատ
Դուք երգ էք երգում՝ վաստակի երգեր։

Տեսել եմ, ինչպէս ամառուայ շոգին,
Երբ կրակ է թափում արևառ երկինք.
Ոսկեշող արտում, մանգաղը ձեռքին,
Դուք մէջք խոնարհած՝ թափում էք քրտինք։

Տեսել եմ, ինչպէս գունաթափ աշնան
Հայրենի երկրի կուրծքը պատռելով,
Այնտեղ թաղում էք գանձերի նման,
Ոսկի հատիկներ, ոսկի յոյսերով...

Տեսել եմ գարնան սիրուն օրերին,
Պայծառ արևը դեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալեծուփ արտերի մօտին
Ձեզ ծունկ խոնարհած՝ ջերմ աղօթելիս։

Տեսել եմ, ինչպէս և՛ ցուրտ տաղտկալի
Ձմրան գիշերներ նստած խրճիթում,
Յոգնած ձեռքերիդ դադար չէք տալի —
Խոփն էք նորոգում, մանգաղը սրում։

Եւ այսպէս ազնիւ գործին անձնուէր
Ապրում, տանջւում էք անբաւ հոգսերում.
Եւ ձեր տանջանքում, հերոս մշակներ,
Արդար վաստակն է ձեզ ոգևորում։

Օ՜, հայրենիքիս քրտնաջան որդիք,
Որքա՜ն համբերող, քաջ է ձեր հոգին՝
Ձեզնով է միայն կանգուն հայրենիք,
Համբո՜ր ու օրհնա՜նք
Ձեր սուրբ վաստակին։

Օ՜, ծանր խոգեմքի խղճուկ կաւակներ,
Որքա՜ն համբերող, քաջ է ձեր հոգին.
Ամանգուսմ էք անվերջ, օրեր, գարերներ...
Կարծես գանգանքն է միայն ձեր բաժին...
Մանուկ օրերից ձեր մէջ ապրելով,
Վկայ եմ էղել ձեր շատ կաւերին.
Ամիսներ եմ, ինչպէս գանգանքի գնով,
Դուք նայ էք գրաչի նայրենի երկրին:

33. ԻՄ ՊԱՆԱՐԱՄԸ

I.

Ես մի ծեր մարդ եմ, սիրելի մանուկներ, իմ ընթերցողներ. պարտել եմ շատ գիւղ ու քաղաքներ, անցկացել գետեր ու ծովեր, շատ բաներ տեսել, ու շատ բան լսել, երբեմն տրամել, երբեմն ուրախացել, այժմ ուզում եմ պանարամիս մէջ փոքրիկ պատկերով տեսածս ցոյց տալ:

Դէհ, շուտով այստեղ, դուք ժիր մանուկներ,
Մեծ ու պստիկներ, խելօք ու չարեր,
Կարգ-կարգ շարուեցէք, ինչ որ կըլսէք
Եւ կամ կըտեսնէք, ձեր մտքում ամուր,
Ամուր պահեցէք...,

Սկսում է: Ահա մի պատկեր: Մի մեծ քաղաք է, մեծ-մեծ տներով, լայն փողոցներով, ուր պտըտում են մարդիկ ոտով ու կառքով տաք-տաք մուշտակներ ուսերին ձգած, սիգար, պապիրոս բերանները դրած՝ ֆիր՜ու, ֆիր՜ու, ծծում, փչում են մուխը թանձրացած:

Թող ծծեն, փչեն, փորերն ուռցնեն,
Ի՞նչ ունին պակաս, որ ինչ հոգս անեն...

Ահա՜ մի պատկեր, դարձեալ նոյն տեղից, մի խուլ փողոց է, ցեխոտ ու կեղտոտ. խարխուլ տնակներ աջ ու ձախ շինուած, երկու գրկիցներ դռան առաջին զրոյց են անում քթի քթի տուած: Եւ հեռուն կանգնած մի աղքատ կնիկ, շորերը պատռած, ոտքերը բոբիկ, մի հիւանդ մանուկ բռնած իր գրկում, եկող գնացողին ձեռք է դէմ անում...

Այժմ ձեզ ցոյց տամ մի այլ տեսարան.
Դարձեալ նոյն քաղքում մի լայն փողոց է,
Եղևնու ճիւղեր աջ ու ձախ փռած.
Մի մեծ բազմութիւն առաջ է անցնում
Դիակառքի չորս կողմը լցուած:

Առջևից գնում են քահանաները, ծաղկեայ փիլոններ ուսերին ձգած և նրանց հետ էլ շատ տիրացուներ, մոմ ու խաչվառներ ձեռքներին բռնած. իսկ վերջից, տեսէք, ինչքա՜ն կառքեր կան, սեազգեստ կանայք մէջը նստոտած. ա՜խ, ինչպէ՜ս տխուր, ինչպէ՜ս վշտալից, հետևում են սրանք մեռելի յետևից:

Դարձեալ մի պատկեր. քաղաքի ծայրում հինգ վեց մշակներ ուսերի վրայ տանում են անբախտ ընկերի դիակ, որ քանի տարի իր երկրից հեռու, ծանր բեռի տակ մաշել է իր կեանք... չըկան յուղարկաւորներ—ո՛չ քոյր, ո՛չ եղբայր, չեն տեսնուում նաև ոչ հայր և ոչ մայր, լուռ է փողոցը, լուռ են և մարդիկ. տեսնում էայս բոլոր միայն պարզ երկինք...

Ահա ձեզ մի այլ պատկեր. բարեկենդան է. մի մեծ զարդարուն սենեակ ձեր առաջ. կանթեղ ու լամպա վառած ձախ ու աջ, մեծ-մեծ հայելիք կախած պատերին, աթոռ, բազկաթոռ ամեն տեղ շարած, իսկ մէջտեղ երկայն սեղանը ձգած,

տասնեակ մարդ ու կին ընթրիքի նստած. ինչեր նրանց առաջը, ահա, չրկան դրած.

Շամպայն ու մալէր, անուշ գինիներ,
Խաշած ու խորված լաւ ձկնեղէններ,
Խաւեար ու պանիր, տապակած հաւեր
Ու քանի՞ տեսակ քաղցրաւենիներ...
Ուտում են, խմում, քահ, քահ ծիծաղում,
Բարեկենդանը լաւ անցկացնում...
Ես էլ մաղթում եմ բարի վայելում։

Ահա նոյն տան կից փոքրիկ խրճիթում, մի թոյլ ու աղօտ ճրագի լուսում, չոր թախտի վրայ մայրը որդոց հետ բարեկենդանի ընթրիքն է անում։ Զրկայ ոչ սեղան, ոչ համեղ ընթրիք, չրկան գինիներ ու քաղցրաւենիք, այլ մի հին մաշած սփռոց առաջները, հացի կտորտանք նրա մէջ դրած ու մի ամանով պանրի փշրտանք, ուտում են անձայն գլուխ քաշ ձգած...

Տխուր է խրճիթը, խոնաւ և անշուք, տխուր են դէմքերը մօրն ու որդոց. միայն չոր փիսօն նրանց մօտ պրպղած՝ շարժում է պոչը, աչքերը պլշած...

Այժմ ծերուկիս թողէք, որ գնամ,
Եկող անգամը շատ բան ցոյց կըտամ.
Դէհ, ճնաք բարեաւ, դուք, ժիր մանուկներ,
Մեծ ու պստիկներ, խելօք ու չարեր։

II.

Անցան ամիսներ, բոլորեց տարին, ահա խեղճ ծերուկս կայ ձեր առաջին. եկէք մանուկներ, իմ աչքի լոյսեր դառնացած սրտիս դուք միակ յոյսեր. դարձեալ բերի ձեզ ես իմ պանարամ, մի քանի պատկեր նորից ձեզ ցոյց տամ.

Պատկեր լաւ ու վատ երբ որ կրտեսնէք,
Աղաչում եմ ձեզ, մտքից մի հանէք։

Դէհ, սկսում է։

«Ամառը սարում»։

Տեսէք այս սարը կանաչով պատած, այստեղ ու այնտեղ վրաններ թողած, վրանի դիմաց հայ, թուրք գիւղական մի մի գործ ձեռին բանի է նստած, որը տաշում է, որը սրում է, որը կար կարում, տղին օրօրում, որը հաց կամ կաթ տաքացնում, կարագ ու պանիր, մածուն պատրաստում։

Ահա քիչ հեռու նրանց տաւարը, ոչխարի հօտեր, ձիերի բոլուկներ, մինչև փորի տակ խոտերում ծածկւած կամ գըլգըլան ջրի ափը հաւաքւած, տկզած կանգնել են, չեն շարժւում տեղից, ինչու-որ կուշտ են ու գոհ վիճակից։

Եւ գիտէք ով է մոթալ փափախով,
Հաստավիզ մարդը իր դագանակով,
Որ աչքը տնկած սարի լանջերին,
Մի բան է երգում զիլ-զիլ խոտերին.

Դա է նախրապանը—տէրը տաւարի,
Որ սար է գալիս ամենայն տարի։

III.

Ահա նոյն նախիր, նոյն հօտն ու ձիեր, բայց ոչ թէ ամառը սարի խոտերում և ոչ քչքչան ջրի ափերին, այլ ցուրտ ձմեռը գիւղի գոմերում։

Հալւել է միսը, ոսկրները ցցւել, տկզած փորերնին մէջքներին կպել, քաղցած է տաւարը՝ խոտ չրկայ տալու, սառել են դաշտեր՝ դարունն է հեռու։

Կրծում են սովից մսուրի փայտեր,
Դոփում կճղակով, պլըշում աչքեր,
Մայում, բառաչում, վիզերնին ծռում,
Թուլացած ընկնում, քաղցից սատակում։

Իսկ մեր գիւղացին, ո՜հ, ինչպէս խղճուկ
Կանգնած նայում է ու թափում արցունք...
Մեծ է նրա վիշտ, մեծ է նրա ցաւ,
Երբ մի անասուն իր ձեռքից անցաւ։

IV

Ահա ձեզ մի ուրիշ պատկեր.
«Գարնան սկզբում գիւղացու յոյսեր»։

Գարուն է, գարուն, ինչ քաղցրիկ անուն։ Արտերը կանաչել են, ծառերը ծաղկել, ծաղկունքը բացուել, ջրերը փուել, գեղջուկ մշակը յոյսերով լցուել։

Կըգայ ամառը՝ կըգեղնի ցորեն, հունձը կըհնձէ, կըժողովէ ամբար, կըհանեն պտուղք՝ թափ կըտայ, կըլցնէ կթոց, կըկախէ շարեր։

Խոտ կայ տաւարին, դարման ձիերին,
Ծաղիկներ մեղուին, մեղր մանուկներին.
Ո՜հ, մեր գիւղացին ինչպէս երջանիկ
Կանցնէ այդ տարին...

V.

Պատկերը փոխուեց։

Ահա նոյն գեղջուկ ամառ ժամանակ, տխուր նստած է իրան կտրի տակ. ուր է նրա յոյս, իր արտն ու այգին, ինչու է ժանգռտ մանգաղ—գերանդին։

Մարախը եկաւ արտերը կերաւ,
Մարախից պրծած՝ կարկուտը տարաւ.
Թրթուռը խժռեց ծառերի տերև,
Պտուղ չըմնաց՝ ողջ այրեց արև։

Սոված մեղուներ թռան փեթակից,
Բճիճը մնաց զուրկ ծորան մեղրից.
Դաշտը չորացաւ՝ խոտ չըկայ կովին,
Ամբարն է դատարկ՝ մահ է գեղջուկին.

Ո՜հ, ինչպէս թշուառ, ինչպէս յուսահատ
Կանցնէ այդ տարին...

VI.

Նայեցէք հովտի փոքրիկ քաղաքին, ուր սև-սև ամպերը սարերի նման կանգնել են գլխին։ Բնութիւնը խաղաղ է, խաղաղ

է և գետը, որ սարի կողմից իջնում է քաղաք, ջրում պարտէզներ, պարտում ջաղացք, վշշալով անցնում, կորչում ձորերում, ամենայն տարի յոյս և կեանք բերում։

Ահա ամբոխը կանգնած գետափին, ուրախ է հոգով, երկնից ամպերին, որ անձրև կըտայ, կըջրէ երկիր, կեանք կառնէ մարդը, դաշտն ու այգին...

Իսկ փոքրիկ տղայք, տես, ինչպէս անհոգ
Խաղում, վազվզում են, «անձրևը» երգում,
Որ ցած գայ ջրէ, բացնէ կանաչ խոտ,
Աւլէ փոշիներ ու մաքրէ վատ օդ։

VII

Ահա նոյն քաղաք, նոյն սև-սև ամպեր, որից թռչում են կրակէ նետեր, անձրևի փոխանակ կարկուտ է թափւում, որոտում երկինք, երկիր դղրդում։

Մարդիկ հաւաքւած իրանց տները, քարացած նայում են այդ ահեղ պատժին, որ փշրում է, ջարդում, տուն ու տեղ աւրում, այգի ու պարտէզ խլում, հետը տանում։

Լալիս է մանուկ մօր վզին փաթթած,
Բառանչում է տաւարը դրսում մնացած,
Գոռում գոչում է գետը կատաղի,
Ա՜հ, սարսափ պատում ամեն սրտերի...
Եւ ահա յանկարծ մի ձայն է լսւում,
Մի ձայն գուժաբեր, ամենքին հասնում.
«Հեղեղ, հեղեղ, կանչում են մարդիկ,
Ա՜խ, մեռանք, կորանք, խնայէ, երկինք»...

VIII։

Հեղեղը եկաւ, հեղեղը գնաց,
Բայց տեսէք ահա տեղը ինչ մնաց.

Ահա մի ծերուկ խոտած մի դիակ, կիսամեռ ընկել էր իր փլած տան տակ- նրանից հեռու գետնին տարածւել տասնամեայ մանուկ՝ մօր հատիկ զաւակ։

Ահա քոյր, եղբայր միմեանց գրկած, ընկել են իրանց ծնողների կրծքին, իսկ այնտեղ խեղդել սկեսուրն ու հարս, օրօրոցում կապած մանուկը կողքին...

Սգում է քաղաքը, սգում են ամենքը, որը իր հայրը, որը իր որդին, քոյրը իր միակ եղբայր թանկագին։

Ողբի լացի ձայն երկինք է հասնում, մեծ ու փոքրի սիրտ շարժում, մղկտում...

Ա՜խ, թողէք ծածկեմ այս տխուր պատկեր,
Պատկեր սոսկալի, արիւնով ներկւած,
Որի ժանտ տեսիլ դեռ մինչև այսօր
Սարսափ է ազդում դժբախտ բնակչաց։

1. Համեմատեցէք իրար հետ հակադիր պատկերները։

34. ԳԻՒՂԻ ԺԱՄԸ

Տա՜ն-դօ, տա՜ն-դօ... Նազլու, վեր կաց,
Արևն արդէն մայր է մտնում.
Տես, խաթունն էլ գործը պրծած
Փողոցումն է, ժամ է շտապում։
Ժամը տւին՝ տա՜ն-դօ, տա՜ն-դօ...
Տէր, փառքդ շատ տա՜ն-դօ տա՜ն-դօ...

Շուտով նախիրն հանդից կըգայ,
Գնանք որ շուտ էլի յետ գանք,
Կովը կթենք, թը՜ռ-թը՜ռ կաթ տայ,
Կովը կթենք, մեր ցաւն հոգանք։

Ա՜խ, Նազլու ջան, չես իմանում՝
Էգուց էլի աղան կըգայ։
Նրա սիրտը միշտ անկշտում,
Էլ ամպի պէս պիտի գոռայ.

«Շուտով Գրիգոր, փողերը բեր,
Է՞լի չրկայ, կովդ հանի...
Ա՜խ, Նազլու ջան, այն ի՞նչ բան էր,
Մի՞տդ է հերու... Տէր, դու փրկի»։

Հայրիկդ արդէն գնացել է,
Որ փող ճարի. ե՞րբ պիտի գայ,
Տեսնենք մէկը խղճացե՞լ է...
Ա՜խ, սև օրը Տէրն էլ չըտայ։

Շուտով, Նազլու, գնանք ժամը,
Աղօթք անենք. քո ձայնն Աստուած
Շուտ կըլսի, այս անգամը
Մեզ չի թողնի անկով, անհաց...

Բարի մարդիկ միշտ կըլինեն,
Հայրիկդ հետը փող կըբերի,
Փողը կըտանք չար աղային,
Որ մեր հորթուկն էլ չըխլի...

Տա՜ն-դօ, տա՜ն-դօ... Նազլու, գնանք,
Արևն արդէն մայր է մտնում,
Էգուց տեսնենք, որ վեր կենանք,
Ի՞նչ նոր արև է մեզ ծագում...
Ժամը տւին՝ տա՜ն-դօ, տա՜ն-դօ...
Տէր, փառքդ շատ, տա՜ն-դօ, տա՜ն-դօ...

35. ՊԱՅԹԻՆ ՀԱՆՔՈՒՄ

I.

Ես բանում էի հանքի խորքում. գործիքով քանդում էի ապառաժը։ Ընկերս ծալապատիկ նստած՝ ճրագը ձեռքին լոյս էր անում։

Յանկարծ մեր ականջին հասաւ մի խուլ հեռաւոր դղրդիւն։

—Ի՞նչ էր,—բացականչեց ընկերս, ոտի կանգնելով վախեցած.

Մեր մօտից մի մարդ անցաւ վազելով. նա հևում էր։

—Ի՞նչ էք կանգնել անշարժ—գոչեց նա առանց կանգ առնելու—չլսեցի՞ք... գազի պայթիւնը... Շուտ փախէք դուրս։ Եւ անհետացաւ։ Նոյն րոպէին մեր ճրագները հանգան և մենք թաղուեցինք թանձր խաւարի մէջ։ Օդը սաստիկ խեղդող դառաւ։

Գլխապատառ վազում ենք, սայթաքելով ամեն մի քայլափոխին։

Բայց ո՞ւր ենք վազում։ Մեր աջ ու ձախից ձգւում են անհաշիւ ոլորուն անցքեր, որոնք նոյնպէս թաղուած են խաւարի մէջ։ Նրանց վրայ գտնւում է նոյն տեսակ մութ անցքերի մի ուրիշ շարք, ապա երրորդը, չորրորդը։ Ի՞նչպէս գրանենք մեր ճանապարհը այդ ահագին լաբիրինտոսի մէջ, այս սոսկալի ստորերկրեայ աշխարհում, երբ զրկւել էինք մեր անբաժան ընկեր՝ լապտերի լոյսից։ Սովորական ժամանակ այդտեղ դէս ու դէնից լուսաւոր կէտեր են երևում բանւորների լապտերները։ Իսկ այժմ... Մարել են մեր այդ կենսատու աստղիկները, իրանց հետը տանելով մեր կեանքը ու մեր յոյսերը։

Վազում ենք սակայն։ Յանկարծ մեր առաջ թանձր ծուխի մի պատ է բարձրանում։ Մռայլ, գարշելի հոտ ունեցող խաւարը պատել է մեզ չորս կողմից, այրւում է մեր դէմքերը։ Գլուխս պտոյտ է գալիս։ Խեղդւելու վրայ ենք։ Եւ խելագարի պէս յետ ենք վազում այս դժոխքից։

Բայց ուր էլ որ գնում ենք, այդ անիծած գազերը անանցանելի պատնէշի նման մեր ճանապարհը կտրում են ու յետ հրում։

Միևնոյն տեղում չենք կարողանում մնալ, դէս ու դէն ենք նետւում, շրջում, պտտւում այդ մութը հանքում, որը չի ուզում մեզ բաց թողնել ու պինդ բռնած պահում է մեզ իր մռայլ ճիրաններում։

II.

Բոլորովին յոգնած և յոյս կտրած՝ ես մեքենաբար ձեռքս տանում եմ գրպանս։

Ի՞նչ կայ այնտեղ. ժամացոյցս. մի հասարակ պարզ ժամացոյց ժանգոտուած ու մաշուած, որի վրայ հանքը մի անջնջելի դրօշմ է դրել։

Բայց զարմանալի է. այդ ժամացույցը այժմ ինձ վրայ մի տարօրինակ տպաւորութիւն է անում։

Նա միակն է այս քաղաքի մէջ, որ մի կանոնաւոր, խելացի բան է ներկայացնում։ Նա մեզ միացնում է ամբողջ աշխարհի հետ։ Նրա չըխկչըխկոցը զարմանալի կերպով ինձ հանգստացնում է ու սիրտ է տալիս։ Նա կենդանի է, նա խօսում է։ Կարծես ասում է ինձ. «Պինդ կաց սիրելիս, խելքդ մի կորցնի, աշխատի, աշխատի յարատև ու կանոնաւոր և կըփրկուես»...

Ա՜խ այդ բարերար չըխկչըխկոցը։

Ի՜նչքան նա սփոփել է մեզ բոլորիս, մեր այդ օրերի գերեզմանային դաժան կեանքի ժամանակ, երբ մենք սաստիկ սովի, ծարաւի ու յոգնածութեան ազդեցութեան տակ կատարեալ յուսահատութեան էինք հասնում։ Մեզնից ամեն մէկը վերցնում էր նրան, շոյում, փայփայում, ականջին դընում, լսում ու անվերջ լսում և չէր ուզում բնաւ բաժանուի։ Կատարեալ երեխայ էինք դարձել։

Ես շուտ-շուտ ժամացույցս լարում էի, որ չըկանգնի։

III.

Ժամացույցիս չըխկչըխկոցը վերադարձրեց ինձ սառնասրտութիւնս։

—Չէ, պէտք չէ որ յուսահատւիմ,—ասի ինքս ինձ։

Ընկերներս անշարժ պարկած էին յուսահատ։ Վճռեցի յոյսի մի նշոյլ վառեմ նրանց սրտում և ստիպեմ շարժուելու։

—Լսեցէք, ընկերներ, մեզ կանչում են. հանքը զարկում են,—գոչեցի ես։

«Հանքը զարկում են». ի՜նչ գրաւիչ խօսքեր մեզ պէս կորած, կեանքից կտրուած մարդկանց համար։

Դա նշանակում էր, որ այնտեղ, վերևում, ուր որ փայլուն արեգակը շոյում է երկիրը իր տաք ոսկեզօծ ճառագայթներով, այնտեղ արդէն մտածել են մեր մասին և ամեն ջանք գործ են դնում մեզ ազատելու։

«Հանքը զարկում են». սա մի ձայն է, որ երաժշտութիւնից էլ քաղցր է, որ իջնում է վերևից պահապան հրեշտակի նման մեր յոյսերը վառ պահելու և յորդորելու, որ մենք համբերութեամբ տանենք մեր բոլոր նեղութիւնները, մինչև որ մեր փրկիչները գան հասնեն մեզ։

Հանքը զարկելը հաղորդակցութեան մի միջոց է, իր տեսակի մի հեռախօս, իհարկէ շատ աւելի պարզ ու հասարակ. նրա միջոցով հանքահանները իմաց են տալիս իրար, երբ մէկի հետ դժբախտութիւն էպատահում, զարկելով այդ նպատակով շինուած խողովակը, որ իրար է միացնում սրահները։ Նոյն բանն են անում վերևի յարկից՝ վտանգաւոր մասին տեղեկութիւն ստանալու համար։

Եւ տեսէք ի՜նչ տարօրինակ բան է մարդու երևակայութիւնը։ Այդ ձայնը, որ գոյութիւն չունէր, նրանք բոլորն էլ պարզ լսում էին։

Արագ ոտի թռան, և նորից ճանապարհ ընկանք։

IV.

Գնում ենք անվերջ նեղ անցքերով, բարձրանում ենք, իջնում, մագլցում, սահում։

Սրահի վերի մասում մի ինչ որ պատնէշի ենք հանդիպում, ձեռքերով շօշափում ենք և ամբողջ մարմնով ցնցւում։ Դա դիակների մի ամբողջ դէզ է՝ կուտակուած և դէս ու դէն ցրուած։

Դիակները դեռ սառած չեն։ Պարզ էր, որ մեր գալուց քիչ առաջ էին մտել իրանց յաւիտենական քունը։ Խեղճերը. երևի նրանց բանելու տեղը շատ մօտիկ է եղել պայթումի տեղից և մեզանից շուտ են ենթարկւել վատ գազերի ազդեցութեանը։ «Անշուշտ մեզ էլ նոյն վիճակն է սպասում մօտ ապագայում», մտածում եմ ես ու դարձեալ ցնցւում։

Շտապով թողնում ենք այդ սոսկալի վայրը և գնում... անվերջ գնում։

Ոտներս տանում են ինձ բոլորովին մեքենաբար. էլ չը գիտեմ, թէ ո՞րտեղ ենք գտնւում մենք, ո՞ւր ենք գնում։ Մրա-

քերս չեմ կարողանում կենտրոնացնել մեր դրութեան վրայ, որ որոշեմ անելիքս։ Շարունակ մտածում եմ իմ սիրելիների մասին. արդեօք բախտ կունենամ նրանց նորից տեսնելու։ Ի՞նչքան լաց է լինում երևի կինս՝ փոքրիկս գրկած, ինձ անշուշտ կորած համարելով։

Բոլորս լուռ ենք, տխուր մտածմունքների մէջ խորասուզուած։

Յանկարծ մեր առաջ մի բան է շարժւում մթութեան մէջ։ Եւ լսւում է մի ձայն, մի մարդկային ձայն, որի մէջ մի անսահման ուրախութիւն էր հնչում.

- Ահա, ահա, գալիս են մեզ ազատելու։

Այդ մի ձայնից յետոյ լսւում է երկրորդը, երրորդը։ Նրանք հինգ հոգի էին։ Տեղներից վեր են կենում և վազում դէպի մեզ։

Մթութեան մէջ փնտռում ենք իրար, ձեռներս պարզած, աչքակապուկ խաղացող երեխաների նման։ տալիս ենք մեր անունները և յայտնում, որ մենք էլ նրանց նման հանքի դրժբախտ բանտարկեալներն ենք։ Դժւար է նկարագրել խեղճերի յուսախաբութիւնը։

Առաջարկեցինք, որ մեզ միանան ու գնանք միասին հանքի ելքը փնտռելու։ Եւ գտանք... քսան օր դեռևի տակ խաւարի մէջ անտանելի տառապելուց յետոյ։

36. ԹԻԹԵՂԱԳՈՐԾԻ ՄԱՀԸ

Հսկայ շինութեան բարձր տանիքին
Վաղ առաւօտից նա աշխատում էր,
Կարիքն ու հոգսը իր ընտանիքի
Նրա եռանդը կրկնապատկում էր։

Երկար աշխատեց... և արեգակը
Մօտ էր կէսօրին՝ ճաշելու ժամին.
«Շտապիր, ճաշի է ժամանակը»,
Ասաց նա ուրախ իր հարևանին։

Յանկարծ սայթաքեց բարձր տանիքից,
Տապալուեց գետին ջարդուած դիակով.
Մարդիկ սարսափած այս դժբախտ դէպքից,
Կանգնել—դիտում են ապուշ հայեացքով։

Նոքա համակուած կեղծ ցաւակցութեամբ,
Հետաքրքրուած հոսող արիւնով,
«Ափսոս» են ասում անամօթութեամբ,
Ու անցնում, դէպքը մոռացման տալով։

Եւ միայն կինը ու քաղցած որդիք
Չեն մոռանալու աշխատաւորին,
Թոյն—ատելութեամբ պիտի անիծեն
Բիրտ ու քարացած խիղճը մարդկային։

37. ՄՈՒՐԱՑԿԱՆ

Ես անցնում էի փողոցով։ Ինձ կանգնեցրեց մի ծեր, ուժից ընկած մուրացկան։ Աչքերն արտասուալից, ուռած ու կարմրած, շրթունքները կապտած, հագին լաթեր, մարմնի վրայ անմաքուր վէրքեր։

Օ՜, ինչ այլանդակ կերպով մաշել-կերել էր այդ անբախտ արարածին աղքատութիւնը։

Նա ինձ պարզել էր իր կարմրած, ուռած ու կեղտերով ծածկուած ձեռքը։ Նա հառաչում էր, նա խեղդուած ձայնով ողորմութիւն էր աղերսում։

Սկսեցի գրպաններս տակն ու վրայ անել։ Բան չգտայ—ոչ փող, ոչ ժամացոյց, ոչ էլ նոյն իսկ թաշկինակ. հետս ոչինչ չէի վերցրել։ Իսկ մուրացկանը շարունակ սպասում էր... և նրա կարկառած ձեռքը թոյլ կերպով երերւում ու ցնցւում էր։

Ինքս ինձ կորցրած, շփոթուած՝ ես ամուր սեղմեցի այդ դողդոջուն, այդ կեղտերով ծածկուած ձեռքը.—«Թողութիւն արա, եղբայր, ես ոչինչ չունիմ»։

Մուրացկանն իր կարմրատակած աչքերն յառեց վրաս։ Նրա կապտած շրթունքները քմծիծաղ տուին, և նա էլ իր կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները։

Է՜հ, ինչ արած, եղբայր,—ծամծմեց նա,—դրա համար էլ շնորհակալ եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբայր»։

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից։

38. ՄԵՌԵԱԼ ՏՈՒՆ

Մեր բանտն ընկած էր ամրոցի ծայրին, հէնց պատնէշի մօտ։ Երբեմն ցանկապատի արանքովը լոյս աշխարհին ես նայում, որ մի որևէ բան տեսնես։ Տեսածդ լինում է միայն երկնքի մի կտորը, հողի բարձր պատնէշը՝ վրան խոտեր բուսած և պատնէշի վրայով օր ու գիշեր յետ ու առաջ քայլող պահապան զինուորները։ Եւ միշտ էլ մտածում ես, թէ կանցնեն ամբողջ տարիներ, դու կրգաս մտիկ տալու ցանկի արանքովը ու կըտեսնես նոյն պատնէշը, նոյն պահապան զինուորներին և երկնքի նոյն փոքրիկ կտորը, ոչ այն երկնքի՝ որ բանտի վերևն է, այլ ուրիշ, հեռաւոր, ազատ երկնքի։ Երևակայեցէք մի մեծ բակ, որի երկարութիւնը մօտ երկու հարիւր քայլ է, իսկ լայնութիւնը հարիւր յիսուն և ամբողջովին շրջապատուած է անկանոն վեցանկիւն ձև ունեցող պատուարով։ Պատուարը շինուած է սրածայր բարձր սիւններից, որոնք կողքէ կողք ուղիղ թաղուած են հողի մէջ և ամրացրած են խաչաձև տախտակներով։ Ահա արտաքին շրջապատը։

Շրջապատի մի կողմում շինուած են ամուր մեծ դռներ, որոնք միշտ փակ են և պահպանւում են զինուորներով։ Այդ դռները բացւում էին միայն այն ժամանակ, երբ բանտարկեալներին աշխատանքի էին տանում։ Այդ դռներից այն կողմը սկսւում էր խնդագին, ազատ—անկախ աշխարհը, ուր մարդիկ ապրում էին սովորականի պէս։ Շրջապատի այս կողմում այդ աշխարհը պատկերանում էր, ինչպէս մի առասպել։

Բանտարկեալներն ունէին իրանց առանձին աշխարհը, որ ոչ մի բանի նման չէ, իրանց առանձին օրէնքները, հագուստը, բարքերն ու սովորութիւնները և կենդանի-մեռեալ տունը։ Այս կեանքը բացառիկ է, նրա բնակիչները առանձին տեսակի։

Ահա այս առանձնակի անկիւնն է, որ ես ձեռնարկում եմ նկարագրելու։

Երբ մտնում էք շրջապատից ներս, տեսնում էք մի քանի շէնքեր։ Ներսի լայն բակի երկու կողմովը ընկած են գերաններից շինած երկար մի յարկանի երկու շարք տներ։ Դրանք իսկական բանտերն են։ Այդտեղ են ապրում կալանաւորները՝ կարգերի բաժանուած։ Շրջապատի խորքում կայ էլի մի այդպիսի տուն. դա խոհանոցն է, որ բաժանուած է երկու մասի։ Այնուհետև գալիս է մի երրորդ շէնք, որի մէջ գտնւում են մառանները, շտեմարանները, պահեստները։ Բակի մէջտեղը դատարկ է և կազմում է մի հարթ, բաւական մեծ տարածութիւն։ Այստեղ կանգնում են կալանաւորները, երբ նրանց հաշւում և անուններով կանչում են առաւօտը, կէսօրին և երեկոյեան, երբեմն էլ օրական մի քանի անգամ, նայելով թէ պահապանները որքան կասկածոտ են և որքան շնորհք ունեն համարելու։ Այս շէնքերի և ցանկապատի միջև էլի մի մեծ տեղ էր մնում։ Բանտարկեալներից ոմանք, որոնք աւելի խորշող ու մռայլ բնութիւն ունէին, ազատ ժամերին թափառում էին այստեղ և իրանց մտքերի յետևից ընկնում։ Այս շրջագայութիւնների ժամանակ պատահելով այդպիսիներին, ես սիրում էի զննել նրանց խոժոռ, տանջած դէմքերը և գուշակել, թէ ինչ են մտածում։ Մի աքսորական ազատ ժամերին սիրում էր ձողերը համարել։ Այս ձողերը հազար հինգհարիւր հատ էին. նա հաշւել էր։ Ամեն մի ձողը նրա համար մի օր էր նշանակում։ Այդ ձողերով նա հաշւում էր իր բանտարկութեան օրերը։ Հոգով ուրախանում էր, երբ վերջացնում էր վեցանկեան որևէ կողմը։ Դեռ շատ տարիներ նա պէտք է համբերէր. բանտում ժամանակ շատ կար համբերութեան սովորելու։

Մի օր տեսայ՝ ինչպէս ընկերներին մնաս բարով էր ասում մի կալանաւոր, որ քսան տաժանակիր տարիներ էր անցկացրել և վերջապէս ազատւել էր... Կային մարդիկ, որ յիշում էին, թէ ինչպէս նա առաջին անգամ մտաւ բանտը ջահել, անհոգ։ Նա չէր մտածում ոչ իր յանցանքի և ոչ էլ պատժի

մասին։ Այժմ նա դուրս էր գնում իբրև ալևոր ծերունի, խոժոռ ու վշտահար դէմքով։ Նա լուռ ու մունջ անցաւ բոլոր վեց սենեակները։ Ներս մտնելով նա աղօթք էր անում պատկերի առաջ և յետոյ մինչև մէջքը կռանալով խոր գլուխ էր տալիս ընկերներին և խնդրում, որ իր արած վատ արարքները ներեն։

Մի անգամ էլ երեկոյեան կալանաւորներից մէկին, որ Սիբիրի ունևոր գիւղացի էր, կանչեցին դրսի դուռը, կէս տարի առաջ նա լուր էր առել, որ իր կինն մարդի էր գնացել և սաստիկ տխրել էր։ Իսկ այժմ ինքը կինը մօտեցաւ բանտին, դուրս կանչեց և ողորմութիւն տուեց նրան։ Նրանք մի երկու բոպէ խօսեցին, երկուսն էլ փոքր ինչ լաց եղան և ընդմիշտ բաժանուեցին։ Ես տեսայ նրա դէմքը, երբ յետ էր դառնում... ճիշտ որ այստեղ կարելի էր համբերութեան սովորել։

39, ՄԽԻԹԱՐԱՆՔ

Կացարանս նեղլիկ մի խուց,
Խոնաւ, անօդ ու անլոյս.
Սպասում եմ էսօր-էգուց,
Բայց փրկութեան չըկայ յոյս...

Միայն բանտի «խելօք» ծառաս
Վկայ իմ լուռ տանջանքին,
Յոյս է տալիս, «հոգ չէ, աղաս,
Կըսովորէք էս կեանքին»...

40. ԳԵՐԻ ԱՐԾԻՒԸ

I.

Մի վիրաւոր արծիւ բերել էին մեր բանտը։ Բանտարկեալներս շրջապատեցինք նրան։ Չէր կարողանում թռչել. աջ թևը կախ էր ընկել գետնին, մէկ ոտն էլ վնասուած էր։ Թրուչունը կատաղի հայեացք էր ձգում շուրջը, դիտում էր հետաքրքիր ամբոխը և բաց էր անում իր կեռ քիթը, միշտ պատրաստ թանկ ծախելու իր կեանքը։

Երբ բոլորն էլ նայելուց կշտացան ու սկսեցին ցրուել, նա կաղալով, մի ոտի վրայ ոստոստելով և առողջ թևը թափ տալով, քաշուեց բանտի բակի ամենահեռաւոր ծայրը և այնտեղ կուչ եկաւ անկիւնում։

Այդտեղ նա ապրեց մօտ երեք ամիս և ամբողջ ժամանակը դուրս չեկաւ իր անկիւնից։

Սկզբում յաճախ գալիս էինք նրան նայելու և զրգռում էինք շանը նրա դէմ։ Շունը գազազած վրայ էր ընկնում, բայց վախենում էր մօտենալ։ Արծիւը հպարտ ու վայրագ, վիրաւորուած արքայի պէս, կծկուած իր անկիւնում, դիտում էր հետաքրքիր այցելուներիս։

Սկզբում նա ուտել էլ չէր ուզում, մի քանի օր բան չառաւ բերանը. վերջը ուտում էր, բայց ոչ մեր ձեռքից, ոչ էլ մեր ներկայութեամբ։ Երբ տեսնում էր մօտը մարդ չըկայ, մի քանի քայլ հեռանում էր իր անկիւնից և կաղալով անցնում էր պարսպի տակով, այսպէս մի քսան քայլի չափ, յետոյ դառնում էր յետ, նորից գնում, նորից յետ գալիս, կարծես զբօսնելիս լինէր։ Բայց հէնց որ հեռից նկատում էր մէկին, իսկոյն կաղալով ու ոստոստելով, շտապում էր իր տեղը և գլուխը յետ գցած, կտուցը լայն բաց արած, պատրաստւում էր կռուելու։ Ոչ մեր քաղցր խօսքերը, ոչ մեր փաղաքշանքները չէին մեղմացնում նրա սիրտը։

Ոչ ոքի չըհաւատալով և ոչ ոքի հետ չըհաշտուելով, մենակ և չարացած սպասում էր նա մահուան։

II.

Զրգիտեմ ինչպէս, մի օր յանկարծ բանտարկեալների մէջ միաք ծագեց, թէ հարկաւոր է բաց թողնել նրան։

—Թէ սատկելու է, թող բանտում սատկի,—ասում էին մի քանիսը։

—Իհարկէ, ազատ, անկախ թռչուն է, բանտին չի ընտելանայ—պնդում էին միւսները։

—Մեզ նման չի,—աւելացրեց մէկը։

—Բան ասիր. սա հօ թռչուն է, իսկ մենք մարդ։

—Արծիւը, ախպէր, անտառների թագաւորն է։

Ճաշից յետոյ, երբ աշխատանքի գնալու զանգակը տւին՝ բանտարկեալներս արծւին տարանք մեզ հետ։ Նրան գրկողը պինդ սեղմել էր կուրցը, որովհետև սաստիկ դիմադրում էր և ուզում էր գլուխը ազատել։ Հասանք մի բարձր տեղ, ամենքս էլ հետաքրքրութեամբ կամենում էինք տեսնել, թէ ուր պիտի գնայ արծիւը։ Զարմանալի բան. բոլորս էլ մի բանով բաւական էինք, կարծես մենք էինք ազատութիւն ստանում...

—Սրան տես է. անպիտանին բարութիւն ենք անում, դեռ կծում էլ է,—ասում էր նրան տանող բանտարկեալը, գրեթէ սիրով սեղմելով թռչունին։

—Դէ, բաց թող—կանչեց մէկը։

—Ազատութիւն տուր, իսկական ազատութիւն.—աւելացրեց մի ուրիշը։

Արծւին գրկողը նրան գցեց մեր բարձրութիւնից ցած, դէպի մեր ոտքերի տակ տարածւող դաշտավայրը։

Աշնան վերջերն էր, օրը ցուրտ էր և մառախլապատ։ Քամին սուլում էր մերկ դաշտերի վրայ և խշխշում էր դեղնած ու չորացած, փշոտ ու վայրի խոտերի մէջ։ Արծիւը սլացաւ ուղիղ, թափ տալով հիւանդ թևը և կարծես շտապելով, որ մեզնից հեռանայ ուր որ էլ լինի։ Բանտարկեալները հետաքրքրութեամբ հետևում էին, թէ ինչպէս սևին էր տալիս նրա գլուխը չորացած խոտերի միջով։

—Մտիկ է,—մտածկոտ արտասանեց մէկը։

—Ինչպէս է փախչում,—աւելացրեց միւսը։

—Իսկի յետ էլ չի նայում։

—Զըլինի դու կարծում էիր, նորից յետ պիտի գայ ու շնորհակալութիւն յայտնի,—ծաղրեց մի ուրիշը։

—Ա՛յ, սրան ասում են ազատութիւն...

—Ազատութիւնը լաւ բան է։

—Էլ չի երևում...

—Ի՞նչ էք կանգնել։ Մարշ.—կանչեցին մեզ ուղեկցող պահապան զինուորները, և բոլորս լուռ քարշ եկանք դէպի մեր տաժանակիր աշխատանքը։

Համեմատեցէք ազատ արծւի և նրան ազատութիւն տուող բանտարկեալների վիճակը։

Սիրելի Թոյրիկ

Ահա երկու ամիս է, որ ես գտնւում եմ նոր բնակարանում։ Գորշերս շատ յուզող են գնում։ Հշակերպական կեանքը շատ ուրախալի կողմեր ունի։ Ուսուցիչներս և ընկերներս սիրալի վերաբերմունք են ցուցնում։ Տղայնիս է պակաս օգտակարութեան դատնութիւնները։ Մի ամիս յետոյ գալիս է Ծնունդեան արձակուրդները։ Որպէսզի ուրախ եմ, որ նորից կարելի եմ սիրասուն դէմքերը—Մայրիկս, քեզ, փոքրիկ Հշուրին։ Յուսով եմ, որ դու ևս էլ մոռացել ինձ և անհամբեր սպասում էլ եմ քո վերադարձին։

Աղրիր, որ այս անգամ անկարող իմ մանրամասնագրէն գրեց ֆիզ։ Գործերս շատ են. սպասրարարում իմ կիսամեայ վերադարձումների։

Ընդունիր կարօտագին բարևներս և համբոյրներս

քո Սիրամ

1913 թ. դեկտեմբերի

Թիֆլիս։

41. ԳԵՐԻ ԱՐԱԳԻԼԸ

Գերի արագիլն ինչպէս բանտարկուած,
Բարձր պարսպի յետևն է փակուած.
Կուզէր նա թռչել ու անցնել ծովեր,
Բայց, աւաղ, խեղճի խուզած են թևեր։

Իր անզօրութիւնը նա լաւ է զգում,
Եւ թևերի տակ գլուխն է ծածկում,
Կըցանկար առաջ նայել նա սիրով,
Բայց փակուած է նա ամուր պատերով։

Կարող չէ տեսնել նա երկնակամար
Իր մութ, նեղ բանտից, — բայց ինչու համար.
Այնտեղ թռչում է ազատ կարաւան,
Իսկ նա մատնուած է չար գերութեան...

Եւ նա անհամբեր սպասում է վշտով,
Որ մէջքին բուսնին թևերը շուտով.

Նա այն ժամանակ չար գերութիւնից,
Կըթռչի ազատ աշխարհ յուսալից։

Եւ ահա սառն աշունն է փչում,
Արագիլները տաք տեղ են թռչում.
Թշուառ, ինչպէս ստրուկ, նա անհամարձակ,
Վշտագին ու որբ, շրջում է մենակ։

Լսում է ահա վերից կռնչիւն,
Գնում է բարձրից կռունկների չուն,
Ականջ է դնում չարաստանջ գերին,
Ազատ երամի ուրախ երգերին։

Կամենում է նա նորից փորձ փորձել,
Խուզած թևերը բարձր տարածել,
Բայց այլոց նման, աւաղ, նա ազատ
Կարող չէ սլանալ, երկիրն հարազատ։

Անբախտ արագիլ, խեղճ կալանաւոր,
Էլ այն յաղթական դու չես թևաւոր,
Թէ զօրանան էլ թևերդ ուժգին,
Զոհ պիտի լինին անգութ դանակին։

Դիտեցէք այս պատկերը ի՞նչ են մտածում թռչնոց երեխաները, պատմեցէք եւ գրի առէք։

42. ԱՄԵՆԻՑ ԹԱՆԿԸ

Տուր ինձ այն, ինչ որ քեզ համար ամենից թանկ է, և ես կբժշկեմ քեզ,—ասաց բարի կախարդուհին վիրաւոր թռչնակին, որը մենակ ընկած էր ծովի ափին, մի ամայի տեղ, և մեռնում էր։ Արիւնը կաթիլ-կաթիլ դուրս էր հոսում նրա կրծքի վրայ գտնուող վէրքից և թափւում էր աւազի վրայ։ Նրա փոքրիկ մարմինը հեռդհետէ դառչում էր։

«Ամենից թանկը, դա իհարկէ կեանքն է—մտածեց թռչնակը։ Բայց բարի կախարդուհին արժանի կըհամարէ ինձանից վերցնել կեանքս, որը հէնց ինքն է խոստանում տալ։ Բարի կախարդուհին, երևի կատակ է անում»։

Եւ մարող աչքերով նայելով դէպի նա՝ թռչնակը շշնջաց.

—Լաւ, բժշկիր։ Կրտամ քեզ ամենից թանկը։ Կախարդուհին իր գաւազանով դիպաւ նրա վէրքին,—վէրքն առողջացաւ և թռչնակը ցնծագին թրպրտաց, և ոտքի կանգնեց։

—Դէ, տուր ինձ քո թևերը,—ասաց կախարդուհին։

—Ո՛չ,—ասաց թռչնակը, ցնցուելով,—ո՛չ, անկարող եմ։

—Մի՞թէ նրանք ամենից թանկը չեն քեզ համար։

—Հէնց այդ պատճառով էլ նրանց չեմ կարող տալ,—կամաց շշնջաց թռչնակը։—Աւելի լաւ է այնպէս արա, որ ես մեռնեմ։ Լաւ է բոլորովին չապրել՝ քան թէ ապրել և չըթռչել։

—Թռիր,—ասաց կախարդուհին,—ես չեմ ուզում քո մահը։ Բայց յիշիր, որ ամենից թանկը միշտ էլ թանկ է կեանքից։

43. ԿԱՐՕՏ

I.

Լուսամուտս բաղխում էր մի կին։

Գառաւ էր նա, գունատ ու մաշւած դէմքով։

—Ի՞նչ է կամենում, մտածում էի ես։

Մօտեցայ լուսամուտին և հարցական նշան արի։

—Խնդրեմ ներս թող մի րոպէ, աղերսում էր նա։

Ես գնացի դէպի դուռը և բաց արի։

Գառաւը շնորհակալութիւն արաւ։ Մենք մտանք սենեակը։

Նա նայեց երեսիս, նայեց ամբողջ կազմիս։

—Ի՞նչ էք կամենում, մայրիկ, հարցրի ես. ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

Գառաւը ցնցւեց. թափանցիկ հայեացքով նայեց աչքերիս։

Ինձ ոչ մի օգնութիւն հարկաւոր չէ—ասաց նա, ես մի խնդիրք ունիմ, մի փոքրիկ խնդիրք։

—Խնդրեմ, ասացէք։

—Թոյլ տուէք համբուրել ձեզ. թոյլ տուէք կարօտս առնել, զաւակիս կարօտը։

Գառաւի աչքերին ցոլացին արտասուքներ։

—Ո՞ւր է ձեր զաւակը հարցրի ես։

—Նա այլևս չըկայ։

Ես մօտեցայ գառաւին սեղմեցի ձեռքը և համբուրեցինք։

Նա համբուրեց ճակատս և աչքերս, գգւեց ինձ։

—Շնորհակալ եմ, թանկագին զաւակս, ես բաղդաւոր եմ այս րոպէին։ Այժմ կարող եմ գնալ և մաշել իմ օրերը։

Գնաց մայրիկը։

II.

Պարտէզում կենդանութիւն էր տիրում։

Արեգակը պայծառ լուսաւորում էր։ Գարնանային տաք օրը մարդկանց դուրս էր բերել իրանց տներից։ Մարդիկ ըզբօսնում էին պարտիզի ուղիներում և ագահաբար կուլ տալիս թարմ, կենարար օդը։

Խայտաճամուկ հասարակութեան մէջ կար և մի վշտահար կանացի դէմք։ Նա մօտենում էր ծաղիկներին և փոքրիկ բողբոջներին, կռանում, հոտոտում նրանց և մտածմունքների մէջ ընկնում։

Պարտէզի պահապանը հետևում էր նրան։ Նա վախենում էր, որ կինը կըկորի ծաղիկները։ Վերջապէս նա մօտեցաւ կնոջը։

Ծաղիկ չէ կարելի կորել մրթմրթաց նա։

—Ես չեմ կարում արդարացաւ կինը։

—Ապա, ինչ ես այդքան մտենում։

—Ես միայն կարօտս եմ առնում, նայում եմ նրանց, հոտ եմ քաշում։ Իմ տան առաջն էլ կար այդպիսի ալ վարդ։

Պահապանը նայեց կնոջ այլայլած, վշտահար դէմքին և զգացուեց։

—Ո՞ւրտեղ է քո տունը, հետաքրքրուեց պահապանը։

—Հեռու է—փղձկաց կինը—նա քարուքանդ է եղել։

Պահապանը այլևս չբիօսեցրեց և հեռացաւ։

Մի քանի րոպէից յետոյ նա վերադարձաւ դէպի կինը։

—Ուզում ես այդ վարդը—հարցրեց նա յանկարծ։

Միայն մի թերթիկ, պոկիր ինձ համար, ադաչեց կինը, մի ալ թերթիկ, այլևս ոչինչ։

Պահապանը պոկեց մի թերթիկ։

Կինը դրեց ծոցը. շնորհակալութիւն յայտնեց պահապանին և թեթև ժպիտով հեռացաւ պարտէզից։

44. ՔԱՌԱՉԱՅՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Զորս այլ և այլ կենդանի,
Մէկը արջուկն անճոռնի,
Մէկը կապիկ, մէկն իշուկ,
Մէկն ալ նոխազ բուրդմօրուք
Մէջերնին խօսք կրդնեն
Որ մէկ քօնսերտ մը սարքեն,
Չեմ գիտեր ինչպէս կընեն
Որ ամեն բան կրճարեն.
Գրտան նօթ, ալթ, պաս, ջուրթակ,
Նստան ուռի ծառին տակ.
«Քոնսէռ մ՚ ընեմք որ, ըսին,
«Երկինք երկիր ըզմայլին»։
Ամեն մէկը մեծ ջանքով
Իր գործիքը զարնելով

Կրկոտրտուէր տրքարքար
Բայց համ մը հոտ մը չրկար։

«Կեցէք, եղբարք, ճրւաց յանկարծ
«Զարահրճի կապիկը,
«Մէկս ալ շէնքով մը չեմք նստած,
«Ի՞նչպէս լինի լաւ երգը
«Դուն, արջ աղբար,
«Քու պասդ առ,
«Նիստ հօս ասանկ ալթին դէմ,
«Ես սեքունտին
«Պէտք է առջին
«Այսպէս նստիմ ու զարնեմ։
«Հիմա տեսնէք թէ ինչ քօնսէռ ձեանայ.
«Սարեր, ձորեր, դաշտն ու հովիտ հիանայ»։

Երաժիշտները շարուեցին նստան,
Զարնել սկսան.
Բայց այն քօնսերտին անհամ բան ըլլալն
Իրենք ալ տեսան.

«Էհէ—կանչեց էշն անդիէն—դադրեցէք.
«Ատոր ճարը գտայ ես.
«Եկէք ամենքդ մէկ շարքի վրայ նստէք.
«Տեսնէք ինչպէս
«Անուշ կըլլայ քօնսէրը»։
Մտիկ ըրին իշուն՝ մէկալ էշերը.
Նստան շարքով
Մեծի կարգով,
Բայց անօգուտ. նորէն քօնսէռն էր խառնակ.
Որը կսէ
«Անանկ չէ
«Ասանկ նստէ դուն, ազբար».
Որը անոր հակառակ,
Թէ «Դուն ինչո՞ւ հոս նստար»։

Սոխակին մէկը լսեց՝ նոցա գոչուռն աղաղակ,
Թռաւ իջաւ որ տեսնէ թէ ինչ կայ այն ծառին տակ.
Դարձան անոր մէկ բերան՝ ըսին. «Աղէկ որ եկար.
«Հոգիդ սիրես, մեզի մէկ խրատ մը տուր օգտակար.
«Ահա նօթի մեծ գիրք ունինք.
«Մէկմէկ հատ ալ գործիք ունինք.
«Միայն դու մեզ այս ըսէ
«Թէ ընտո՞ր պէտք է նստինք»։

Սոխակն ինչ ըսէ աղէկ.—
«Քաջ երաժիշտ լինել ով որ կամենայ,
«Պէտք է փափուկ ականջ ու խելք ունենայ.
«Դուք, աղբարներ, ինչպէս կուզէք շարուեցէք,
«Քօնսէռ սարքել ձեր բանը չէ, լաւ գիտցէք»։

Քաղաքական դաշնակցութիւն

Զորս ապն ապ կինդանի,
Մէկն արգուկն անծոռնի,
Մէկը կապիկ մէկն իշուկ,
Մէկն ապ նորապ բուրդ ծորուք
Մէջերնին թօսք կրդնին
Որ մէկ ֆօնտո մը ապրին.
Զի՞նչ գիրքը ինպէս կրնին
Որ ամէն բան կրնարին.
Ցորան նօթ, ապր, պաս, գուրսակ,
Նարան ուռ ծառին տակ։

45. ԿԿՈՒՆ ՈՒ ԱՔԼԱՐԸ

—Զընաշխարհիկ
Իմ աքլարիկ,
Զայնդ զիլ-զիլ,
Ոսկի ծիլ-ծիլ,
Երգերիդ մէջ
Բիւր եղէջ,
—Կկու քուրիկ,
Հուրիկ, բուրիկ,

Քու ձայնն էլ է
Լաւ գեղգեղում,
Ծոր է տալիս
Ու մլմղում։
Երգ եմ լսել
Ես շատ ու քիչ,
Բայց չեմ տեսել
Քեզ պէս երգիչ։
—Ոսկեփետուր
Աստուածատուր,
Կուզեմ
Լսեմ
Զայնդ անապատ
Միշտ անդադար,
Թէկուզ մի դար։
—Պուճպուճուրիկ
Մի պուտ ջրիկ,
Կկու քուրիկ,
Երգւում եմ ես,
Որ լռում ես
Է՛ս չափ,պուճուր,
Ըսպասելով
Իմ աչքերը
Դառնումեն ջուր։
Ո՞րտեղից է
Քեզ էտպէս ձայն,
Մաքուր, քնքուշ
Ու զնգզնգան։
Դուք էտպէս էք
Ամբողջ ցեղով.
Մի բուռ բան էք
Թէև տեղով,
Բայց ձեր երգը
Խիստ աջողակ,
Զունի, չունի
Ոչ մի սոխակ։
—Գոհ եմ քեզնից,
Զիւան աբլար.
Խղճով ասենք,
Դու միալար
Լաւ ես երգում
Դրախտահաւից,
Թռչունների
Լաւի լաւից։
Ողջ աշխարհը
Խօսքիս վկայ,
Քեզ պէս երգիչ
Չըկայ, չըկայ։
Էստեղ ծիտը,
Ծիտիկ-միտիկ,
Ասաւ՝ «Հլա
Սրանց մտիկ.
Ի՞նչ լաւ գիտեն
Իրար եղել.
Ասա թողին
Պակաս տեղ էլ։
Է լաւ հերիք
Իրար գովէք.
Աշխարհ գիտի՝
Թէ դուք ով էք»։

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

46. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՌԱՒՕՏԸ

Առաւօտ էր. Արարատեան դաշտի լուսապայծառ առաւօտներից մէկը։ Արևի առաջին ճառագայթների ներքոյ Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագոյն շողքերով, որ աչք էին շլացնում։ Արագածի պսակաձև գագաթը չէր երևում։ Նա դեռ պատած էր ձիւնի պէս ճերմակ մշուշով, որպէս մի ամօթխած հարսիկ, սքօղում է իր դէմքը անթափանցիկ շղարշով։ Կանաչազարդ դաշտավայրը, ցօղած վաղորդեան մարգարիտներով վառւում էր ծիածանի ամենանուրբ գոյներով։ Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբոյսերը ծփում ու ծածանւում էին, և դաշտի խաղաղ տարածութիւնը օրօրւում էր սքանչելի ալեկոծութեամբ։

Գեղեցիկ էր այդ առաւօտը։ Թռչունները ուրախ ուրախ ճախրում էին մի թփից դէպի միւսը։ Գոյնզգոյն թիթեռները,

գոյնզգոյն ծաղիկների նման, ցանուած էին օդի մէջ։ Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած՝ լայն թևերով թափահարում էր, շտապելով դէպի Արաքսի մօրուտները։ Ջեռնասուն եղջերուները, վայրենի վիթն ու այծեամը դուրս էին եկել Խոսրովի արքայական անտառներից, և ազատ, համարձակ վազվզում էին շրջակայ մարգերի վրայ։

Արևը բարձրացաւ, և որքան բարձրանում էր նա, այնքան Արարատեան ընդարձակ դաշտավայրը, որպէս մի հսկայական բուրվառ, խնկարկում էր իւր վաղորդեան անուշահոտութիւնը։ Ամբողջ հովիտը ծխում էր, գոլորշիանում էր։ Ցօղազարդ բուսականութիւնը յետ էր տալիս երկնքին իր ընդունած մարգարտեայ կաթիլները։

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների գիւնի պարանէշից,
Զարթնում են մէկ-մէկ ստրիթն անկրման
Զմրան անվրդով քնի ծուշից.
Ահա լալ-արի վիրիարի ուսին
Քայլում է արիին թարմացած ոյժով,
Ստրիթ ու շորթիթ իրար իրենին
Նայում են, ժպտում ամպի ծիրուշով

Հերոսը մեր ձեռքում «Ամերիկան» իմ լեզուն է մտել, Ամերիկան մեր ձեռքում։

48. ԳԱՐՈՒՆԸ ԵԿԱՒ

Գարունը եկաւ, հաւքերը եկան,
Հնչեց ձորերում կարկաչը անուշ.
Հարսների նման ալ-ալուման հագան
Սարերը սիրուն, ծաղկունքը քնքուշ։

Ամպերը ելան. հովերը ելան,
Հովերը սիրուն, սիւքերը ըզգուշ.
Կորած գարունքի երգը գլգլան
Աղբիւրն արթնացաւ - երգեց հեզանուշ։

Ու սրտիս դիպան, պաղ սրտիս դիպան
Երգերը քնքուշ, հովերը ըզգուշ.
Ու, իմ կրծքիս տակ արթնացաւ մի բան,
Ա՛խ այնքան սիրուն, ա՛խ այնքան անուշ...

49. ԱՄԱՌԻԱՅ ԵՐԵԿՈՅ

Ճաշուայ շոքն անց էր կացել։ Սար ու ձոր գլխներն էլ եդ բարձրացնում էին, որ փոքր շունչ առնին։ Արեգակը Մասսայ քամակիցը՝ հանգարտ աչքը բաց էր արել, մունջ-մունջ Երևանու բերդին մտիկ էր տալիս ու էնա ուզում էր, որ կամաց-կամաց մէր մտնի։ Թանձր խաւարը, սև դումանը էկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացրել, կալել էր։ Ղուշը տեղից չէր ուզում ժամ գայ, հաւը ընկից գլուխը հանի։ Ամեն տեղից ոսքը խաղաղուել, ամեն տեղից ձէնը ձոր լուել, պապանձուել, փասայ փուսէն քաշուել էր։ Ջուր ջրողը առուի վրայ էր թեք ընկել, քնած մնացել, վար ու ցանք անողը՝ հանդումը, բաղմանչին իր ծառի տակին՝ շուքում քուն մտել, դինջացել։

Մարդ, ինս, ջինս՝ գեղերումը էլ չէին երևում։ Բազի կոնդի (բլուր) ծէրից, բազի սարի գոշից, բազի ճամփում, չորում մէկ սև մազի չափ դարալթու սկին էր տալիս, ձիու քամակիցը դէս ու դէն թեքւում. երեսի, քամակի վրայ շուռ գալիս, եդ գլուխը դզում, օրգանգուն ու դանթարմէն ժամ տալիս, ձիուն քացի տալիս, ետ դամշով խփում, որ ոտները մի քիչ եգին փոխի, թէգ տեղ հասնի։ Բազինն էլ ձեռն ականջի քոքին դրած՝ ախուր, բարակ ձէնով մէկ բայաթի էր քոքել, քթի տակին, ձիու ջիլաւը գլխին քցած՝ ինքն իրան ըզզում, գնում էր, որ տուն հասնի, ու իր բեգարած, ջարդւած ջանը, կամ մէկ շւաքի տակին դինջացնի, ետ իր տան դուռը, իր օղլուշաղի երեսը, քանի որ դեռ մութը վրայ չէր հասել, տեսնի ու սիրտը բաց ըլի։

Հօզաղներն էլ իրանց գութանի տաւարը բաց էին թողել, լուծը եդ արել ու մէկ քօլգի տակի՝ գութանը մէկ կողմը, եզները միւս՝ ջրերի դրաղին վեր էին թափել, քաղցր քուն մտել։ Նախիրը մէկ դզում, ոչխարի սուրուն միւս՝ շւաք տեղը նստել չանէն չանի էին քսում, վնչացնում, արոճ անում։ Զորանն էլ գլուխը մէկ քարի վրայ դրած՝ նղղել, աչքը կպցրել էր, որ շոքը քաշւածին պէս վեր կենայ, սուրուն իրիկնահովին մէկ լաւ խոտաւէտ տեղ տանի, արածացնի։ Օյեաղ շների մէկը էս ցցի վրայ, մէկ միւսը թափի ծերին, ետ չորանի ոտի տակին՝ գլուխը դրել, նօթերը կիտել, մարաղ էր մտել, որ թէ գող, գել կամ գազան սիրտ անի, մօտենայ, բիրդանբիր վրայ թռչի, թիքայ թիքայ անի, իր տիրոնչ ոչխարները պահի։ Մէկ կանաչ խոտ, մէկ դալար թուփ, կամ մէկ ծաղիկ, մէկ տեղ էլայ չէր երևում, որ մարդ հոտն առնի, կամ երեսին մտիկ տայ, սիրտը բացւի ու իր ճամփի երկարութիւնը մոռանայ, կամ շոքի ձեռիցն էրւած, խորոված ջանին հովութիւն տայ, էնպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձւել պապանձւել։ Միմիայն խոտերի չոփերն ու քոլերի սուր սուր ծէրերն էին էստեղ, էնտեղ՝ ցից ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում, մոլորւած, կանգնել մնացել։

Սև-սև ջամդաքակեր ակռաւները, ետ վախլուկ տուլաշներն էին հէնց մենակ մնացել, որ էստե, էնտե, մէկ քարափի ծերի, ետ մէկ բրջի գլխի, ետ թէ չէ մէկ ճամփի միջում,

իրար գլխի հաւաքւել էին, նստել, կամ պառկած էին գալիս, իրար կոցահարում, իրար թեւերից քաշում, որ մէկի գտած որսը ձեռից խլեն, փայ անեն իրանց ձագերին էլ տան, կամ հետները տանեն։ Օձ, կարիճ, խլէգ, բզէգ ու ինչ կերպ ջանաւոր առես՝ մորեխ, մժեխ՝ մէյդան էին բաց արել։ Որը մէկ քօլի տակից, որը մէկ քարափի բաշից, որը խոտերի միջին, կամաց կամաց ժաժ գալով, պոչ ու գլուխը իրանց քաշելով, կամ ծլունդ ըլելով, էլ եդ տաղ անելով, կամ գետնի ապառաժի վրայ սողալով, փշտացնելով, ծւալով, ծղրտալով՝ ոտն էին էլել, ուզում էին իրանց արևի ձէնն ածեն։ Որն էլ իր բնի առաջին արեկող անելով, գլխները հանել, մունջ մունջ ականջ էին դրել, սուր-սուր ականջները ցցել, պէլացել, շլացել՝ էս կողմն, էն կողմն մտիկ էին տալիս, որ ոտքը խաղաղելիս դուս գան, մի քիչ շունչ քաշեն, իրանց քէֆն անեն, իրանց ոգոը ճանկեն, էլ եդ իրանց բունը մտնին, էլ եդ գնան քնին դինջանան։

Էսպէս մեռել, լուել էր բնութիւնը ու մէկ շվլթու էլայ մէկ տեղից չէր լսւում։ Միմիայն հեռու տեղից մէկ բարակ քամի՝ բազի-բազի վախտ փչում, ծառերի տերևները սլլացնում, ժաժ էր գցում ու գոլ-գոլ՝ մարդի երեսին, բերնին՝ ձեռը նազուք քըսում, շուտով անց էր կենում ու փշերի, խոտերի, քարափնեբի, ձորերի մէջ մտնում։ Ինչպէս ծխի մէջ խըւած՝ հեռու տեղից՝ գաշտի գեղերը, փոսերը մթնած, լուած՝ ինչպէս սև ամպի կտորներ. կամ էրուած, խանձուած տեղեր՝ էս տեղից, էն տեղից սևին էին տալիս ու խառն ի խուռն երևում։

Արազը ինչպէս մէկ նեռ օձ, կամ էրծաթի գոտի, արևմտեան կողմէցը, ձորերի միջիցը իր սուրբը, լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել, ու մրմունջ, հանդարտ, լուռ գալիս, Մասսայ փէշին մի քիչ թեով խփում էր, շըփում ու էլի ծուռն աչքով նայելով, նրան հաթաթայ տալով, ձէնը ձոր անելով, գլուխը պտըտելով՝ գնում Զանգուին ու Գառնու գետն իր ծոցն առնում ու խաղալով, խայտալով, վռվռալով՝ հեռանում քւերտանց հետ ու պռունկ-պռնկի, դօշ դօշի, քամակ-քամակի տւած, իրար գլխի, երեսի

ձեռները քսելով, փաղաքշելով, հանաք անելով, աչքները խըփում, նդզում ու Շարուրի գուզ ծոցումը՝ ծեծւած, ջարդւած քուն մտնում։

Ծաղկաց զոքն անց էր կապել։ Ասր ու շոր գրչխարներն էլ իդ բարշրապտում էին, որ փոքր շունչ առնին։ Ախրիգակը Մասսայ քամակիցը՝ նամ-դասրար աչքը բաց էր արել մունջ-մունջ Երևանու բերդին մտիկ էր տալիս ու էնտեղ ուզում էր որ կամաց-կամաց մէր մտնի։ Թանչը խաս-արը, սև դումանը էկել, բոլոր դաշտերի, շորերի երեսը բռնել, օդը ծանրացրել, կապել էր։ Ղուշը գրի-ղայ չէր ուզում ժաժ գայ. նստը քնիկ գլուխը նստի։ Ամէն տրիղայ ոտքը խաղացրել, ամէն տրիղայ ձէնը շոր լուել, պապանձել, փապայ տուսէն ֆաշել էր։

Դեսպանը այս պատկերը, ամենաց ոչ էնդ է անում, պատմելու եւ նոր գրի տակը.

50. ԱՄՊԵՐԻ ՔԱՐԱՒԱՆԸ

Տես, հեռուից ահա շարան ու շարան,
Տընկ, հա տընկ, եկաւ քարաւանն ամպերի,
Ու սար ու քարաւան իրարով դիպան.
Բարով ձեզ սարեր, տէրեր աշխարհի։
«Այ, բարով, բարով,
Էս որ ծովերով».
Պոնտիցն ենք գալիս մենք շարուէ շարան,
Գնում ենք անցնենք հարթերը Կասպեան.
Դէպի Հիմալայ...

***

Դէպի լերան իջևան
Գալիս է հիւր ամեն օր
Ամպերի ձիգ քարաւան
Եւ ճամփայ է ընկնում նոր։
Ու գնում են լողալով
Հորիզոններն հեռաւոր,
Արևելեան աստղերին,
Որպէս կարօտ ուխտաւոր։

51. Ա Ն Տ Ա Ռ

Սկին տալով հեռատանում կանգնած է բարձր, սաւեբախիտ, հինաւուրց, մռայլ անտառը։ Բայց հինաւուրց ասելով չըպէտք է կարծել ծերացած, զառամեալ, տերևազուրկ։ Եթէ բոլոր ծառերը այդպէս լինէին, տեսքը շատ տըխուր կըլինէր։

Բնութեան մէջ ամեն բան աստիճանաբար է ընթանում։ Մեծ անտառը միշտ բաղկացած է լինում զանազան հասակի ծառերից՝ մի քանիսը, որոնք իրանց դարը վերջացրել և բո-

լորովին չորացել են. աննշմարելի են դառնում ուրիշ շատ ծառերի մէջ, որոնք կանաչ ու ծաղկաւէտ են։ Տեղ տեղ անտառում ընկած են անագին քներ՝ նախ գոսացած, ապա արմատից փտած։ Նրանք իրանց վայր ընկնելու ժամանակ թեքել ու կոտրատել են մերձաւոր մատղաշ ծառերը, որ չընայելով իրանց այլանդակութեանը՝ դեռևս աճում ու ծաղկում, բանաստեղծօրէն կողքին ճկւած տարածւում են գետնի վրայ, կամ կորանում կամարաձև։ Անտառի հսկաների դիակները ներսից փտելով, երկար ժամանակ պահպանում են իրանց արտաքին տեսքը. նրանց կեղևը մամռապատում և մինչև անդամ ծածկւում է խոտով։ Ինձ շատ անգամ պատահել է շտապած ժամանակս ցատկել այդպիսի դիակների վրայով, գետին գլորուիլ. չոր, անձրևային փոշու նման նեխւած փոշու ամպը ինձ շրջապատում է մի քանի վայրկեան։ Բայց այս բոլորովին չէ խանգարում այն կանաչ, հզօր անտառային թագաւորութեան ընդհանուր գեղեցկութիւնը, որ արձակ աճում է զովութեան, աղջամուղջի և լռութեան մէջ։ Ամառը, ասթ կէսօրին, խիտ անտառի տեսքը մխիթարում է մարդուս, նրա ներքին լռութիւնը մեղմ է. երբ քամին ժամանակ առ ժամանակ վազում է նրա կատարների վրայով, ինչքան քաղցր է տերևների սօսափիւնը. նրա մռայլութեան մէջ մի ինչ որ խորհրդաւոր և զաղտնի բան կայ։ Գազանի, մարդու և թռչունների ձայնը անտառում փոխւում են և հնչում օտարոտի հնչիւններով։ Բայց մեծ անտառը, փոթորկի ժամանակ սոսկալի է. չընայելով որ ցածը հանդարտ է. ծառերը ճռնչում ու հառաչում են, ճիւղերը ճրճռում ու կոտրատւում են։ Մարդուս հոգու վրայ ակամայ երկիւղ է տիրապետում և հարկադրում նրան վազել մի արձակ տեղ։



Դիտեցեք այս պատկերը, պատմիչը ասում է մի տղան ինչպես վերնագրում. բնակիչներ

52. ԳԻՇԵՐԸ ՀԱՍԱՒ

Գիշերը հասաւ. մթին է ճամփան.
Մտրում է կամաց աղմուկը քոչի.
Առուակի ափին քարւաններն իջան.
Կանչում են՝ «տղերք, ապրանք չբկորչի»։
Ձիերի ջոկեր, ուղտերի քարւան,
Սայլերի ճրռռոց, ոչխար ու տաւար
Գտնելով ձորում գիշերն իջևան,
Հանգիստ են առնում միւս օրւան համար։
Գրակի վրայ, առուակի ափին
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
Մի տեղ էլ կորած գառանն ու հորթին
Սար ու ձոր ընկած հովիւն է կանչում.
Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրանք կաթն ու խորոված.
Գիշերն էլ արդէն մեջում է, լռում,
Յոգնած քոչւորին հանգիստ քուն բերում.
Միայն մի կով է դարձեալ բառանչում
Եւ քունը կորած հորթուկին կանչում.
Լսելով նրան գիշերն անդադար,
Հեռում է տխուր ծերունի անտառ։
Այնտեղ խարոյկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Եւ մեծ ու փոքր ականջներ լարած,
Աշուղ Գիքորի երգերն են լսում։

53. Ա Շ Ո Ւ Ն

Աշուն է, խոր աշուն, գորշ երկինք, թուխպ խոնաւ ամպեր։ Մերկ ու թափանցիկ են պարտէզները, պուրակները և անտառները։ Ամեն ինչ ակնյայտնի երևում է նոյն իսկ գիւղական։ Թաւուտում, ուր ամառը մարդկային աչքը չի թափանցում։ Հին ծառերը վաղուց մերկացած են. միայն ջահիլ ա-

ռանձին կանգնած թղթենիները դեռ ևս պահպանել են իրանց թառամած, դեղնաւուն տերևները։ Այդ տերևները ոսկու պէս փայլում են, երբ աշնանային արևի շեղ ճառագայթները ընկնում են նրանց վրայ։ Գետինը ծածկւած է բազմազան ու բազմերանգ չոր տերևներով։ Այդ տերևները կակուղ և փափկիկ են խոնաւ եղանակին, այնպէս որ զգոյշ անցնող որսորդի ոտքերի տակ չի լսւում խշխշոց։ Ընդհակառակը սաստիկ ցուրտ եղանակին նրանք այնպէս չոր են, որ թռչուններն ու գազանները մարդկանց քայլերի աղմուկից հեռու են թռչկոտում։ Եթէ օրը խաղաղ է, շատ հեռու տարածութիւնից լսւում են աղէսի, սկիւռի և այլ անտառային գազանների զգոյշ ոստիւնները, սրանց հետևութեամբ տարբերում է որսորդի փորձւած սուր ականջը։

Ահա աղմուկով թռչում է սև ճարեկների երամը—նա ուղիղ դէպի այգին է գնում։ Ոմանք նստոտում են ժայռերի վրայ, ոմանք իջնում են գետին և դէս ու դէն թռչկոտում։ Մի առ ժամանակ նրանք հանգիստ են, լռութեամբ բաւարարութիւն են տալիս իրանց քաղցին։ Հէնց որ կշտանում են, խումբ են կազմում, նստում մի քանի ծառերի վրայ և երգում։ Ամենքն էլ լաւ չեն երգում, ոմանք միայն աղմկում են, բայց համերգը խիստ հաճելի է։

Այդ համերգը զարմացնում և ուրախացնում է առաջին անգամ լսողին, որովհետև վաղուց լռել է թռչունների ձայնը և այսպէս ուշ աշնանը այլևս չի լսւում նախկին բազմազան երգը, այլ միայն մի քանի թռչունների, գլխաւորապէս փայտփորիկների, խաչկտիկների ճիչը։

Ահա այսպիսի աշուն եմ սիրում ես, ոչ իբրև որսորդ, այլ իբրև բնութեան զեղեցկութիւնների ջերմ սիրահար։



Դիտեցէք այս պատկերը, թէ «աշնանը» ով ի՞նչ է անում, պատմեցէք եւ նայեցէք ապի տէր։

54. ԿՌՈՒՆԿՆԵՐ

Ո՞ւր էք գնում շարան-շարան։
Հէ՞յ դուք սիրուն կռունկներ,
Ո՞ւր էք թռչում այդպէս արագ
Մեր աշխարհից հիւրասէր։

Զրլինի՞ արդեօք մեր վաթանը
Դուք նեղ գտաք ձեզ համար
Եւ շտապով դուք թռչում էք
Մի երջանիկ նոր աշխարհ։

Եւ պիտի գաք դարձեալ շտապ
Էս վաթանը մեր սիրուն,
Երբ հեռանայ սև ձմեռը,
Երբ որ բացւի նոր գարուն...

55. ՁՄԵՌ

Ձիւնն եկել՝ դիզւել, սար ու ձոր բռնել էր։ Պարզկայ դիշերը էնպէս էր գեղինը սառցրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում, ճրճռում, ճքճքում էր, ու մարդի ջանը սրսռացնում, ձէն տալիս։ Ամեն մէկ ծառի ճղկներից, ամեն մէկ տան բաշից՝ հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձնի քուլայ՝ կախ էր էլել ու բիզ բիզ իրար վրայ սառել։ Հէնց գիտես՝ սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, ժանեան գուռն ընկել. շունչն էր ճնացել, որ տայ, ու աշխարհիս «բարով ճնայ» ասի։ Ղուշ, գազան, անասուն, սողուն՝ որ որ փետացել՝ էստեղ էնտեղ վեր էր ընկել, ոն էլ վազուց, ամսով առաջ բունը մտել, ձէնը կլորել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։ Գետերի, առուների երեսները սառիցը մէկ գազ էկել, հաստացել, իրար վրայ դիզւել՝ էնպէս էր ջրի, աղբրի բերնին հուփ ուել, որ

մօտներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձէնն էր լսում, որ սառցի տակին տխուր, արտում, քլքլում էր ու էլ։ եդ էս-տեղ, էնտեղ կամաց կամաց ձէնը կտրում, պապանձւում, սառչում։

Արեգակը էս առաւօտ՝ որ գլուխը քնի տեղիցը ու աղօթարանիցը չի բարձրացրեց ու աչքը աշխարհի վրայ գցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին, էնպէս էր պեծին տալիս, պպզում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս՝ որ հէնց իմանաս՝ թէ ալմաց, զմռութ, եախութ ու հազար տեսակ անգին քարեր ըլէին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դօշին փռած։ Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին՝ էնպէս էր մէյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամփորդի քիթ ու պռունկը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում. շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած, ճամփից խռկում, սար ու չոլ քցում, խեղդում, կամ քարէքար տալիս։

Համեմատեցէք զարնան եւ ձմրան օրերը։

56. Զ Մ Ե Ռ

Աշնան վերջին քամին եկաւ,
Սրբեց դաշտեր, ձոր ու լեռ
Ու ամենքին համբաւ բերաւ,
Թէ գալիս է ցուրտ ձմեռ։

Ու մռայլեց երկինք, գետին,
Մէգը պատեց դաշտ ու սար.
Ցուրտը եկաւ տիրեց երկրին,
Ճերմակ հագաւ մեր աշխարհ։

Մարդ, անասուն ծերուկ հիւրից
Վախվխելով մտան տուն.
Գետն էլ լռեց ցրտի ահից,
Ա՜խ հեռու է դեռ գարուն...

57. ԴԱՐԻԱԼԻ ՁՈՐԸ

Վլադիկաւկազից դուրս գալով, մի քանի ժամից յետոյ արդէն գտնւում եմ Դարիալի ձորի մէջ։ Օդը մռայլ է, խոնաւ և ցուրտ։ Աջ կողմս ապառաժներ, ձախ կողմս ապառաժներ, վերջապէս բոլոր շուրջս ապառաժներ, որոնցից մէկի ստորոտով գնում եմ և շարունակ նայում վեր, բարձր, որտեղից կիսաքանդ կամարների ձեւով գլխիվայր կախւել են անագին ժայռեր։ Նրանք նայում են ցած և սարսափ ներշնչում ինձ։ Եթէ մի կտոր, թէկուզ մի չնչին մասը պոկւի իր տեղից՝ ինձ սայլակիս հետ միասին փոշու հետ կըհաւասարեցնի։ Բնութիւնը մտադիր չի եղել այստեղ ճանապարհ բանալու, բայց յանդուգն մարդը ինչէ՞ր չի արել։

Ընթանում եմ դէպի առաջ և բարձր։ Մեր ուղին սկըսւում է ժայռերի ստորին փէշերից և ոլոր մոլոր պտոյտներով բարձրանում դրանց կրծքի վրայով ու դիմում ձիւնապատ գագաթների կողմը, որոնք այս միջոցին ծածկւել են սպիտակ և մոխրագոյն ամպերով, այն երկնային սաւանով, որի միջից երբեմն-երբեմն դուրս են ցայտում հատիկ-հատիկ մշտականաչ եղևնիները և դարձեալ անհետանում։ Ապառաժներն անընդհատ միմեանց են յաջորդում։ Նրանք բազմաթիւ և բազմաձև ծալքերով ձգւում են անդնդային մռայլ ձորի միջով և միախառնւում անթափանց թանձր կապուտակի հետ, ուր վարագուրած է գարնան քնքուշ երկնակամարը։ Ամեն տեղ տիրում է խլացուցիչ աղմուկ։ Այս աղմուկը, գոռում-գոչումը, կատաղի Թերէքին է պատկանում։ Դա գլխիվայր վազելով քարքարոտ յատակի վրայից և ամեն ինչ քարուքանդ անելով, անխնայ շպրտում է այս ու այն կողմ ժայռերի միջից պոկած

ահագին բեկորները։ Դա նման չէ սովորական արագահոս գետերին, դա կատաղի է և իր կատաղութիւնը հասցրել է գագաթնակէտին։ Կորցրել է իր գոյնը, կորցրել է բոլորովին իրան։ Հազարաւոր պտոյտներ անելով, քարի է դարկւում, ամեն ինչ գլորում, արմատախիլ անում, ջարդում ու փշրում։ Շրջապատում է կղզիացած ամրաքիանը ժայռերին և անէծք ու սպառնալիք ուղղում «չնչին արարած, եթէ ոչ այսօր, գոնէ վաղը անշուշտ կըպոկեմ տեղիցդ, կըզարկեմ ափիդ և փշրելով կը ոչնչացնեմ քո գոյութիւնը»։ Եռում է ամբողջապէս, բլուրներ ու անդունդներ կազմում, նորից շուռ է գալիս և ջնջում ու իր հետ տանում։ Այստեղ ծափ է տալիս, այնտեղ ապտակում, ծեծում, երրորդ տեղը խփում գլուխը գետնին և մի ակնթարթում թռչկոտում բարձր, շատ բարձր՝ թուքեր արձակելով ամեն կողմ։ Նա անգութ է, դառոզ և հպարտ։ Չի ուզում ջրի նմանուել, ամբողջապէս փրփուրի է փոխուել։ Մանր ու խոշոր սիրուն առուակներ ամեն մի քայլափոխում ծնունդ են առնում ժայռերի կրծքի միջից, կարկաչելով, ուրախ-ուրախ վազում են ներքև, ձորի մէջ կատարուող աղմկալից տեսարանը տեսնելու, բայց անողորմ հրէշը կլանում, խեղդամահ է անում այդ ծաղկահաս անմեղ արարածներին։

---

58. ՃՈՐՈԽ

Այն գիժ Ճորոխի ժայռերն են ահա,
Որ ինչպէս մթնած երկու մռայլ ամպ՝
Կարծես դիմարգել երկու ամրոցներ՝
Իրար են նայում կանգնած պատահմամբ։
Այն գիժ Ճորոխն է, որ ահեղ ձորում
Քարեանի նման չլում է իր չուն։
Որ մէկ զոռում է, մէկ նուազ մարում՝
Պարելով ճամբայ խաւարի միջում։



Ճորոխի ափերը

59. ՉԻՆԱԿԱՆ ՍԻԼԻՆՉԻ ԹԱԳՈՒՀԻՆ

Չինական Գօանչի կայսրը ունէր մի կին Սիլինչի անունով, որին խիստ սիրում էր։ Կայսրը ցանկանում էր, որ ողջ ժողովուրդը յիշէ իր սիրելի թագուհուն։ Այս նպատակով նա ցոյց տուեց կնոջը շերամի որդը և ասաց. «սովորիր, թէ ինչպէս պէտք է այս որդը խնամել և ժողովուրդը երբէք չի մոռանայ քեզ։ Սիլինչին սկսեց զննել որդերին և տեսաւ, որ երբ նրանք անզգայանում են, նրանց վրայ ճնում է թելերի մի կծիկ։ Նա արձակեց կծիկը, նրանից բարակ թելեր մանեց և մեքանէ թաշկինակ գործեց։ Այնուհետև նա նկատեց, որ որդերը աճում են թթենիների վրայ։ Նա սկսեց հաւաքել թթենու տերևներ և նրանցով կերակրել որդերին։ Այսպէսով նա բազմացրեց շատ որդեր և ժողովրդին սովորեցրեց, թէ ինչպէս պէտք է խնամել նրանց։

Այդ ժամանակից անցել է հինգ հազար տարի, բայց չինացիք մինչև օրս յիշում են Սիլինչի թագուհուն և նրա համար տօն կատարում։

1. Թիթեռը ո՞ւր է դրել իր ձուները.

2. Ձուերից ի՞նչ է դուրս եկել.

3. Ի՞նչ են ուտում որդերը եւ ի՞նչ են դառնում։

4. Թրթուրները երբ մեծանում են, ինչի՞ են փոխարինում։

5, Ի՞նչ են դուրս եկել պատեաններից։

6. Ո՞ւր են թռչում թիթեռները.

Դիտեցէք իւրաքանչիւր պատկերը, նախ պատմեցէք եւ ապա գրի առէք ամբողջի բովանդակութիւնը։

60. ԱՐԾԻՒՆ ՈՒ ՃԻՃՈՒՆ

Հսկայ թեւերը լայն-լայն տարածած,
Հզօր արծիւը ուղղեց իր թռիչք
Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
Դէպի անսահման կապուտակ երկինք։
Երկար սաւառնեց նա խիտ ամպերում,
Քանի ուժ ունէր զօրեղ թեւերում.
Եւ վերջ ի վերջոյ յոգնած ու դադրած,
Նա նստեց հսկայ մի լերան կրծքին,
Որի գագաթը մինչ երկինք հասած,
Սարսափ էր ազդում վերև նայողին։
Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով
Եւ շուրջը զոռոզ հայեացք ձգելով,
Իր արքայական ձայնովը ահեղ
Որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,
Մենակ ու ազատ այս լերան վրայ
Որպէս քաջայաղթ լիապօր արքայ.
Իմ գահն է անհուն այս երկնակամար,
Որոտ ու ամպեր ոտքիս պատւանդան.
Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
Ո՞վ կարէ հասնել գահիս բարձրութեան։
— «Ես»
Լսեցաւ յանկարծ մի ձայն թոյլ, բարակ,
Մեծապանծ թռչնի հէնց ոտների տակ.
«Ես, անձրևային ճիճուս աննշան»,
— Ի՞նչպէս, դու այստեղ, իմ դէմ յանդիման,
Ասա՛ ինձ շուտով, ճիճու անպատկառ,
Ո՞րտեղից դու այս ամպերին հասար...»

— «Այն նեխուած ճահճից, արծիւ ինքնագով,
Ուր դու ծնուած ես քո այդ վեհ փառքով.
Այն նեխուած ճահճից, որտեղ այժմ դու,
Զզւում ես անգամ հայեացք ձգելու»։
— «Բայց ի՞նչ հնարքով դու միջատ չնչին,
Հասար իմ անհաս ամպազարդ գահին.
Ասա՛, պատմիր ինձ, ի՞նչպէս, ի՞նչ կերպով..,»
«Ինչպէ՞ս, սողալով, արծիւ, սողալով»։

61. ԾՈՎԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

I.

Օգոստոսի 20-ն էր, պայծառ էր Դերբենդի երկինքը, պարզ ու հանդարտ էր Կասպից ծովը, որ ասպակու պէս փայլում էր և հիւսիսային մեղմ զեփիւռից ժպտում։

Ճանապարհորդները ծովեզերում կանգնած, անհամբերութեամբ սպասում էին շոգենաւին։ Կէս օրն անցաւ։ Անհ հիւսիսում մի սև կէտ երևեցաւ, որ հետզհետէ մեծանում էր և աւելի պայծառ կերպով նշմարւում։

Դա շոգենաւն էր, որ իր ծխնելոյզից բարդ-բարդ դուրս էր թափում ծուխը և ամպի պէս տարածում հորիզոնի տակ։

Մօտենում է։ Ահա պարզ որոշւում են կայմերը։ Մի ժամ ևս, ահա Դերբենդի առաջը մեղմացրեց իր ընթացքը, և նրա սուլիչի սուր ձայնը յայտնում է խարիսխ ձգելը... Իսկ ծովափում, տես ինչ աղմուկ ու իրարանցում է. այստեղ հաւաքւած են շատ ճանապարհորդներ, նրանց ազգականներն ու բարեկամները և հետաքրքիրների մի խումբ։ Ո՞ր ուրախ ու զուարթ է՝ իր բարեկամին կամ ազգականին տեսնելու յուսով, որը արտասուքն աչքերին հրաժեշտի համբոյր է տալիս որդուն կամ թոռանը. մայրը՝ իր որդուն գրկած, հեկեկում է ու նրան խաչակնքում... Մի խօսքով ծիծաղ ու ժպիտ, արտասուք ու տխրութիւն իրար են խառնւել։

— Հասանք, հասանք շոգենաւը, լսւում են թիավարների ձայները և ամբոխը նաւակներից սանդուխով շոգենաւն է

բարձրանում։ Բայց ինչ բազմադիմի տեսարան. այստեղ կը-գտնես ամեն ազգից, ամեն սեռից, ամեն դասակարգից. հարուստ ու աղքատ, քահանայ ու բժիշկ, վաճառական ու արհեստաւոր, կին ու աղջիկ, ծծկեր ու պատանի... Հազար ու մի պատկեր, հազար ու մի վարք ու բարք. չորս կողմդ ապրանքների կոյտեր և նրանց վրայ հարիւրաւոր պլշած աչքեր։

Ահա նաւապետը բարձրացաւ իր տեղը. հրաման է տալիս խարիսխը հանել և հեռանալ։ Նաւաստիները հո-հոպ, հէ-հոպ, հոպ-հոպ կանչելով քաշում են խարիսխը և երրորդ սուլիչը արդէն յայտնում է շոգենաւի մեկնիլը։

—Մնաս բարև, մնաս բարև, կանչում են ամեն կողմից, գլխարկները բարձրացնում և թաշկինակներով միմեանց ճանապարհ ձգում...

Բորբոքւում է հնոցը, բարձրանում է ծուխը, շոգին մըղում է մեքենաները, շրը՛մփ ու թրը՛մփ, գլորւում են անիւները և ահագին շարժական տունը պատռելով ծովը, առաջ է ընթանում, մի ուղիղ և փրփրուն հետք իր ետևը թողնելով։ Նա տանում է իր վրայ հարիւրաւոր մարդիկ, հարիւրաւոր մարդկանց յոյսեր իր սենեակներում ու շտեմարաններում։ Ամենքի սիրտը տրոփում է յոյսի ու երկիւղի մէջ. մահն ու կեանքը, կարծես, պատերազմում են միմեանց դէմ. ամեն մի երերում, ամեն մի թեթև ցնցում նաւորդի վրայ սարսափ է բերում, ծովի վրայ մահը կեանքից մի տախտակով է բաժանուած։

Փռնչալով գնում է շոգենաւը. ահա Սամուր գետը իր անտառով մի կողմ մնաց. մութը պատեց ինչպէս ցամաքի, նոյնպէս և ծովի վրայ. հիւսիսի ցուրտ քամին սուլելով անցնում է շոգենաւից ու մարդու մարմինը մի անախորժ դող ձգում։ Հանդարտութիւն է չորս կողմը. նաւորդներից շատերը փաթաթուած իրանց վերարկուների մէջ՝ որը խօսում է, որը ննջում, որն էլ պառկած խոմփացնում։ Գիշերային այդ լռութեան մէջ միայն լսւում են մեքենաների չրխկչրխկոցը, ջրի շրմփոցը, նաւապետի հանդարտ քայլերը և դեկավարի տուած հրամանները։ Վերնայարկում նստած նաւորդները նայում են երկնքի անսահման տարածութեան դամանդեայ աստղերի գեղեցկութեանը ու կա

II.

Յանկարծ արևելքը շառագունեց. հորիզո[illegible] կապոյտ ծովը մի փայլ առնում և ակամայ [illegible] դրաւում։ «Լուսինը», բացականչում ես, ինչ [illegible] կեր. գիշերուայ թագուհին ջրից կիսովին բարձրա[illegible] տի ոսկեայ է տալիս ծովին. նա ամբողջ ժամեր[illegible] այդ վճիտ աւազանում և այժմ մտնում է աստղեր[illegible] բութիւնը՝ այնտեղից դիտելու մարդկանց գործերը... [illegible] քանի բարձրանում է՝ այնքան դժգոյն կերպարանք է առ[illegible]

Արևելքը կարմրում է. արևմուտքում սարերի սև գիծը որոշ[illegible] փչում է կողմնակի քամին և շոգենաւը աջ ու ձախ տատանո[illegible]

Գիշերուան թագուհին իր հրաժեշտը տալով՝ վազուց մտ[illegible] է սարերի քամակը. իսկ նրա ետևից ահա բացուեցան երկնքի վարագոյրները, և իր ծիրանին հագած դուրս եկաւ փայլուն արևը։ Նա թօթափեց իր փէշերը, և ահա ցոլանում են նրանցից ոսկեղէն ճառագայթներ և հալածում խաւարը... բոլոր բնութիւնը նորից կենդանութիւն ստացաւ...

Քամին սասկանում է, ծովը կատաղում, լեռնանում են ալիքները, բարձրացնում շարժական տունը ու կրկին ծովի յատակը իջեցնում։ Փռնչում է շոգենաւը, հարւածում ծովը, բայց խզուր. տաշեղի պէս մղւում է ջրի երեսին։ Այստեղ ահա մարդկային ճարտարութիւնը խոնարհւում է բնութեան այս ահեղ տարրի առաջ...

Նաւապետը հրամաններ է տալիս. նաւաստիները իրար են անցած. դեկավարը աջ ու ձախ դարձնում է իր դեկը. մարդկանց երեսին մեռելութիւն է դրոշմած. չրկայ առաջուայ ծիծաղն ու զւարթութիւնը. ամեն մարդ կուչ եկած՝ իր կեանքի պահպանութեան հոգն է տանում... Տես՝ ինչ սարսափելի դրութիւն է շուրջդ. մեծ ու փոքր, տղայ ու աղջիկ՝ այս ու այն կողմը թեքուած՝ ախ ու վայ են կանչում...

— Ապշերոնը, Ապշերոնը, շուտով կազատուենք այս ալիք-

բարձրանում։ Բայց
գոնեա ամեն ազգ
բուսատ ու աղքատ՝ ինչ ու նրա առաջը մի երկարացած կղզի. ան-
հեստաւոր, կին ու սուակներ պատսպարան են գտել այդ պարա-
մի պատկեր, հաստատեղ չեն հանում ոչ կատաղի ալիքներ,
բանքների կոյտ սատակաշունչ քամին...

Ահա նաւա Արեգակը վերևից կրակ է թափում, եւ եկած
լիս խարիսխը աղաղում, շոգենաւը սահում է կապոյտ ծովից,
հոպ, հոպ-հոպ արան ընդ առաջ բերում. աջ կողմից ցամաքն է
լիչը արդէն ձախից՝ փոքրիկ կղզիները, որտեղ միայն ձկնկուլ-
—Մ՝վայրի բադերն են իշնանում։ Բայց ահա հեռուն ամ-
գլխարեա ծուխ է բարձրանում և մինչև երկինք տարածւում.
նապ՝թ աչքը խսկոյն որոշում է Բագուն... Սև քաղաքը։

Ղ՝կէսօր-ան չորս ժամը խրիչ, շոգի-նաւ-ը ձիգ-
լոյ նարիս-բաւ-որ նաւ-ու-նաւ-ակներ, բազ-
ւայ նաւ-ախանգիարը մրաւ. նաւ խրոխտաւ-
լոյ կանգ առ-աւ արքայական կամրջի դիրքա-
ցը և վերջին ուս-ղիչը յայտնիչ խարիսխ շր-
գիչը։ Նրա դրօշը ծաւծանաւ-ում է; նա այժմ
բաւ-ունք ունի ասիչ. «Քնաւ-թիւն
դէմ կռ-ւիչ, բոլոր ոյժս գործ դրի, սրէ՛ք
ինչ այժմ յաղթաւ-թիւն դ-ասիներն»։



Դեռևս ոստոստվելիս, Դիմաց՝ ալիք և ուժեղ քամիներ շարունակ ցնցում

62. ՆԱԻԱՎԱՐ

—Էյ, նաւավար, ի՞նչ ես անում,
Ո՞ւր ես նստում դու նաւակ.
Սև ամպեր են, տես բարձրանում
Դէպի երկինք կապուտակ։

Հորիզոնն էլ մութով պատած՝
Հեռուում ամպն է որոտում.
Նայի՛, ծովն էլ կամաց-կամաց
Պարզ երեսն է կնճռոտում։՝

«Է՛հ, աղա՛ Ջան, դարդ մի՛ արա,
Ծովափին եմ ես ծնուել.
Մեծացել եմ ծովի վրայ,
Ծովի բերքովն եմ սնուել։

Մանուկ օրից շատ եմ տեսել
Եւ՛ փոթորիկ, և՛ ագէտ.
Ծովն է ինձ միշտ օրօր ասել,
Նոր չեմ ծանօթ ծովի հետ։

Հայր ունէի, ծովում կորաւ
Որսի ելած մութ գիշեր.
Եղբայրներիս ծովը տարաւ,
Ձկնորս էին անվեհեր։

Կեանքը լաւ է... բայց ի՞նչ արած...
Համ էլ մահից ի՞նչ փախչեմ.
Ծովն է տալիս մեզ կեանք ու հաց,
Ծովի տակն էլ կը հանգչեմ...։»

63. ԼՈՐ

I.

Ես տասը տարեկան էի, երբ մի անգամ հօրս հետ գնացի որսի։ Հայրս գնում էր մանր թփերի միջով, ուր առհասարակ շատ լորեր էին պատահում։ Յանկարծ որսի շունը—Տրէզօրը կանգ առաւ։ Հայրս քրս-քրս տուեց և Տրէզօրի հէնց քթի տակից դուրս թռաւ լորը, սակայն նա շատ տարօրինակ էր թռչում, գլորւում էր, շուռ գալիս, վայր ընկնում. կարծես թէ նա վիրաւորուած էր, կամ նրա թեը կոտրուած էր։ Տրէզօրը բոլոր ուժով սկսեց հետապնդել նրան. նա այդպէս արագ չէր վազում, երբ թռչունը կանոնաւոր էր թռչում։ Հայրս նոյնիսկ հրացանն արձակել չէր կարող, վախենալով, որ կոտորակը շանը կը կպչի։ Վերջապէս Տրէզօրը բռնեց նրան և բերեց; հօրս տուեց։ Հայրս թռչունին դրեց իր ձեռքի ափի վրայ։ Ինչէ՞, նա վիրաւորուած է, հարցրի ես։—Ոչ, նա վիրաւորուած չէ, նա պէտք է որ մօտերքումս ձագեր ունենայ. նա դիտմամբ վիրաւոր էր ձևանում, որ Տրէզօրը կարծէր, թէ նրան հեշտ է բռնելը։

—Բայց ինչո՞ւ էր նա այդ անում, հարցրի ես։

—Նրա համար, որ շանը հեռու տանի իր ձագերից։ Յետոյ նա աւելի լաւ կը թռչէր։ Միայն թէ այս անգամ նա սրխալուեց—խիստ էր ձևացնում և Տրէզօրը նրան բռնեց։

—Ուրեմն նա վիրաւորուած չէ՞, նորից հարցրի ես։—Ոչ... բայց նա կենդանի չի մնայ... Տրէզօրը, ինչպէս երևում է, պինդ սեղմել է նրան իր ատամներով։ Ես աւելի մօտեցայ լորին։ Նա հանգիստ պարկած էր հօրս ափի վրայ, կախ ձգելով գլուխը և իր թուխ աչքերով նայում էր ինձ։

II.

Եւ յանկարծ ես խղճահարուեցի։ Ինձ այնպէս էր թւում, թէ մտածում է. «ինչո՞ւ համար ես պարտաւոր եմ մեռնել. ինչո՞ւ համար—չէ որ ես իմ պարտքը կատարեցի, աշխատեցի

փոքրիկներիս փրկել, շանը հեռու տանելով և բռնուեցի»։ Երբ նա աչիկները փակեց, ես լաց եղայ։

Յետոյ ես մօտեցայ հօրս և խնդրեցի, որ ինձ ընծայէ լորը։ Բայց ինչո՞ւդ է պէտք լորը, հարցրեց հայրս։—Ես ուզում եմ նրան թաղել։—Թաղե՞լ։—Այո՛, նրա բնի կողքին։ Տուր ինձ դանակդ, ես նրա գերեզմանը կրփորեմ։ Հայրս զարմացաւ։—Որպէսզի երեխաները այցելութեան գան նրա գերեզմանին, հարցրեց նա։—Ոչ, այնպէս... ես ուզում եմ։ Նրան շատ հաճելի կըլինի պառկել իր բնի կողքին։ Հայրս ոչ մի խօսք չասաց, հանեց դանակը և ինձ տուեց։ Ես իսկոյն մի փոքրիկ փոս փորեցի, համբուրեցի լորի կուրծքը, դրի փոսիկի մէջ և հողով ծածկեցի։ Ապա նոյն դանակով երկու ճիւղ կտրեցի, նրանց կեղևը մաքրեցի, մի խաչ շինեցի և խրեցի գերեզմանի մէջ։ Շուտով ես հօրս հետ հեռացայ այդ տեղից, բայց ես շարունակ յետ-յետ էի նայում։ Աչը սպիտակ էր և հեռուից երևում էր։

Հինգ օրից յետոյ ես և հայրս նորից եկանք այդ տեղը։ Ես գերեզմանը դատայ խաչի շնորհիւ, թէպէտ դեղնել էր, բայց վայր չէր ընկել։ Սակայն բունը դատարկ էր, նրա մէջ չրկային ձագուկները, հայրս հաւատացնում էր, որ հայրը նրանց հեռու տեղ է տարել։ Եւ երբ մի քանի քայլի վրայ թփի տակից դուրս թռաւ լորը, հայրս այլևս չրկրակեց նրա վրայ։

Այդ օրուանից որսի գնալու հրապոյրը կորաւ ինձ համար։

64. ԱՐԱԳԱԾ

Մեր առջևն է Շիրակի ալեծածան հարթութիւնը, և լայնանիստ Արագածը, որ մի մօր պէս բազմել է շրջակայքի բլուրների մէջ։

Անո՜յշ Արագած...

Ամեն ինչ մեղմ է նրա արտաքինի մէջ. և՛ կատարները, որոնք շուրջանակի բոլորել են և թագ կազմել նրա գլխին, և՛ ձորերը, ուր իջուածքները կախուում են զգուշութեամբ, որ

վերելքն անկարելի չդառնայ, և՛ ժայռերը, որոնք պինդ նստել են նրա կրծքին, որպէսզի վայր չընկնեն, չէ՞ որ նրանց ստորոտներում չարքաշ մարդն է տնքում։ Եւ յետոյ նա հովիտներ ունի ջրաշատ ու հարուստ, սիրուն դարաւանդներ, կանաչ պուրակներ, փապարներ, խոխոջուն ջրեր, որոնք քարերի տակից ծորում են կաթնի պէս և ցօղում նրա զեղուն կուրծքը։ Ոչ ոք զժգոհ չէ նրանից, և՛ թափառական թաթարները իրանց հօտերով, և՛ աւազակ քիւրդերը, և՛ մանաւանդ շինարար, վաստակաւոր հայ գիւղացին, որ կպել է նրա կրծքին, վարում է և ցանում, նրա լայն հոգուն խառնել է իր հոգին և պաշտում է իր լեռը, այդ հինաւուրց մօրը։

Սիրո՞ւն Արագած...

Վաղորդեան թափանցիկ մշուշը իջնում է նրա կատարից մինչև ստորոտները ինչպէս մի հսկայական քող և նրա տակից լեռը, կարծես, յորանջում է մեղմիւ ու զարթնում։ Եւ այն քողը բազմերանգ է, նուրբ, հազիւ նկատելի՝ գոյների մի աքանչելի խաղ կայ վերից վար, ձիւնափայլ սպիտակ՝ կատարին, նա իջնում է վար մուգ-կապոյտ, բաց-կապոյտ, թոյլ մանուշակագոյն, ոսկեգոյն և ստորոտում հողագոյն երանգներով։ Ամենից բարձր՝ հէնց կատարի թագի վրայ, ճերմակ ամպերի մի շարան կայ, եթերային, սպիտակագգեստ աղջիկների մի խումբ, որոնք իրար յետևից կռացած՝ ասես, արտ են քաղում։ Արագածից աջ ու ձախ գնացող բոլոր լեռները, Ալահանում։ Արագածից աջ ու ձախ գնացող բոլոր լեռները, Ալաճայի արիւնոտ բարձրունքները նոյնպէս ճերմակ ամպեր ունեն կատարներին։ Ամենքը, կարծես, նախընթաց գիշերը ըստ պիտակ շղարշով գլուխները փաթթած են քնել թեթև անձրևի տակ հարբուխ չբռնանալու համար և այժմ՝ հազիւ զարթնած, դեռ չեն բացել ճակատները ծագող արևի շողերի առաջ։

Ներքևում, լեռնալանջերի վրայ, ծուխ է բարձրանում ոլոր-մոլոր։ Գիւղերն են զարթնել և թոնիրների առաջին հեքն է այն։ Հով չկայ և ծխի պտոյտը ոլորուն սիւնով երկար ժամանակ իշխում է դաշտի վրայ, նա ճգնում է էլի բարձրանալ, բայց ծայրը երերում է, լայնանում ու փունջ կազմում և, ի վերջոյ, մեղմիւ լուծւում է մշուշի հետ առանց կարողանալու

հանել լեռնակառարներին։ Եւ ճերմակ ամպերը, և նրանց տակի կառարները նայում են վար, արևի շողերի առաջ ժրպտում և մեղմիւ, ծխի անզօրութիւնը տեսնելով, նրանք հրաւարտ են, որ սև կէանքից, խեղճ ու կրակ աշխարհից խօսող այդ ծուխը չի հասնում եթերային բարձրունքին և նրա մուրը վերստին մաղւում է նոյն անքացող երկրի վրայ։



65. Ա Լ Ա Գ Ե Ա Զ

Սև-մութ ամպեր ճակտիդ դիզւան,
Դուման հագար Ալագեազ,
Սրտումս արև հէչ չի ծագում,
Սիրտս էլ դուման, Ալագեազ։

Զառ փեշերդ անցայ, տեսայ,
Առանց դարտի մարդ չըկայ,
Էհ, իմ դարդս, ջան Ալագեազ,
Իմ դարդիս պէս հէչ չըկայ։

Է՜յ, Մանթաշի մարմանդ հովեր,
Իմ դարդս որ ձերն էղնէր,
Ձեր նուշ-անուշ ծաղկանց հոտը
Թոյնի, տօթի կըփոխւէր։

Է՜յ, Մանթաշի նախշուն հաւքեր,
Իմ դարդս որ ձերն էղնէր,
Ձեր էդ վառ-վառ խաս փետուրներ
Կրսևնային քանց դիշեր։

Է՜, վախ. կոտրան իմ թևերս,
Ընկայ գիրկդ, Ալագեազ,
Ա՜խ մեծ սրտիդ սեղմեմ սիրտս,
Լամ, արունն լամ, Ալագեազ։

66. Ա Ր Ա Ֆ Ս

Հին Արաքսը... զարմանալի քմահաճութիւններ ունէր։ Անյիշելի ժամանակներից յամառութեամբ կռւում էր իր անհաւասար եզերքի հետ և, կարծես, դժգոհ էր այն նեղ շաւղից, որ գծել էր նա ընթացքի համար նոյնքան քմահաճ բնութիւնը, նա սիրում էր ազատութիւն։ Նեղ շաւիղը վրդովեցնում էր նրան։

Երբեմն լեռնային երկու զուգահեռական գօտիներ միաբանւում էին և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ձորակի մէջ։ Այդ միջոցին նրա կատաղութիւնը չափ չունէր։ Ահռելի յորձանքներով զարկւում էր իր ապառաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր, և մարդ, կարծես, լսում էր նրա սոսկալի որոտմունքի մէջ այս ճակատագրական խօսքերը. «Նեղ է... խեղդւում եմ»...

Երբեմն լեռնային գօտիների միաբանութիւնը խախտւում էր, բաժանւում էին միմեանցից, հեռանում էին միմեանցից. և բաց էին անում նրա առջև լայն, ընդարձակ տարածութիւն։ Այդ միջոցին նրա կամայականութիւնը չափ չունէր։ Ազատւե

լով իր նեղ կիրճից, մի չար վիշապի նման, անխնայ կերպով ողողում էր, յեղյեղում էր իր հարթ, կանաչազարդ ափերը, — և կամ մի հարբած հսկայի նման, երբեմն դէպի աջ էր թեքւում, երբեմն դէպի ահեակ էր խոտորւում, և երբէք ուղիղ ճանապարհով չէր գնում։

Նա իր ազատութիւնը խելացի կերպով վայելել չըգիտէր։ Յանկարծ վիթխարի թևերը բաց էր անում. խլում էր ցամաքից մի կտոր հող և, ճնշելով իր զով գրկի մէջ, կղզիացնում էր նրան։ Առ ժամանակ երեխայական սիրելութեամբ, սկսում էր փայփայել և խնամել իր խաղալիքը։ Կղզին աճում էր, կանաչազարդւում էր, աճում էին թուփերը և վառւում էին ծաղիկները։ Երկնքի թռչունը հիւսում էր այնտեղ իր բոյնը, վայրի անասունը սնուցանում էր այնտեղ իր ձագուկներին։ Կղզին ներկայացնում էր մի գեղեցիկ փունջ, որով զարդանում էր նաև, պճնասէր երիտասարդի նման, զարդարում էր իր հպարտ կուրծքը։ Բայց յանկարծ, կարծես ձանձրանում էր նա. ալիքները փրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբար մռնչում էին, և մի քանի բոպէի մէջ կլանում, ոչնչացնում էին գեղեցիկ զարդը, և նրա հետքը անգամ չէր երևում։

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

67. ԴԷՊԻ ԱՆԻ

Ալեքսանդրապոլից մինչև Անի մօտ 50 վերստ ճանապարհ է։ Ռուսաց նոր շինած երեք-կամարանի կամրջից անց կենալով Ախուրեան գետը՝ դուք կըմտնէք իսկոյն տաճկաց նախկին սահմանը — մի ընդարձակ դաշտ, Շիրակայ դաշտի շարունակութիւնը։

Այդ դաշտի միջից հեզիկ սահում ու գնում է Ախուրեանը, բաժանելով իր գնացքի շարունակ ընթացքով ռուսական և տաճկական նախկին սահմանները։ Գետի երկու կողմում ձգւում են բազմաթիւ գիւղեր։ Այդ գիւղերի մէջ, որոնցից ոմանք հայաբնակ, ոմանք տաճկաբնակ և ոմանք խառն են, կան կանգուն, և անկանգուն, հին և նոր, սուեր ու կիսաւեր եկեղեցիներ և վանքեր... որոնք մի առանձին տպաւորութիւն են գործում առաջին անգամ ոտք կոխող հայ ճանապարհորդի վրայ։

Կարծես մի էլեքտրական զօրութեամբ հեռադիտակս դէպի Ալաճայի սառորտը խոնարհւեց և Անւոյ աւերակները յանկարծ իմ աչքիս դիպան... Աստուած իմ... չեմ կարող խօսքով բացատրել այն՝ ինչ որ նոյն բոպէում ես զգացի... Սիրտս փրղձ-

կաց և արտասուքներն ինձ հեղձամղձուկ արին։ Սրտատրոփ և տագնապալից կառքիցս վայր իջայ և ջերմ արտասուքով իմ կաթոգին և մոռացած հայրենիքի սուրբ հողը առաջին անգամ ես համբուրեցի։ Զառիվայր դաշտի վրայով սահում, գլորւում էին կառքիս անիւները և ես որքան առաջ էի գնում, այնքան տագնապում էի, որովհետև Անւոյ աւերակները հետզհետէ շատանում և մեծանում էին իմ աչքի առաջ։ Ես հասայ Անի և աւագ դռնից ներս մտայ քաղաքը։

Ո՛չ թէ հայ՝ այլ ամեն մարդ, ինչ ազգից կուզէ, թող լինի, տեսնելով առաջին անգամ այդ քաղաքը՝ չէ կարող անտարբեր նայել նրա աւերակներին, որոնք մի ծանր, մի սրբատաճմլիկ տպաւորութիւն են գործում իսկոյն մարդուս վրայ։ Աւերակների շատութիւնը և միասին լինելը, նոցա վիթխարիութիւնը, վսեմութիւնը, փառաւորութիւնը՝ այդ ամենը կենդանութիւն են ներշնչում. միւս կողմից փլատակների տեղ տեղ կոյտերը, հողաբլուրների և քարաբլուրների ահռելի տեսարանները իրանց մեռելութեան հոտ փչող լռութեամբ մի զարհուրելի գերեզմանոցի պատկեր են ներկայացնում։ Ձեր աչքը անյագաբար այս և այն կողմն է ձգւում, ձեր սիրտը աւերակների հրապոյրներով է կախարդւում, իսկ ձեր ուշքն ու միտքը անդադար այս և այն կողմն է ոստոստում, ելեքտրական մի ցնցիւն, մի սարսուռ էք զգում ձեր ջղերում և կարծես ուզում էք թողնել փախչել այդ ահաւոր և փառաւոր, այդ սխրալի ու տխրալի տարօրինակ քաղաքից, որի ամեն մի անկիւնից, ամեն մի կողմից տաղաչափի (պ. Մկրտիչ Պալեան) տաղի նման։

Հետզհետէ քեզ ահա նոր նոր ձայն
Սրտիդ մէջ, տիկին, արձագանք կուտան,
Ամեն մի քարէ մի նոր ձայն կելլէ,
Ամեն մի բեկոր նոր բան կըպատմէ.
Ո՛ր կողմը նայես՝ տխուր տեսարան,
Ո՛ր կողմը դիտես՝ աւերակ միայն։
Կամ հրաշալի սուրբ եկեղեցեաց
Կըտեսնես դու լոկ գմբեթը մնացած,
Կամ մեծակառոյց ի հիմանց ի վեր,
Կիսաւեր կանգնած են ապարանքներ.
Ահա կըշարժին, ահա կերերին.
Նոքա էլ հիմայ գետին կըփուին,
Իսկ դու զգացած տխուր յօղագին
Աչքով կըտեսնես աւերակ Անին։

Անին տեսնող ամեն մի ճանապարհորդ այցելու իր անունը ու ազգանունը և մի քանի սրտառուչ տողեր մատիտով, ածուխով կամ կաւիճով գրել է այս և այն տեղում։

Անւոյ մէջ չէք տեսնի ոչ մի շինութիւն, որոյ պատերը շատ կամ քիչ ծածկւած չըլինեն այդ տեսակ արձանագրութիւններով, զանազան լեզուներով, (հայերէն, տաճկերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն)։

Այդ արձանագրութիւնները բոլորն էլ սրտացաւ բովանդակութիւն ունին թէև, բայց նոցա մէջ կան այնպիսիներ, որոնք աւելորդ չըհամարեցի դուրս բերել յիշատակարանիս մէջ։

Ահա այդ տողերը։

1. Գեղածիծաղ գուտ գարունը ամրելու է այս երկրում. քաջ և անվախ հայ անունը մնալու է միշտ աշխարհում։

2. Եկի, տեսի և ողբացի։

3. Աստուած իմ. ինչու թողիր որ անօրէնները պղծեն Քո սուրբ տաճարը, ինչու թողիր Քեզ սիրող և պաշտող ազգ։ (Այս տողերը ռուսերէն և նրա գրողն է մի ռուս գնդապետ)։

4. Այսքան զօրութիւն ունեցող մի ազգ՝ եթէ մինչև հիմա չէ անհետացել, այսուհետև երբէք չի անհետանայ։ (Այս գրողը ֆրանսիացի է։)

5. Ամեն ազգ ունի իրան հէր ու մէր,
Մէջ աշխարհիս դու ես անտէր մնացէր.
Արարածոց լոյս է բացւել անջնջեր,
Քեզի համար մթոտ, ամպոտ սև օրեր։

6. Հեռւից կերևին ժամ ու զանգատուն.
Բերդն ու պարիսպ նկուն, կիսով քայքայուն.
Քաղաքդ, շէնքերդ անբնակ,

Դէհ, ինչպէս հայու աչք չողբայ անքուն։
Զերևիր թագաւոր, չերևիր զինուոր.
Հայաստան սգաւոր, վա՜խ, էս ինչ սև օր,
Արարատ, քո տխուր ազգդ ցիր ու ցան,
Երկիրդ ոտաց կոխան, ափսո՜ս քեզ հազար։

(Այս գողտրիկ տողերը մի պատուական հայ կաթոլիկ վարդապետի են)։

68. ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Քեզ սպասող չլինաց,
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն.
Գովքդ ասող չլինաց,
Զուր ես գալի, ա՛յ գարուն։

Սև-մութ պատեց աշխարհին,
Սար ու ձոր գառան արին,
Մեզ վայ բերեց էս տարին —
Ո՞ւր ես գալիս, ա՛յ գարուն։

Բիւլբիւլն եկաւ վարդ չունի,
Ծաղկոցը կայ՝ գարդ չունի.
Էլ ո՞վ ա որ գարդ չունի —
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Քեզ սպասող չլինաց,
Զուր ես գալի, ա՛յ գարուն.
Գովքդ ասող չլինաց —
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

69. ԾՈՎԻ ՎՐԱՅ

Դէպի Հողթամար էինք գնում աշնանային մի զով գիշեր։ Գիւղից ելած ծովափի աւազների մէջ կանգ էի առել և սպասում էի քահանային, որի հետ խօսք էինք արել միասին ճանապարհորդելու։

Վերջապէս էր դիրքում վանայ ծովի վրայ։ Զուրը լիքը կանգ էր կրրել, կոխակները մրմռանց նրրով խառնում էին դէպի խորքերը և փրփուրի գծեր կապում. հոտում էին եղեւում էին եղերքների գիւղերը, ծառաստանները. մի այլ կողմ Հողթամար կղզու կէսն էր։

I.

Վերջալոյսն էի գիտում Վանայ ծովի վրայ։ Ջուրը լերդ կանաչ էր կարել, կոհակները միմեանց հրելով հեռանում էին դէպի խորքերը և փրփուրի գծեր կազմում, հեռում երևում էին եղերքների գիւղերը, ծառաստանները. մի այլ կողմ Աղթամար կղզու կէսն էր. հորիզոնի մի կողմի վրայ Կռուց անապատը, իսկ միւսի՝ Առաէր կղզին, որ մի մեծ սև թռչունին նման երբեմն կարծես ընկղմւում էր ջրի մէջ և երբեմն դուրս ցցում իր լերկ գագաթը։

Նաւավար Թորոսն այդ միջոցին նաւակի քիթը ցցել էր աւազի մէջ և միքանի գիւղացիների օգնութեամբ նաւակն էր մացնում ոչխարները։

Մինչ այդ արեգակը հեռզհեռէ ընկղմւում էր. ամպերը մեղմացնում էին իրանց բոցը, լոյսի շառաւիղը աղօտանում, ծովը թանաքի գոյն էր ստանում, կոհակները մեծանում էին, ֆոսֆորային կայծեր արձակում ու միմեանց մղելով՝ գալիս շառաչիւնով փռւում էին ոտերիս տակ։ Եւ Առաէրը թագնւում էր խաւարի մէջ։ Կռուցը անորոշ կերպարանք ստանում, եղերային ծառերն ու գիւղերը նմանում էին մռայլ ստւերների։

Մի ձայն սթափեց ինձ։ Քահանան էր. ձեռին բռնել էր մեծ կապոց և գինու հոդէ սափոր։

—Գնանք, որդի ասաց նա, նաւ մտնենք։

Ու մտանք։ Պատրաստ էր։ Քահանան քղանցքը ծալելով՝ ոլորեց, մէջքի վրայ ցցեց, կապեց ու գինին ցած դրաւ ոտերի մօտ. յետոյ, երբ ես կոթնած կայմին նայում էի սև ջրերին, դարձաւ արևելք և կարդաց։

—Տէր, ուղղեա՛ մեզ զգնացս մեր...

Եւ այդ խուլ աղօթքը, խառնւելով կոհակների շառաչիւնին, նաւակի ծփման ու Թորոսի՝ պարբերաբար նաւակից շերեփով ջուր դուրս թափելուն մի խորհրդաւորութիւն էր սրփռում շուրջը...

Բարձրում, գիւղի մէջ, տեղ-տեղ պլպլում էին ճրագներ. հեռուն - անտառի ծայրերում՝ երևում էին նախիրդների և ածխագործների կրակներ, իսկ անտառի ստորոտները ընկղմւել էին խաւարի մէջ։

Վերջապէս շարժւեցինք։ Թորոսը դաղարեց ջուր դուրս թափելուց, հրամայեց առագաստ պարզել և թռաւ ափի վրայ, որպէսզի նաւակը ջուրը մղէ։

Ծովի տարածութեան հորիզոնից սկսում էր երևալ լուսնի կէսը՝ արծաթազօծ կողերով հայելու նման, և ազօտ լոյսի մէջ ողողելով դողդոջուն ջուրը։

Նաւակը սլանում էր և հեաքերի վրայ պայծառ գիծ թողնում. երբեմն կողը այնքան ծռում էր, որ ձեռքս կոխում էի ջրի մէջ և թոյլ տալիս, որ մատներիս ծայրերից կաթկթեն շողշողուն շիթեր։

Կղզիները անհետացել էին։ Խաւար խորքի մէջ ափն էր, Ներբովդ ու Գրգուռ լեռների կոյտը, և հեռում՝ Սիփանը իր ձիւնափայլ կատարով։ Փչում էր ծովային զով, գրեթէ ցուրտ քամի։

Ծովի ալիքները մեծանում էին, նաւակը սկսում էր մեծալէս շարժւել։ Քիչ յետոյ քահանան պառկեց. իսկ ես մի տեսակ անորոշութեան մէջ, աչքս լուսնի շողքերի տակ սրբատեսակ անորոշութեան մէջ, աչքս լուսնի շողքերի տակ սրբատեսակ անորոշութեան մէջ, աչքս լուսնի շողքերի տակ սրբատեսակ անորոշութեան մէջ, սրթացող կապոյտ ջրերին՝ խորասուզւեցի երազների մէջ...

II.

— Կատաղի ծով ունինք, խօսեց Թորոսը. անցեալ տարի հէնց այս կողմերումն էր, որ մի նաւակ ընկղմւեց և մօտ քառասուն հոգի խեղդեց։

—Քառասո՞ւն...

—Մէջն էլ մի քահանայ կար ու երկու կին։ Աղթամար ուխտի էին գնում խեղճերը... Տես, վարժապետ, քիչ աշ նայիր. այդ ալիքները տեսնո՞ւմ ես. մեծանալու-մեծանալու են և ծովը օրօրելու... Ը՛հ, եկան... Զրվախենաս...

—Հեռից, իջնելով ու ելնելով, թանձր կանաչագոյն մի քանի խոշոր կոհակներ, հաւաքւելով ուրիշ շատերի հետ՝ մեծացած ու յուզւած, սրացան դէպի նաւը։ Մի ընդհանուր շարժումով՝ ջրերը նաւակի չորս կողմից ետ քաշւելով փոսացան, ապա նորից դիզացան եկող կոհակների հետ և երբ նաւակը շիւղի պէս նրանց կատարի վրայ էր թռնում—պայթիւնով

ճայթեցին նրա կողին ու ջրի լեղի անձրև տեղացին մեզ վրայ։
—Այս առաջինն է... ասաց Թորոսը և ղեկը դարձրեց։

—Դեռ սա ինչ է որ, շարունակեց նա. այնպէս սոսկալի սարեր են կազմում, այնպէս կատաղաբար, երկու ածդահարների նման միմեանց վրայ գահավիժում ու թաւալում, որ Աստուած մի արասցէ, եթէ նաւակը մէջն ընկնի, փշուր-փշուր կըլինի... Բայց փոթորիկ չենք ունենալ...

Անցիր ձախ կողմս, որ էլի չըթրջուես.

Անցայ ձախ կողմը։ Նորից մի ալիք պայթեց նաւակի կողի վրայ, և լցաց նրա քիթը։

Ու նաւակը սլանում էր, ճեղքում սև ջրերը և ծփում մեծ ալիքների վրայ։

70. ԵՐԱՍԽԻ ՎՐԱՅՈՎ

I.

Ամենքս նստել, տեղ էինք բռնել մեծ փուրգօնի մէջ, տախտակէ կամարի տակ կծկուած։

Գնում էինք, ամբողջ ընտանիքով և ընդմիշտ գաղթում էինք գիւղից։

Շարժուեց փուրգօնը, հեռացրեց մեզ գիւղի տեսքից, նրա դաշտ ու լեռներից, մօտը հոսող և այժմ այնպէս ուրախ փայլող գետակից...

Պէտք է որ տասը տաներկու տարեկան լինէի մեր այդ գաղթականութեան ժամանակ։

Իհարկէ, ես էլ ընկերներ ունէի, ունէի և իմ սիրած անկիւնները, բայց տխուր չէի և ոչ էլ ցաւում էի գիւղից հեռանալու համար։

Չըգիտեմ ինչու էր այդպէս։ Արդեօք լաւ ընկերներ չունէի, թէ մանկական թեթևամտութիւն էր այդ։

Ընդհակառակը, այդ ճամփորդութիւնը զարմացնում էր ինձ։ Առաջս փռուած էին ընդարձակ, ժպտուն դաշտեր՝ լի բազմատեսակ և գոյնզգոյն ծաղիկներով. կարկաչում էին առուակները, ճլլում էին թռչունները և մեր փուրգօնը վազում, գըլորուում էր այդ ամենի միջով։

Մի քանի անգամ ցած թռայ փուրգօնից, ծաղիկների փնջեր գցեցի ներս, ծառերից ճիւղեր կոտրեցի, յետոյ նորից հեծայ փուրգօնի հետևում իմ տոպրակի վրայ ու կանչեցի եղբայրներիս.

Դէհ, տղերք, մի բան երգենք...

Զայնակցեցին, ես մի երգ սկսեցի. բայց շուտով ստիպուեցինք լուռ կենալու, որովհետև փուրգօնի ցնցումները խայտառակ կերպով փշրտում ու չարդում էին թէ մեր կողերը և թէ մեր երգը։

Այդպէս էր ահա, որ դուրս ելանք իմ հայրենի գիւղից և դաղթեցինք դէպի հեռու աշխարհներ։

II.

Մութին հասանք մի գիւղ. իսկ միւս առաւօտ շուտով դարձեալ լցուեցինք մեր արկղի մէջ և սկսեցինք իջնել դէպի մի աւազոտ ու ընդարձակ դաշտ՝ անցնելով կոյտ կոյտ բլուրներից։

Օ՜հ, դաշտ եմ ասում, բայց աւելի ճիշտ կըլինէր ասէի՝ անապատ։

Ոչ մի ծառ։ Նոյն իսկ խոտը այնտեղ քիչ էր, դեղնած ու չորացած։ Շուրջդ ամբողջ աւազ է, բայց աւելի հող ու անտանելի փոշի։

Էլ սև ոչինչ չըմնաց։ Փոշին շերտ կապեց մեր շորերի ու մազերի վրայ. քամին սուրաց ու սուրաց. մի տաք, խեղդող քամի, մինչև որ վերջապէս հասանք աւազների և կարողացանք բանալ աչքներս ու բան տեսնել։

Եւ առաջին բանը որ տեսանք՝ զարմանքից կանչեցինք ամենքս։

Ուղիղ մեր դիմաց, ծանր ու մեծ՝ սահում գնում էր վերևից ներքև մի լայն, շատ լայն գետ, պղտոր ու կարմիր ջրերով։

Օ՜հ, ինչպէս ծանր էր գնում նա և ինչպէս շքեղ էր։

-Երասխ, - կանչեց հայրս,—Երասխ գետն է։

III.

Քիչ յետոյ մեր ֆուրգօնը կանգ առաւ ուղիղ գետափին։ Ցած իջանք։ Բեռները բոլոր իջեցրին, մի մեծ կարպետ փռեցինք գետնին, մայրս ափոցը բացաւ և նստանք ճաշի։

Գետեզերը այդտեղ ամայի էր։ Մի հողաշէն խրճիթ միայն կար, մէջը զինուորներ, որոնք ներս ու դուրս էին անում, հօրիցս ինչ որ թղթեր ուզեցին, ներս տարան և ետ բերին տուին, յետոյ, երբ քիչ մեզ զննել էին՝ թողին հեռացան։

Հայրս բացատրեց մեզ, որ գետի միւս ափը պարսկական հող էր, և մեզնից այստեղ, ռուսաց հողում, անցագիր հարցրին ու թոյլատրեցին սահմանն անցնելու։ Անցագրի պաշտօնատունը և մաքսատունը գտնւում էին մեզնից բաւական հեռու, ցածում։

Ճաշը վերջացնելուց յետոյ, մենք երեխաներս գետափ իջանք և զննել սկսեցինք եզերքին կպած մի մեծ նաւ։

Այդպէս նաւ իսկի չէի տեսել պատկերի վրայ. իսկ մեր թղթէ նաւակները բոլորովին ուրիշ տեսակ էին։ Սա մի խոշոր արկղ էր. ուղղակի անդուկ, չորս կողմը փայտէ վանդակ շինած։ Մի երկար ձող էլ, որ թիակը պէտք է լինէր, արկղի միջից պարզւում գնում էր և խրւում ջուրը։

— Լաստ է.— հասկացրեց մեզ հայրս, որ մօտ էր եկել։

Դրանով էինք միթէ անցնելու։ Այդ ջրոտ, ցեխոտ ու լաստածուն յատակի վրա՞յ էինք հաւաքւելու։ Իսկ մեր ֆուրգօնը, ապրանքը, ձիերը։

— Կրտեսնէք,— ժպտաց հայրս — բոլորն էլ կանցնեն։ Գնացէք առայժմ գետափից հեռու։ Մի մօտենաք ջրին։ Այստեղ ափերը փլում են յանկարծ։ Իսկ եթէ ջուրն ընկաք, էլ պրծնելիք չի լինի։

— Կրխեղդւէնք։

Եւ ինչպէ՞ս...— ասաւ մեծ եղբայրս—այ, այսպէս կրխաւեմ ջրի մէջ. յետոյ, ղօլ-ղօլ-ղօլ... ջուրն ու ցեխը կրլցւի փորդ ու վրդդ... ջրի տակը։ Մէկ էլ էն կրտեսնես՝ որ ծոփն ես հասել.,.

— Իրա՞, ինչ ցեխոտ է։

— Կարմիր ցեխ է։

— Կասես արիւն լինի... Լերդացած ու հողախառն արիւն։

IV

Վերջապէս լաստը վերադարձաւ։ Հիմի հերթը մերն էր։

Նստեցինք բաւական վախվխելով։ Մշակներն ու լաստավարը ներս տարան մեզ ու մի որոշ տեղ նստեցրին կարպետի վրայ։ Հայրս ու մայրս խստիւ պատուիրում էին, որ տեղներիցս չշարժւենք։

Այնուհետև լաստավարը հօրիցս իրաւունք խնդրեց ոչխարների հօտն էլ մեզ հետ անցկացնելու։

Տեղ կար։ Ոչխարներին ու շներին քշեցին ներս և ժողովեցին մեր կողքին։

Ոչխարները խրտնում էին, առաջնորդ երկու այծերը պոզերով փորձեցին դէմ գնել։ Երբ լաստը շարժւեց ոչխարները կանգնած մնացին և մինչև անգամ վախից սկսեցին դողալ։

Այծերը միայն հանդարտ չէին մնում։ Տեղները նեղ էր։ Այս ու այն ոչխարին էին հրում։

Բայց երբ լաստը հոսանքի մէջ մտաւ ու սկսեց պատռել ու անցնել և երբ ջրերն ելան ու խփել սկսեցին լաստի կողերը, այծերը աւելի գժւեցին։

Մենք ասես վախից կծկւել՝ իրար էինք կպել։

Մօրս աչքերի մէջ էլ սարսափ էր նկարւած։ Գրկել էր մեզ ու նստել։

— Մի նայէք, ջրին մի նայէք..,— մռմռում էր նա։

Հանգիստ ու անվրդով էին միայն թիակի վրա ընկած լաստավարը, հովիւները, այլև շները։

Ափն իջանք։ Լաստը ետ դարձաւ ֆուրգօնը ու ձիերը բերելու, իսկ մենք ջրի եզերքին՝ սպասում էինք։

Մի քանի ժամից յետոյ մեր ֆուրգօնը պատրաստ էր նորից մեզ տանելու մեր նոր հայրենիքը։



Դիտեցէք այս պատկերը. Ի՞նչ էք տեսնում նրա վրայ պատմեցէք և գրեցէք ձեր տպագրածը։

71. ԴԷՊԻ ՓՈՔՐ ՄԱՍԻՍԻ ԳԱԳԱԹԸ

Փոքր Մասիսը՝ ինչպէս Արարատեան բարձրութիւնների երկրորդը, ունի իր ազդեցութիւնը ժողովրդի երևակայութեան վրայ։ Դա կոնաձև բարձրանում է Արարատեան լեռների շղթայից, Մեծ Մասիսի դրացին է և գտնւում է սրանից հարաւ արևելեան կողմը։ Փոքր Մասիսի բարձրութիւնն է 12,840 ոտնաչափ ծովի մակերևոյթից։

Փոքր Մասիսի մասին ժողովրդի մէջ տարածւած են պէս-պէս առասպելներ, որոնք զանազան կերպով արտայայտում են ժողովրդի հայեացքը այդ լերան մասին։ Մի քանիսը պատմում են, որ Փոքր Մասիսի վրայ կան վիշապներ և օձեր ահագին մեծութեան, այդ պատճառով խիստ դժւար է, համարեա անկարելի է նրա գագաթը բարձրանալը. ոմանք պատմում են թէ գագաթը մեծ տափարակ տեղ է և վրան մի բաւական մեծ լիճ կայ, իսկ օդը սաստիկ սառն է, մինչև անգամ յուլիս ամսին. ոմանք էլ ասում են թէ գագաթի վրայ «աղնաւուրների» (հսկաների) գերեզմաններ կան. վերջապէս մի քանիսներն էլ լսել են, որ գագաթի վրայ ուղտերի քարաւան կայ քարացած, նաև ուղտապանն էլ այնտեղ քարացած կանգնած է, մէկ ձեռքով բռնած ունի առաջնորդող ուղտի ոսանձը, իսկ միւս ձեռքին իր գաւազանը։ Շատերը համոզւած են, որ բարձրանալիս լերան խորքերից կամ տակից մշտապէս լսւում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ սրբատապատառ կարող է լինել։

Յուլիսի 17-ին 1881 թ. առաւօտեան 4 ժամին ձիաներով գնացինք դէպի Փոքր Մասիսի ստորոտը և առաւօտեան 5 ժամին այնտեղ հասանք, որտեղից պէտք է ոտքով բարձրանայինք։ Մենք բարձրանում էինք արևմտեան կողմից։ Նկատելով գագաթի վրայ ամրոցի պարսպի նման բարձրութիւն, ուղիղ դիմեցինք դէպի այն տեղը, Փոքր Մասիսի արևմտեան կողմից։ Ստորոտը փոքր ինչ քարքարոտ, բայց կանաչապատ է։ Բարձրանալով, բոյսերի տեսակները պակասում են և քարերը աւելի ու աւելի աչքի են ընկնում։

Երբ բարձրութեան կէսը անցանք, արդէն անկարելի եղաւ մարմինը ուղիղ բռնած բարձրանալ, և ստիպւած էինք առաջ գնալ. չորս-ոտանի համարեա երկու ժամ շարունակ։ Ինչքան բարձրանում էինք, այնքան աւելանում էր հրաբխային քարերի քանակութիւնը և առաջ գնալը դժւարանում էր։ Ես մեծ զգուշութեամբ էի ոտքս դնում իւրաքանչիւր քարի վրայ կամ ձեռքով բռնում քարից, որովհետև այդ քարերը կարծես թէ մի պատճառի էին սպասում տեղաշարժ լինելու համար։ Եթէ այդ քարերից մէկը գլորւէր, հետը պէտք է տանէր հարիւրաւոր իր նման նաև իրանից մեծ քարեր և առաջին զոհը կըլինէր մօտի մարդը, իսկ յետոյ նրա յետևից բոլոր բարձրացողները։ Երբ բաւական բարձրացել էինք, տեսանք որ մեզանից շատ ցած ամպեր են լողում օդի մէջ. դոցա շարժւելուց և ահագին բարձրութիւնից ցած նայելուց գլուխս այն աստիճանի պտտւում էր՝ որ յոյս մի բոպէ կտրւեցաւ գագաթը հասնելու։ Իմ հոգեկան այդ տանջանքը չըյայտնեցի ընկերներիս, որպէսզի չըյուսահատեցնեմ նոցա, բայց ընկերներս շուտով իրանք յայտնեցին, որ իրանց գլխները պտտւում են։ Մենք ստիպւած էինք իւրաքանչիւր 10 քայլ հանգստանալ, որովհետև օդը անոսրանում և մեր շնչառութիւնը արգելւում էր։ Երբեմն օձի պէս սողալով, երբեմն մէկ քարից դէպի միւսը թռչելով՝ հասանք այնտեղ, որտեղ բարձրանում էր պարսպաձև քարափը։

Բարձրանալիս կարծում էինք, որ այդ քարափը պէտք է լինէր գագաթի վրայ, բայց տեսանք որ դեռ կայ երեք բարձրութիւն անցնելու մինչև գագաթը հասնելը։ Այս պարսպաձև քարափի տակ հանգստացանք։ Դա աւազաքարից է կայացած և վեց սաժենաչափ ուղիղ բարձրանում է, դարձնելով իր մի երեսը դէպի արևմուտք։ Ես նստած էի այդ քարափի տակ՝ երեսս դարձրած դէպի հիւսիս-արևելք։ Իմ առաջ կանգնած էին այն երեք բարձրութիւնները, որոնց վրայից անցնելով պէտք է գագաթը հասնէինք։ Այդ բարձրութիւնների աջ և ձախ կողմից՝ այսինքն Մեծ Մասիսի և Պարսկաստանի կողմից Փոքր Մասիսը սկզբից մինչև վերջն աւազոտ և մանրաքարոտ

լինելով՝ քանդւել է։ Այդ տեղից ցած նայելը զարհուրելի է։

Այդ երկու կողմից փլածների մէջ մնացել մի արշին լայնութեամբ ճանապարհը, որով մենք պէտք է գնայինք դէպի գագաթը։

Այս սարսափելի ճանապարհը մեր առաջին էր, երբ յանկարծ լսեցինք երեք անգամ իրար ետևից հրացանի որոտում։ Իմ առաջնորդ Մարտիրոսը երկու զազախի հետ մեզանից առաջ էր գնացել և գագաթից տեսնելով որ մի ահագին արջ ուղևորւում է դէպի մեր կողմը, վիրաւորել էր նրան գնդակով։ Զայրացած արջը գլորում էր Պարսկաստանի կողմը ահագին քարեր, որոնք մի սաստիկ դղրդոց էին բարձրացնում։

Ես առաջարկեցի ընկերներիս բարձրանալ։ Մօտեցանք մի արշինանոց լայն ճանապարհին և բարձրանում էինք չորս-ոտանի։ Բարեբախտաբար փչում էր բարակ քամի. բայց եթէ քամին սաստիկ լինէր, անկարելի կըդառնար այդ նեղ ճանապարհով անցնելը։ Վերջապէս անցանք երեք բարձրութիւնները և հասանք գագաթը։ Նայեցի և տեսայ որ 10 ժամն է. ուրեմն բարձրացել էինք 5 ժամում։—Փոքր Մասիսի գագաթը կունենայ իր շուրջը 1000 քայլ, տափարակ չէ, այլ հարաւ-արևմտեան կողմից աստիճանաբար բարձրանում է դէպի հիւսիս-արևելք, այսինքն մօտաւորապէս դէպի Դաւալու գիւղի կողմը։ Փոքր մասիսը հին ժամանակներում եղել է հրաբուխ, և այդ հրաբխի նախկին բերանից մնացել է միայն մի կիսալուսնաձև մասը, որ 1 սաժէն խորութեամբ փոս է կազմում և իր ուռուցիկ կողմով դարձրած է դէպի հարաւ-արևմուտք։ Այդ փոսում կիտւած է ամենամաքուր ձիւն բաւական մեծ քանակութեամբ, որ տաք ժամանակ նաև շուտ հալւելով չէ կարող լճակ գոյացնել, ինչպէս և իմ տեսած օրը, երբ օդը տաք էր, բայց հալւած ձիւնը ծծւում էր աւազոտ գետնի մէջ։

Տեսարանը Փոքր Մասիսի գագաթից գեղեցիկ է. հիւսիսային կողմից փռւում է մարդու առաջ Արարատեան լայնատարած դաշտը։ Արաքսը սպիտակ ժապաւէնի նման հազար ու մի զանազան պտոյտներ անելով, անբաւական է իր դրութիւնից։ Արաքսի ձախ կողմի գիւղերը կանաչ ծառերով պատած

հեռից նմանում են օազիսների, որ պատած են ցորենի դեղնագոյն դաշտերով։ Գագաթից երևում է Դարալագեազի (Հայոց Ձոր), Սևանայ ծովի և Դարաչիչագի (Ծաղկաց Ձոր) լեռները։ Արևմտեան կողմը բարձրանում է Արագածը, իսկ արևելեան կողմում երևում է Բաշնորաշէն գիւղը, որ Երևանից 79 վերստ է և Նախիջևանը՝ ամփոփած թանձը օդում։ Բաւական մեծ բլուրների շղթայ անցնելով Արարատեան դաշտը, բաժանում է Շարուրայ դաշտը Արարատեան դաշտից թողնելով մի փոքրիկ անցք, որ կոչւում է Գայլի Դուռ։ Արաքսի աջ ափից մինչև մասիսների ստորոտը լայնութեամբ 20 վերստ և երկարութեամբ 100 վերստ մնացել է բոլորովին ամայի. չընայելով որ հացը պատւական է և Արաքսի ջուրը անցնում է ապարդիւն։

Դառնալով դէպի հարաւ, բացւում է մարդու առաջ Բայազէտի դաշտը։ Աջ կողմում երևում է այն ժայռը, որի տակ շինւած է Բայազէտը, բայց քաղաքը, ժայռի միւս կողմը գրաւելով՝ չէ երևում։

Ճանապարհորդութեանս հետևանքը.

1) Ժողովրդի պատմածները սուտ են։

2) Փոքր Մասիսի վրայ լիճ չկայ և չէ կարող գոյանալ։

3) 267 տարուց աւելի է որ Փոքր Մասիսը, առաջուց հրաբուխ լինելով հանդել է (1614 թւի գերեզմանաքարը ապացոյց է)։

4) 1840 թ. չէ մատնակցել Մեծ Մասիսի արտաշնչութեանը (գերեզմանաքարերը ապացոյց են)։

5) Փոքր Մասիսը Մեծ Մասիսի հետ ստորերկրեայ հաղորդակցութիւն չունի (1840 թ. չէ մատնակցել արտաշնչութեանը)։

6) Կարելի է կարծել որ Փոքր Մասիսը ուրիշից անկախ հրաբուխ է եղել։

7) Փոքր Մասիսը գոյացած է ոչ թէ լեռ՝ ամուր քարերից ինչպէս Մեծ Մասիսն է. այլ լաւայից և աւազաքարերից։

8) Գագաթի օդի տաքութիւնը յուլիս ամսի դեղեցիկ եղանակին, արևի տակ, հասնում է մինչև 17 աստիճանի, իսկ

72. ՀԱՅ ՈՒԽՏԱՒՈՐԻՆ

Գնաս բարով, ա՛յ ուխտաւոր,
Երանի՛ քեզ, հա՛յ ուխտաւոր,
Որ կարօտով ու սիրառատ
Ուխտ ես գնում դէպ Արարատ։
Զեփիւռներով, ծաղկանց բոյրով,
Ինչպէս ծնող սիրագորով,
Քեզ կողջունեն զմրուխտ հագած
Գեղամ սարերն ու Արագած.
Եւ հարազատ աչքի նման
Քեզ կըժպտայ վճիտ Սևան,
Որ լեռների շուքերի հետ
Խաղ է անում, խայտում վէտ-վէտ.
Փայլփլում է ծփանքներով,
Յօրինում է լոյսերի ծով,
Եւ մերթ վշտով ու տխրութեամբ
Սևանում է, ինչպէս մութ ամպ...

73. ՎԵԶՈՒՎԸ

Այժմ քայլում ենք Վեզուվի փեշերի վրայ, լաւայով պատած զառիվայր ճանապարհով։ Հազւագիւտ բոյսերը լաւայի կարմիր զանգւածի մէջ կոզած են, մուրացկանի խեղճութիւնն ունին և կարծես թոզութիւն են հայցում խստասիրտ բնութիւնից, որ համարձակւել են աճել այստեղ։ Մեր ձիերը քայլում են մի նեղ փոշոտ արահետով, որի երկու կողմում ինչպէս ցանկապատ, շարւած են լաւայի անձև, այլանդակ կտորներ։



Ստորոտները կամաց-կամաց աւելի զառիվայր են դառնում և մեր ձիերը աւելի և աւելի դժւարութեամբ են բարձրանում։

Ահա լեռան այն մասը, որտեղից զառիվայրը դառնում է համարեա ուղղաձիգ։ Թողնում ենք ձիերն այստեղ ստորոտում, մի-մի երկայն լեռնային ձեռնափայտ ենք վերցնում և սկսում վեր հւնել։ Քայլում ենք հոսանիւթ աւազի մէջ, բարձրանում ենք ծայրայեղ դժւարութեամբ, ամեն երկու քայլից յետոյ մի քայլ յետ ենք ընկնում, երբեմն ծունկների վրայ գալիս թանձր աւազի մէջ, որի մէջ թաղւած են մեր սրունքները և այսպէս անվերջ։ Լեռան վրայ՝ այստեղ-այնտեղ, մի քարի վրայ, մի թմբի ծայրին երևում են խտալացիներ. նրանք մէկ-մէկ, երկ-երկու նստած, կամ ծոյլ-ծոյլ պառկած, ծխում են անընդհատ։ Ճանապարհորդներին տեսնելով՝ նրանցից մի քանի հոգի շտապով ցած են սողում աւազի վրայով, հասնում են մեզ և առաջարկում են պարաններ, որոնցից մենք պիտի կախւենք, իսկ տէրերը մեզ պիտի քաշեն ու այսպէս բարձրանանք։ Ծանր ու անախորժ մի առաջարկութիւն թէ՝ մեզ համար և թէ իրանց. աւելի լաւ է սողալով բարձրանալ, քան թէ օգտւել այդպիսի ծառայութիւնից։ Հրաժարւում ենք և շարունակում դժուխային վերելքը, մերթ ընկնելով, մերթ բարձրանալով թանձր ու հոսող աւազի մէջ։

Երբեմն-երբեմն լսւում է ահագին որոտ, որից ամբողջ լեռը թնդում է և նրա հետ միասին մեր գլխի վերևը ծխի ոլորտը բարձրանում է, հա բարձրանում։ Քանի վեր ենք ելնում, այնքան աւելի են տաքանում քարերն ու աւազը մեր ոտների տակ։ Ճեղքւածքներ կան, որտեղից տաք գոլորշի է փչում, ձեռք մօտեցնել չի լինում։ Կատարին մօտիկ գոլորշի շնչող այդ բացւածքներն այնքան շատանում են, որ լեռը հազար բերանով մի հրէշի նման կարծես նստած՝ հեւում է։

Մի ժամից աւելի է, որ քայլում ենք։ Հասնում ենք վերջապէս այնտեղ, որից բարձր, դէպի կատարը գնալ չի կարելի առանց պեռուիեան կարգած և տեղին ծանօթ առաջնորդների, որոնք թւով մօտ քառասուն, կատարի շուրջը շղթայ են կազմել։ Նրանց ծառայութիւնից օգտւելու համար պէտք է վճարել մարդագլուխ չորս ֆրանկ։ Կատարում ենք և այդ պահանջը։ Այժմ մեր առջևն է իսկական կատարը, ծծումբով պատած և գոլորշի շնչող մի հսկայական կօնուս, որ կարծես արւեստական ձևով է դրւած լերան մէջքին։ Այստեղ վերելքն աւելի դժւար է, զառիվայրը համարեա ուղղաձիգ է պատի պէս։ Մեր վարձած առաջնորդները մնում են ներքև, իսկ մեզ ընկերանում է մի պաշտօնական առաջնորդ դէպի կատարը։ Մարդը հաւատացնում է, թէ լաւ օր ենք եկել, որովհետև հրաբուխը գործում է անսովոր ուժով։ Քայլում ենք ծծմբի միջից, խոնաւ ու տաք հողի մէջ թաղւած մինչև սրունքներս։ Տաք գոլորշու ամպը մեր ոտների ներքև և մեր գլխի վերև այլանդակօրէն պտոյտներ է անում, երբեմն մեզ խսպառ ծածկում, ծծմբահոտով մեր քթերը լցնելով և երբեմն քամու շնչով ցրւում է գալիս, հեռանում։ Որոտմունքն այստեղ դառնում է խլացուցիչ, ասես հարիւրաւոր թնդանօթներ են արձակում մեզանից մօտիկ, մեր ոտների տակ լեռը դողում է ահագին դղրդիւնով, այդ ձայնը մեզ և վախեցնում է և զրաւում։ Մենք շտապում ենք։

Ահա և կատարը։

Մենք կանգնել ենք այժմ այդ անդունդի շրթին և ցած ենք նայում այնտեղ։ Ծծմբի թանձր ծուխը և գոլորշին բռնել են այդ դժոխային վիհը։ Ոչինչ չի երևում, բայց լսւում են այնպիսի ձայներ, որոնցից մարդու էութիւնն ամբողջապէս սասանւում է։

Երբեմն քամին փչում է դէպի մեզ, ծծումբը իր սուր հոտով լցնում է մեր աչքերն ու ռունգները. մի վայրկեան կորչում ենք ամպերի մէջ, հազում ենք սաստիկ. ապա խեղդող ամպն անցնում է քամու թափով, և դարձեալ երկիւղով կռացած, աչքներս չռած՝ վայր ենք նայում, որտեղից լսւում են ձայները։ Ոչինչ չի երևում։ Մութ է այնտեղ. ծխի ու գոլորշու ամպերը հազար ու մի այլանդակ, հրէշաւոր ձևերով, ինչպէս մի անասելի մրրիկով մղւած՝ պտոյտներ են գործում այդ խաւար տարածութեան մէջ, անդունդների վրայ, դիպչում են պատերին, տեղ են փնտռում փախչելու, երկնքում ապաստան փնտռելու, կարծես սոսկում են իրանցից ներքև կատաբւածից։ Սակայն ամպերը փախչել, ազատւել չեն կարողանում, իրանց ճիւղերի մէջ գալարւում, ոլորւում են հազար ու մի ձևերով և շարունակում են ծածկել այդ անդունդի բերանը, որի տակ, խորքից, շատ խորքից, մեր ոտների տակ, լսւում է մի խուլ դղրդիւն. լեռը դողում է, անքում է ցաւով. սառերկրեայ հաւածներն ահագին են, իսկ մենք բռնւած ենք սոսկումով։

Քամին սաստկացաւ. նրա մի ուժեղ պտոյտը չըգիտես ինչպէս, կատաղից ներս ընկաւ այն ահագին բացւածքի մէջ։ Քամին իրար խառնեց ամպերը, որոնք աւելի կատաղաբար ու արագութեամբ սկսեցին սաւառնել անդունդների վրայ, ձայներն ու որոտը դարձան աննկարագրելի, և յանկարծ, կարծես կապանքներից ազատւած՝ դուրս թռան այդ դժոխքից, կապացան դէպի լայնարձակ կապուտակը։ Այժմ տեսարանը վեսլացան դէպի լայնարձակ կապուտակը։ Այժմ տեսարանը վեհորէն ահռելի է, մենք տեսնում ենք նրա խոնաւ, լպրծուն և ծծումբի բաց շերտով ծածկւած պատերը. բոլորովին ներքև, խորութեան մէջ, երևում են երկու ահագին հրաբխային բերաններ, որպէս երկու վառւած հսկայական թոնիրներ։ Ստորերկրեայ մի հրային մրրիկ է խաղում այնտեղ, և նրա թափով բոցերը մեծամեծ խուրձերով դուրս են ձգւում բարձր

բարձր և թանձր ծխի ոլորտների հետ խառնւած. իսկ նրանց հետ միասին շիկացած, կրակ կարած մեծ ու փոքր քարեր ձգւում են շեշտակի թափով, ուղղահայեաց դէպի վեր, վզվզում են, շըշւում, շաչում են՝ ինչպէս փոթորկի առաջ հեծող ծառեր, և ապա պտոյտներ գործելով ընկնում են կամ բացւածքի շրթներին, կամ հէնց նոյն անցքի մէջ, որտեղից մի վայրկեան առաջ դուրս ընկան։ Բայց անդունդներում գործող փոթորիկը նրանց այնտեղ հանգիստ չի տալիս, կրկին դուրս է շպրտում նոյն թափով, նոյն որոտով, նոյն ուղղութեամբ և այսպէս անվերջ։

Արքիի Սիրտակ

Խայրդ ատողանում է։ Սիրտակը շատ լաւ է։ Գիրքերիդ հանգիստ մնում է։ Սիրտ ապ և վրանգ չկայ։ Մի քանի օրից յետոյ նա նորից կսկսի իր գործերին նիրհել։ Երևակայիր չիս կարող, թէ որքան բանգիրքդ այս երկու շաբաթւայ ընթացքում։ Առաջին շաբաթը իս գրիչ անգամ անկապրի։ Այնպես չիմ խօսում հոգեկան բանգանքների մասին։ Թնչ այնպես էր թւում, թէ իս կանգնած իմ անդունդի ծայրին։ Ուրախ իմ, անչափ ուրախ, որ յաջողութեամբ անցաւ այս մեծ վտանգը։

Մթրոնի բղջոն էլ ուրախ էին։ Նամակներ գրիր, կոգիա։ Ինչպէս էին գնում դասերդ։ Յուսով եմ, այժմ ուսուցիչներդ գոհ էին քեզանից։

Բարևներ և համբոյրներ բղջորիցս։

Քո մայր Աղխասբէթ։

1913 թ. 22 Փետրուարի

Գանձակ։

74. ԴԷՊԻ ԶԱՆԳԼԻԱՅ ԼԻՃԸ

I.

Ապրիլի կէսերին ես և իմ առաջնորդը ձիով դուրս եկանք Կաղզւանից և ուղևորուեցինք դէպի Զանգլի, որտեղից գնալու էի Շատևան գիւղը։ Կաղզւանից շօսսէի ճանապարհով իջանք Արաքսի կամուրջը։ Ամբողջ ճանապարհը մի սքանչելի ծառուղի է։ Աջ ու ձախ գտնուում են ծառեր, այգիներ, պարտէզներ, առուները խոխոջալով անցնում են այգիների միջով։ Հասնելով Արաքսի կամուրջը, մենք շեղուեցինք շօսսէից և սկսեցինք բարձրանալ դէպի հանդիպակաց լեռները, որոնց յետևն է գտնուում հնութիւններով այնքան հարուստ ու անուանի Զանգլի գիւղը։ Ճանապարհը, որ մի նեղ, քարքարոտ, անկանոն շաւիղ է, շարունակ վեր է բարձրանում։ Վերելքը տեղ-տեղ այնքան ուղղահայեաց է, որ մենք ստիպուած ենք ձիերի բաշերից պինդ բռնել վայր չընկնելու համար։

Մեր ձիերը շատ ուժեղ էին, բայց և այնպէս հազիւ հազ էին մեզ տանում։ Նրանք ամբողջովին քրտինքի մէջ մտած մէկ դէպի աջ, մէկ դէպի ձախ էին օրօրւում, կարծես հրէս ուր որ է կը սայթաքին և միասին դէպի անդունդը կը թռչենք։ Խղճում ենք ձիերին, բայց և ոտքով անկարող ենք գնալ, այնուամենայնիւ երբեմն ոտքով ենք բարձրանում, որովհետև ճանապարհի երկարութիւնը և վերելքը ուժասպառ են արել ձիերին. նրանց սիրուն, փայլուն աչքերը պղտորուել են և յուսահատ արտայայտութիւն ստացել։ Որքան խղճուկ արտայայտութիւն ունի ձին յոգնած ժամանակ և առհասարակ որքան արտայայտիչ են ձիերի աչքերը. հանգիստը, խինդը, երկիւղը, քաղցն ու յոգնածութիւնը ամենացայտուն կերպով արտայայտւում են ձիերի աչքերի մէջ։ Ասում են, կան այնպիսի ձիեր, որոնք տխուր վայրկեանին լաց են լինում ճիշտ այնպէս, ինչպէս մարդս է լալիս...

Մեր այս անմխիթար ճանապարհորդութեան մէջ մեզ մխիթարում է բնութեան գեղեցկութիւնն ու վեհութիւնը։ Նայում ենք ներքև։ Մեր ոտքերի տակն է Արաքսի հրաշալի հովիտը, որի միջով արծաթէ ժապաւէնի պէս գալարապտոյտ անցնում է գետը։ Արաքսի յորդացած ջրերը խոշոր ալիքներով զարկւում են ափերին և ահագին աւերմունքներ են առաջացնում։ Կատաղի է Արաքսը գարնանային ամիսներին և վայ այն միամիտ կամ յաւակնոտ ճանապարհորդին, որ կը յանդգնի ջուրը մտնել։ Ժողովրդական դարձուածն իզուր չի ասում, թէ գարնանը Արաքս մտնողը արժանի է խեղդուելու, որովհետև խելք չունի։ Հովիտի աջ ափին գտնւում են Զանգլայ սարերը, իսկ ձախ կողմին կարծես ղարսպի պէս վեր են ցցւում հայկական պարի բարձրաբերձ լեռները իրենց անդնդախոր ձորերով, ձորակներով, որոնցից գարնանային արևի տակ հալւած ձեան ջրերը քարից քար թռչկոտելով թափւում են Արաքս գետը։ Սարերի կատարները դեռ ևս ծածկւած են սպիտակ ձիւնի շերտերով. գարնանային արևի տաք ճառագայթները հալեցնելով ձիւնը կազմում են անթիւ առուներ ու առուակներ, որոնք հեռւից փայլփլում են որպէս զոյնզգոյն գոհարներ։

Որքան հրաշալի է մեր երկիրը մանաւանդ գարնանը, երբ ողջ տիեզերքը զարթնում է խոր քնից, երբ հսկայ լեռներն ու ձորերը թոթափելով մահուան կապանքները, նորից նոր կեանք են ստանում...

Քանի վեր ենք բարձրանում, այնքան նկատելի է օդի պակասը. մենք դժուարութեամբ էինք շնչում։ Հետզհետէ օդը ցրտանում է, փոխւում են բոյսերի տեսակները։ Ամեն ինչ արդէն լեռնային է, և օդը, և բոյսը, և բնութեան տեսարանները...

Անցնելով բարձրավանդակի սիրուն, կանաչկոտ դաշտերով, որոնց վրայ յաճախ պատահում են ճահիճներ ու փոքրիկ լճակներ, ուր ժամայ ճանապարհորդութիւնից յետոյ մենք հասնում ենք Զանգլի գիւղը։

Մենք իջանք պետական դպրոցի ուսուցչի տանը։ Ուսուցիչը, որ մի երիտասարդ Կաղզւանցի էր, սիրով ընդունեց մեզ։ Խեղճի տրամադրութիւնը շատ վատ էր, կինը հիւանդ էր, հարկաւոր էր բժիշկ հրաւիրել, բայց որովհետև իրանց շրջանում ոչ բժիշկ կար և ոչ էլ ֆելդշէր, գիւղական պառաւ կանանց ու հասկացողների ապարդիւն միջոցներին դիմելուց յետոյ, ստիպւած էր մեր եկած դժոխային ճանապարհով գնալ Կաղզւան բժիշկ հրաւիրելու։

II.

Ուսուցչի և այլոց ուղեկցութեամբ տեսանք հին եկեղեցին, որ շինւած է Մշոյ ս. Կարապետ վանքի օրինակով։

Հէնց Զանգլի բառն էլ նշանակում է ս. Կարապետ։ Եկեղեցու անունով գիւղն էլ է կոչւում Զանգլի։ Զանգլին մի շատ գեղեցիկ, միջակ մեծութեան եկեղեցի է, շինւած սրբատաշ սև քարերից։ Ունի շատ նուրբ քանդակներ ու նկարներ։ Ափսոս որ գմբէթը ճեղքւած է և եթէ չըվերանորոգւի, կարող է փուլ գալ։ Այստեղ է կատարւում ժամերգութիւնը, որովհետև գիւղը ուրիշ եկեղեցի չունի։ Եկեղեցու բակումն է գտնւում պետական միդասեան դպրոցի շէնքը, որ զետեղւած է մի անշուք սենեակի մէջ։

Գիւղն ունի մի սիրուն աղբիւր. նրա վրայի քարերը հին են, կառուցւածքը ճաշակաւոր։ Լեռնային, մաքուր, քաղցրահամ ջուրը առատօրէն դուրս է բղխում բաւարարութիւն տալով գիւղական կարիքներին։

Նայում էք այդ կամարաւոր, գեղեցիկ, կարկաչուն աղբիւրին, նայում էք ոտից մինչև գլուխ նորահարսի պէս զարդարւած զարդարւած մատուռին և ակամայից համեմատում կիսաւած քանդ, գետնափոր տների ու ծուռտիկ, կեղտոտ փողոցների հետ...

Պետական դպրոցի ուսուցչի սիրալիր հիւրասիրութիւնը վայելելուց յետոյ մենք մնաս բարով ասինք Զանգլու գիւղին և շարունակեցինք մեր ուղին դէպի Շատևան։

Մենք դուրս եկանք գիւղից, բայց ես չէի ուզում գնալ Շատևան առանց տեսնելու Զանգլայ լիճը, որի մասին այնքան առասպելներ էի լսել։ Մի վերստաչափ գնալուց յետոյ մենք շուռ տւինք ձիերի գլուխները դէպի ձախ լճի կողմը, որ գտնւում է գիւղից մօտ երեք վերստ հեռու։

Զանգլայ լիճը շրջապատւած է մանր ու խոշոր բլուրներով, որոնք սանդխատաձև բարձրանում են և չորս կողմից ընդգրկում նրան։

Այս լիճը դեռ ես ուսումնասիրւած չէ. շատերը նոյնիսկ չըգիտեն նրա գոյութիւնը։

Լիճն ունի մի վերստ երկարութիւն և կէս վերստ լայնութիւն։ Լճի մէջ տեղի խորութիւնը հասնում է մօտ 20 սաժէնի։ Ժողովրդի ասելով նրա յատակը ճահճոտ է, եղեգնոտ ու անհաւասար. յանկարծ բացւում են խորը փոսեր, ուր ընկնողը այլևս չի կարողանում դուրս պրծնել։

Լճի մէջ վխտում են կապոյտ կոչւած խոշոր ու իւղոտ ձկները։ Ճիշտ է՝ նրանք Զրդրը լճի կապոյտի պէս համեղ չեն, բայց խիստ սննդարար են։ Զուտելու դէպքում իսկ կարելի է արտահանել իւղի համար։ Սակայն գիւղացիները այլ կարծիք ունեն. նրանց կարծիքով այդ ձուկը վնասակար է, այս իսկ պատճառով ոչ որսում են և ոչ էլ արտահանում։ Ուսուցիչը և այլ պետական պաշտօնեաներ շրջակայքից գալիս են այս ձու-

կը որսալու--մինչդեռ գիւղացիները լսել անգամ չեն ուզում նրա մասին. ընդհանրապէս ժողովուրդը ահուդողով է մօտենում այս լճին, նրա շուրջը պատում են շատ առասպելներ ու զրոյցներ։

Աւանդութիւնն ասում է, որ այդ լճի մէջ ապրում են բազմաթիւ ու բազմապիսի ծովային կենդանիներ, որոնք մի օր եթէ լճի ջուրը ցամաքի, պէտք է դուրս գան և աշխարհին վերջ տան։ Ներկայումս այս լիճը ոչ մի օգուտ չի բերում ժողովրդին։ Եթէ ուզենայ, հեշտութեամբ ջրին ճամբայ կըտայ դէպի մօտակայ ձորը և նրա հողը կըգործադրէ ցանքսերի համար, սակայն նա այդ քայլը չի անում վախենալով, թէ նրա մէջ բուն դրած վիշապները կըքանդեն աշխարհը։

Մի այլ աւանդութեան ասելով՝ այդ լճի մէջ ապրում է հրեղէն ձին, որ տարուայ մէջ մի քանի անգամ դուրս գալով ափը, պտոյտներ է գործում լճի շուրջը։ Հրեղէն ձին ունենալով սպիտակ մեծ թեւեր, երբեմն թռչում է նաև օդի մէջ և հանգստի է իջնում ամենաբարձր սարերի կատարներին։ Այսպէս զարճանալուց յետոյ նա նորից դառնում է իր լիճը։

Նրան բռնող տղամարդը ամենաբաղդաւորն է լինելու այս աշխարհի մէջ. նստած իր պեգասի վրայ նա կըսլանայ դէպի վեր, դէպի կապուտակ երկինքը...

Քանի-քանի խիզախ երիտասարդներ արհամարհելով մահն իսկ, անքուն գիշերներ են լուսացրել ափերի խոնաւ թաւուտների մէջ, որպէսզի եթէ ոչ բռնեն, գոնէ սեպհական աչքերով տեսնեն այդ չքնաղ արարածին։

Ինձ ուղեկցող գիւղացին երկիւղածութեամբ հաստատելով Զանգլայ լճի մասին տարածուած զանազան մութը դէպքերը միշտ այսպէս էր վերջացնում. «Է՜հ, աղա՛ ջան, անիծուա՛ծ է այս լիճը, անիծուա՛ծ»։

75. ՍԵԻԱՆԻ ՎՐԱՅ

Ա՜յ լողա հա, դէ լողա,
Առաջ գնա, իմ նաւակ,
Արև, արև շողշողա
Արծաթ ջրում սառնորակ։

Թիակները շարժեցէք
Վճիտ ջրի երեսին,
Մարգարտի պէս փայլեցէք
Բիւրեղները ծովային։

Շուրջս կապոյտ սէգ լեռներ՝
Հորիզոնում լուռ շարուած,
Վերև անհուն ջինջ երեր՝
Շքեղ լիճն ընդգրկած։

76. ՐՕԲԻՆԶՕՆԸ ԾՈՎԻ ՎՐԱՅ

I.

Զորս տարի Բրազիլիայում ապրելով և ագարակիս գործերը յաջողութեամբ առաջ տանելով, ես ոչ միայն սովորեցի տեղական լեզուն, այլև բարեկամութիւն հաստատեցի մի շարք վաճառականների ու ագարակատէրերի հետ։ Սրանց հետ խօսակցելով, յաճախ ես պատմում էի, դէպի Գվինէայի ափերը իմ արած ճանապարհորդութեան մասին։ Ի միջի այլոց ես նրանց տեղեկութիւն տի խափշիկներ վաճառելու սովորութեան մասին և պատմեցի, թէ ինչ հեշտութեամբ վայրենիները ոսկեայ աւազ, փղոսկոր և նոյնիսկ մարդիկ են տալիս, որ ձեռք բերեն զանազան մանրունքներ, խաղալիքներ, դանակներ, մկրատներ, կացիններ, ապակու կտորտանք և սրանց նման չնչին բաներ։

Մի անգամ վաճառականների ու ագարակատէրերի շրջանում ես լուրջ կերպով խօսեցի այդ մասին։ Միւս օրը առաւօտեան երեք ագարակատէրեր եկան ինձ մօտ ու յայտնեցին. մենք երեկւայ շօշափած խնդրի մասին խօսակցել ենք և մտադիր ենք մի նաւ ուղարկել Գվինէա մի խումբ մարդկանցով՝ ստրուկներ գնելու նպատակով, որպէսզի յետոյ Ամերիկա բերենք և մեր մէջ բաժանենք, աւելացրին նոյնպէս, թէ ես իբրև ագարակատէր լաւ եմ հասկանում, որ մեր գործի մէջ գլխաւոր դժուարութիւնը բանւորների քչութիւնն է, իսկ եթէ շատ բանւորներ ունենանք մեծ օգուտներ կրստանանք։

Վերջացնելով իրանց ասելիքը առաջարկեցին ինձ թէ արդեօք կըհամաձայնեմ իմ վրայ վերցնել այդ գործի վաճառականական մասը հոգ տանելու պարտաւորութիւը և գնալ նրանց հետ։ Նոքա տալիս էին բոլոր անհրաժեշտ գումարը, իսկ ես հաւասար բաժին էի ստանալու ձեռք բերած խափշիկներից։

Ես պատասխանեցի ագարակատէրերին, թէ բոլոր սրտով ընդունում եմ նրանց առաջարկութիւնը, եթէ միայն իրանք յանձն առնեն՝ բացակայութեանս ժամանակ հսկել ագարակներիս վրայ և իմ մահւան դէպքում վարել նրանց հետ, ինչպէս նախապէս կըկարգադրեմ։ Նրանք համաձայնեցին և գրաւոր ըստորագրութիւն տւին։ Ես կանոնաւոր կտակ կազմեցի, որով, իմ մահւան դէպքում, իմ ազատիչ Նաւապետին յայտարարում էի իմ ագարակի և բոլոր գոյքի ժառանգ այն պայմանով, որ հարստութեանս կէսը վերցնէ իր համար, իսկ միւս կէսը ուղարկէ Անգլիա։

Բացի այդ, ես ամեն տեսակ միջոցներ ձեռք առա, որպէսզի ագարակս պահպանւի և սնանկանալու վտանգից ազատ-ով լինի։

Նաւը պատրաստեցին, հարկաւոր ապրանքը ձեռք բերին և ես ի մեծ անբաղդութիւն իմ անձի, նաւը մտայ 1659 թւի սեպտեմբերի 1-ին։

Նրա վրայ կար վեց թնդանօթ ու տասնուչորս մարդ, հաշուելով այդ թւի մէջ և ինձ։ Նաւի բեռը կազմում էին խափշիկների սիրած ապրանքները, այսինքն՝ ուլունքներ, փոքրիկ

հայելիներ, ապակու կտորտանք, խեցիներ, դանակներ, մկրատներ, կացիններ և որանց նման մանր-մունր բաներ։

Նոյն օրը մենք պարզեցինք առագաստները և ճանապարհ ընկանք, առաջ գնալով ափերի ուղղութեամբ դէպի հիւսիս։ Մենք կամենում էինք հասնել հիւսիսային լայնութեան տասներկուերորդ աստիճանին և ապա թեքւելով, ուղղակի գնալ դէպի Աֆրիկայի ափերը։ Այդ էր սովորական ճանապարհը։ Եղանակը շատ հանդիստ էր, թէև բաւական տաք էր։

Շարունակելով ճանապարհը դէպի հիւսիս-արևմուտք, մատամբ էլ ուղղակի դէպի հիւսիս, տասներկու օրից յետոյ անցանք հասարակածը (էկւատորը)։ Մենք գտնւում էինք հիւսիսային լայնութեան վեցերորդ աստիճանի վրայ, երբ սարսափելի փոթորիկ բարձրացաւ, որը մեզ բոլորովին շեղեց ճանապարհից։ Քամին փչեց հարաւ-արևելքից և այնպիսի զարհուրելի սաստկութեամբ, որ մենք տասներկու օր շարունակ չըգիտէինք ինչ անել։ Մենք պիտի հպատակւէինք քամու խելագար կամքին և ալիքների վրայ դէս ու դէն գնայինք։ Կարիք չըկայ աւելացնելու, որ ես ժամ առ ժամ մահւան էի սպասում, և ոչ ոք էլ չէր մտածում, թէ ինքը կազատւի նոյն վիճակից։

II.

Ի միջի այլոց մենք երեք մարդ կորցրինք. մէկը ջերմախտից մեռաւ, մէկ նաւաստի և մէկ ծառայ էլ ծովն ընկան։ Տասնուերկրորդ օրւայ վերջը քամին փոքր ինչ հանդարտւեց։ Նաւապետը խորհուրդ էր հարցնում ինձանից, թէ ինչ ընթացք պէտք է տալ այժմ նաւին, որովհետև նաւը սաստիկ վնասւել է և մի ճեղք ունի արդէն, որտեղից ջուր է լցւում և նրա կարծիքով մենք պիտի յետ գնայինք դէպի Բրազիլիայի ափերը։ Բայց իմ կարծիքով պէտք էր շարունակել ճանապարհը դէպի Աֆրիկայի ափերը, որպէսզի հասնել որևէ անգլիական կղզի, որտեղ ես յոյս ունէի օգնութիւն գտնել և նաւը կարկատել

տալ, որովհետև նաւը առանց կարկատելու անհնարին էր շարունակել։ Այդպէս էլ վճռեցինք և նաւի ընթացքը փոխեցինք դէպի հիւսիս-արևմուտք։

Բայց երբ մենք դեռ լողում էինք, նորից սարսափելի փոթորիկ սկսւեց։ Նոյն արտասովոր ուժով, ինչպէս և առաջինը, փոթորիկը քշեց մեզ դէպի արևմուտք և այնքան հեռացրեց բոլոր առևտրական կենտրոններից, որ եթէ ալիքների կատաղութիւնից ազատուէինք էլ, պիտի ափը դուրս գայինք և վայրենիներին կերակուր դառնայինք։

Մէկ անգամ, այդպիսի ծանր դրութեան մէջ, երբ քամին սոսկալի կերպով շվվացնում էր, մեր նաւաստիներից մէկը աղաղակեց. «Երկիր»։ Հազիւ մենք կարողացանք դուրս վազել նաւասենեակից և նայել, թէ որտեղ ենք գտնւում, նաւը կըպաւ մի աւազուտի և մի վայրկեանում կանգ առաւ։ Ալիքները անմիջապէս բարձրացան նաւի վրայ և լցրին նրան։ Մենք վազեցինք դէպի նաւակողք, ուր տեսանք, թէ ինչպէս ալիքները պատրաստ են նաւը փշրելու և մեզ ամենքիս կլանելու։

Ով այդ դրութեան մէջ չի եղել, նա չէ կարող երևակայել մեր սարսափը և վհատութիւնը։ Մենք չըգիտէինք թէ որտեղ ենք, չըգիտէինք, թէ արդեօք այդ ափը մայր ցամաքին էր պատկանում, թէ մի կղզի էր ներկայացնում, մարդաբնակ է նա թէ անապատ։ Մի բոպէ քամին թուլացաւ, բայց յետոյ նորից արծարծուեց կրկնակի կատաղութեամբ։ Մենք փրկութիւն չէինք սպասում։ Նստելով նաւակողքի վրայ և դէպի միմեանց սեղմուելով, մենք պատրաստւում էինք մահուան համար։ Բայց ահա մի յուսոյ ճառագայթ ցոլաց. քամին սկսեց հանդարտուել և, նաւապետի ասելով, նաւը շատ էլ վնասուած չէր։

Փոքր ինչ յետոյ փոթորիկը սկսեց թուլանալ։ Սակայն նաւը, ծանծաղուտի մէջ այնպէս խրուած էր, որ հնար չըկար դուրս հանելու։ Նաւի դրութիւնը կատարելապէս յուսահատական էր, և մեզ միայն մի բան էր մնում – մտածել մեր կեանքը ազատելու մասին։ Պէտք է նկատել, որ մեր նաւի յետևից մի նաւակ էր կապած, որը սակայն ղեկին դիպչելով կոտրուել էր։ Մեր տրամադրութեան տակ մնում էր մի փոքրիկ մակոյկ,

որ կախուած էր նաւի կողքից։ Անհրաժեշտ էր, առանց մի բոպէ կորցնելու՝ ջուրը գցել նրան։ Սարսափելի դժուարութեամբ վայր իջեցրինք մակոյկը։ Եւ ահա, տասնումէկ հոգի միասին նստելով փոքրիկ մակոյկի մէջ, յանձնեցինք մեր հոգիները աստուածային գթասրտութեան, և հպատակուեցինք կատաղի ծովի ազատ կամքին։ Ալիքները շարունակ լեռներ ու ձորեր էին ստեղծում։ Մենք բոլոր ուժով թիավարում էինք, ուղղելով դէպի ափը։

III.

Երբ մենք թիավարելով անցանք, կամ աւելի լաւ է ասել, երբ ալիքները մեզ տարան մօտ մի մղոն, մեր ետևից վազեց մի ահագին ալիք։ Նա սարի պէս բարձրացաւ և այնպիսի ուժով թռաւ մակոյկի վրայ, որ սա մի վայրկեանում պարանուեց։ Ամենքս ջուրը թափուեցինք։ Հազիւ մենք կարողացանք Աստուծոյ անունը բացականչել, երբ ալիքը մեզ այս ու այն կողմը նետեց։

Հնար չունեմ բառերով հաղորդելու իմ զգացմունքները ու մտքերը, որ ունէի խորասուզուելու րոպէներին։ Թէև ես շատ լաւ եմ լողում, բայց այժմ չէի կարողանում ջրի երեսը դուրս գալ՝ շունչ քաշելու համար։ Բաղդաւորապէս ալիքը ինձ դուրս գցեց ափը և ինքը ցրուելով, ինձ թողեց ափի վրայ կիսամեռ դրութեան մէջ։ Տեսնելով ինձ ցամաքի վրայ, ես սիրտ առայ ու ոտքի կանգնեցի և այժերս հաւաքեցի, որպէսզի հանդիպեմ միւս ալիքին, որը արդէն գալիս էր ինձ տանելու։ Շուտով ես համոզուեցի, որ իզուր եմ չարչարւում։ Յետ նայելով տեսայ, թէ ինչպէս կատաղի ջրակոյտը, մի ահռելի հրէշի կերպարանքով, հալածում էր ինձ։ Ես միայն պիտի աշխատէի որքան հնար է ջրի երեսին մնալ, որ շնչասպառ չըլինէի, և աշխատէի լողալով դէպի ափը հասնել։

Եւ ահա թռաւ ինձ վրայ մի նոր ալիք, որը քսան-երեսուն ֆուտ բարձրութիւն ունէր. նա ծածկեց ինձ ջրով և արագութեամբ հեռացրեց ափից։ Այդ ժամանակ ես շունչս պահելով աշխատում էի ջրի երեսը դուրս գալ, բայց քիչ էր մնում, որ

կուրծքս փշրուէր։ Վերջապէս մի կերպ վերև բարձրացայ, ձեռքերս ու գլուխս ջրից դուրս բռնեցի և սաստիկ թեթևութիւն զգացի։ Այդ ընդմիջումը շարունակուեց ոչ աւել քան երկու վայրկեան, բայց ես կարողացայ օդ շնչել, որը ինձ շատ օգնեց։ Ես քաջալերուեցի։ Ալիքը նորից ծածկեց ինձ, բայց ոչ երկար ժամանակով. ես այժմ կարողանում էի պահուել ջրի երեսին և երբ նկատեցի, որ ալիքը ափին դարնուելով յետ է դառնում, ես հաւաքելով իմ վերջին ոյժերը, դէպի առաջ սեղմուեցի, դիմադրելով ալիքին, ես զգացի երկիրը ոտքիս տակ։ Մի քանի բոպէ շարունակ անշարժ կանգնած էի, հազիւ կարողանալով շունչ քաշել։ Յետոյ մի նոր ալիք նկատելով, արագութեամբ վազեցի դէպի ափը։ Սակայն դարձեալ չազատուեցի ալիքների կատաղի ճանկերից, որոնք դեռ երկու անգամ էլ կարողացան ինձ յետ քարշել, որովհետև ափը բոլորովին հարթ ու տափարակ էր։

IV.

Վերջին ալիքը յետ դարձնելով ինձ, այնպէս խփեց ինձ ժայռին, որ ուշաթափուեցի և դիմադրելու հնարաւորութիւնը բոլորովին կորցրի։ Եթէ այդ ալիքի յետևից մի նորը եկած լինէր, ես անպատճառ կըխեղդուէի։ Բարեբախտաբար ես ուշքի եկայ, բազուկներիս բոլոր ոյժով բռնեցի ժայռից և այդ դրութեան մէջ շունչս պահեցի, մինչև որ ալիքը յետ գնայ։ Ցամաքը մօտ էր և այդ պատճառով ալիքները շատ էլ մեծ չէին։ Ես բաց չէի թողնում քարը, իսկ ալիքները, թէ ետևից և թէ առջևից շարունակում էին հարւածել ինձ։ Փոքր յետոյ մագլցելով բարձրացայ ժայռի միւս կողմը, ուր արդէն այնքան մօտ էի ափից, որ վրայ հասնող ալիքը չէր կարողանում ինձ յետ տանել։ Ես ոտներիս ոյժը վերջին անգամ լարեցի և ոտքի կանգնեցի, դուրս եկայ բարձր եզերքը և վայր գլորուեցի կանաչ խոտի վրայ, ուր ալիքները այլևս չէին կարող ինձ թրջել։

Ողջ և առողջ ափում պառկած, ես աչքերս դէպի երկինք բարձրացրի և շնորհակալ եղայ Աստծուց՝ կեանքս փրկելու համար, որը մի քանի բոպէ առաջ կորած էի համարում։ Ապա

վեր կացայ, և խելագարի պէս թափառում էի ծովի ափին՝ ձեռքերս երկինք բարձրացրած, միայն մի բան դիտակցելով, թէ ես փրկուած եմ։ Որոնում էի ընկերներիս, բայց ոչ մէկին չէի գտնում։ Երևում էր, նրանք ամենքն էլ խեղդուել են, որովհետև եզերքում մինթարական ոչ մի նշոյլ չկար. ես գտայ միայն մի գլխարկ և մի զոյգ ոտնաման։

Շուտով իմ ուրախութեան աստիճանը իջաւ, ես դադարեցի ցնծալ. մինչև ոսկորներս թրջուած էի և փոխելու հագուստ չունէի, սոված էի, բայց ուտելիք չկար, ծարաւ էի, բայց խմելու ջուր չկար։ Ես սաստիկ թուլացայ և չգիտէի ինչով կազդուրուել, ոչ մի ելք չէի տեսնում այդ դրութիւնից դուրս գալու համար։ Կամ պիտի սովից մեռնէի, կամ գիշատիչ գազանների ճանկն ընկնէի։ Ամեն բանից առաւել ինձ վհատեցնում էր այն հանգամանքը, որ իմ մօտ ոչ մի զէնք չկար, որի օգնութեամբ կարող էի թէ ուտելիք գտնել, և թէ պաշտպանուել։ Մի դանակ, մի ծխափող և փոքր ինչ ծխախոտ քիսայիս մէջ, ահա բոլորը ինչ որ ունէի։

77. ԻՆՉՊԷՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԹՌՉՈՒՄ ՕԴԻ ՄԻՋՈՎ

Մարդիկ հնարելով երկաթուղին և նաւը, սկսեցին ազատ և արագ ճանապարհորդել ցամաքի ու ջրի վրայ։ Սակայն մարդիկ դրանով չբաւականացան. նրանք նայում էին վերև և նախանձում երկնքի թռչուններին։ Որքան լաւ էր թռչունների պէս թռչելը օդի միջով. այնտեղ ոչ ճանապարհ էր հարկաւոր, ոչ կամուրջ. այնտեղ կարիք չկար սարերը ճեղքելու, ծովային ծանծաղուտներից կամ ժայռերից զգուշանալու։

Այնտեղ ճանապարհը հարթ է, ընդարձակ, կարճ...

Մարդն սկսեց մտածել և հնարեց օդապարիկը։ Նա շինեց մի մեծ գունդ մետաքսէ թելերից, մէջը լցրեց օդից թեթև գազեր, տակից կախ արեց մի նաւակ և նստելով նրա

մէջը, բարձրացաւ դէպի անծայր, կապուտակ երկինքը...

Սակայն անողորմ քամին խանգարում էր նրա ազատ թռիչքը և յաճախ նրան տանում էր հեռուներն ու խորտակում... Հարկաւոր էր յաղթահարել քամուն և գտնել այնպիսի միջոցներ, որ մարդս թռչէր իր ուզած ուղղութեամբ։



Մարդս մտածեց, բազմաթիւ փորձեր կատարեց և վերջապէս հնարեց այսպէս կոչուած օդաչու նաւը, որը ունի թռչունի թեւերը, նաւի անիւները և մէջ տեղում երկաթուղու շարժող մեքենայ։ Օդաչու նաւը գնում է նոյնիսկ քամիների դէմ։ Մարդս այժմ նստելով օդաչու նաւի մէջ, սլանում է բարձր սարերի, անդնդախոր ձորերի, ընդարձակ ծովերի վրայով... Նա գնում է այնտեղ, ուր ինքն է կամենում։



Օդազնացների ասելով, քանի վերև ես բարձրանում, օդը այնքան նօսրանում է և ցրտում։ Զորս-հինգ վերստ տարածութեան վրայ ջուրը սառչում է՝ նոյնիսկ ամառը։

Օդաչու նաւերը նոր են մտել գործածութեան մէջ և հէնց այդ պատճառով դեռևս այնքան կատարելագործուած չեն, որ մարդս իրան ազատ զգայ վտանգներից։



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

78. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՏՈՀՄԸ

Լուսաւորչի տոհմը ունէր իր սրբազան անցեալը, որ նուիրագործուած է մեծահռչակ և վսեմ աւանդութիւններով, որ ժողովրդի սրտին և հաւատին շատ մօտ էին, որ նրա համար անմոռանալի էին։ Ժողովուրդը պաշտում էր այդ տոհմը և ընդունում էր նրան իբրև ամենաբարձր հոգևոր հեղինակութիւն։ Այդ էր պատճառը, որ Հայաստանը սիրում էր այդ տոհմի մէջ միայն տեսնել իր եկեղեցու ներկայացուցչին, նրան միայն արժանի էր համարում Հայրապետական Աթոռը, և միշտ նրա բարերար ձեռքումն էր փափագում տեսնել իր ծայրագոյն Հովուապետի գաւազանը։ Այդ զգացմունքներից առաջ եկաւ այն ժառանգական կաթողիկոսութիւնը, որ իջնում էր Լուսաւորչի տոհմի մէջ յորդւոց յորդի։

Եւ այդ Հայրապետական Տունը, իր գոյութեան ամբողջ ընթացքում միշտ արդարացրեց ժողովրդի թէ հաւատը և թէ նրա փափագները։ Նա միշտ մնաց անբիծ և անարատ, և ամենայն անձնուիրութեամբ կատարեց իր յանձն առած բարձր հոգաբարձութիւնը։ Իսկ այդ հոգաբարձութիւնը որքան սիրելի, որքան հաճելի էր ժողովրդի համար, նոյնքան ծանր էր թագաւորների համար։ Ամենայն անաչառութեամբ նա ան-ձահարում էր թագաւորների մոլութիւնները և նրանց կամայականութիւններին սահման էր դնում։ Նա, իրաւ, ճնշում էր գործ դնում թագաւորների վրայ, բայց երբէք գահին չէր դաւաճանում։ Հայրենասիրութիւնը և արքայական թագի պաշտպանութեան գաղափարը՝ այդ տոհմի գերագոյն առաքինութիւններից մէկն էր։

Լուսաւորչի Հայրապետական Տունը, իր վեհափառութեան բարձը դիրքի համեմատ, արքայավայել կացութիւն ունէր։ Այդ Տունը աւելի փայլ ստացաւ Ներսէս Մեծի օրերում։ Թագաւորը այնտեղ մտնելու ժամանակ՝ իրաւունք չունէր նստելու, մինչև Հայրապետը տեղ չըցոյց տար։ Բայց Հայրապետը թագաւորի արքունիքը մտնելու ժամանակ ազատ էր ամէն տեղ նստելու։ Ծառայողների և զանազան պաշտօնեաների մի ստուար բազմութիւն միշտ ներկայ էր այնտեղ։ Տասն և երկու եպիսկոպոսներ Հայրապետի անբաժան գործակիցներն էին և խորհրդակիցները։ Չորս վարդապետներ և վաթսուն երէցներ միշտ անպակաս էին նրա սպասին։ Աշխարհականներից մինչև հինգհարիւր հոգի ամէն օր սեղան էին նստում։ Բացի դրանցից, Հայրապետը ունէր իր այլ և այլ պաշտօնեաները, որպիսիք էին՝ սենեկապետ, փակակալ, Դրան եպիսկոպոս, դպրապետ, հիւրընկալ, սարգաւագապետ, Դրան վարդապետ, Դրան երէց և այլն։

Հայրապետական Տունը, Լուսաւորչի բոլոր ժառանգների օրերում, փակուած չէր այս կամ այն վանքի առանձնութեան մէջ։ Այլ նա աշխարհից չէր անջատուած և աշխարհի առջև միշտ բաց էր։ Լուսաւորչի ժառանգները, Աբրահամի, Իսահակի և Յակոբի նման, միևնոյն ժամանակ թէ ժողովրդի հայրեր

էին և թէ գերդաստանի հայրեր։ Նրանք ընակւում էին իրանց ընտանեկան խաղաղ շրջանում։

Մեծ էր փառքը Հայրապետի՝ երբ նա մի որևէ տեղ էր գնում։ Մի ամբողջ բանակ շարժւում էր նրա հետ։ Մի քանի հարիւր սպառազինուած ձիաւորներ, իր թիկնապահներից, ուղեկցում էին նրան։ Մի քանի հարիւր եպիսկոպոսներ, վարդապետներ, երէցներ և այլ եկեղեցականներ, ջորիների վրայ նստած, ընթանում էին նրա առջևից և ետևից։ Ինքը հայրապետը նստած էր լինում կամ սպիտակ ջորու վրայ, կամ կառքի մէջ, որ նոյնպէս տանում էին երկու սպիտակ ջորիներ, որ միայն թագաւորն իրաւունք ունէր գործ ածելու։ Ջորիների թամբերը և այլ հանդերձները զարդարուած էին լինում ոսկով։

Հայրապետը սովորաբար երեսը ծածկում էր սև քողով։ Առջևից տանում էին հայրապետական գաւազանը և, իբրև սրբազան դրօշ բարձր խաչւառը։

79. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Կէս գիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկնքից,
Լուսաւորչի կանթեղն անմար
Հայոց մթնած երկնքից։

Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու սեղանից հսկայական
Լոյս է տալիս աշխարհին։

Լոյս է տալի երկար դարեր,
Ու վառւում են միշտ անշէջ
Սուրբի մաքուր արցունքներ
Իւղի տեղեակ նրա մէջ։

Ոչ մարդկային ձեռ կրհասնի
Էն անաւոր բարձրունքին,
Եւ ոչ քամին կրհանգցնի
Վիշապ-քամին անագին։

Երբ պատում է մութ խաւարը
Ջնաշխարհիկ մեր երկրին,
Երբ տիրում է ահն ու վախը
Թոյլ, կասկածոտ սրտերին,

Ով անմեղ է, լիքը սիրով
Ու հաւատով անսասան,
Ով նայում է վառ յոյսերով
Դէպի հայոց ապագան,

Նա կրտեսնի այն մշտավառ
Ջահը կախուած երկնքից,
Ասես՝ Աստծոյ աչքը պայծառ
Հսկում է ցած երկնքից։

80. Ս. ՍԱՀԱԿ

Ս. Սահակ կաթողիկոսը Մեծն Ներսէսի որդին ու ձեռնասուն աշակերտն էր։ Նա ծնել է Կոստանդինապօլսում։ Ս. Սահակը բարձրացաւ կաթողիկոսական գահի վրայ Ասպուրակէս կաթողիկոսից յետոյ 400 թուին. նա եղաւ Գրիգոր Լուսաւորչի ցեղի վերջին շառաւիղը, որովհետև ինքը մի աղջիկ ունեցաւ և այդպիսով վերջացաւ Լուսաւորչի ցեղի գահակալութիւնը։

Այս նշանաւոր կաթողիկոսի ժամանակն էր, որ Մեսրոպ Մաշտոցը յղացաւ հայերէն տառեր գտնելու հանճարեղ գաղափարը։ Երբ Մեսրոպ վարդապետը իր միտքն յայտնեց Սահակ կաթողիկոսին, վերջինս ամեն ջանք գործ դրեց, որ իրականանայ այդ խիստ ցանկալի մտադրութիւնը։



Հայկական տառերի գիւտից յետոյ Սահակը և Մեսրոպը մեծ եռանդով բաց են անում դպրոցներ քաղաքներում և նոյն իսկ գիւղերում, որպէսզի մայրենի լեզուի օժանդակութեամբ քրիստոնէական վարդապետութիւնը արմատներ ձգէ հաւատացեալների սրտերում։ Այս դպրոցների մէջ ամենանշանաւորը Վաղարշապատի դպրոցն էր, որ մի տեսակ ուսուցչանոց էր այն ժամանակւայ միւս վարժարանների համար։

Այս դպրոցում կրթութիւն առան բազմաթիւ աշակերտներ, որոնց մէջ աչքի ընկնողներն էին Յովսէփը, Ղևոնդ երէց Վանանդեցին, Կորիւնը, Եղնիկ Կողբացին և ուրիշները, որոնք կոչւում են առաջին թարգմանիչներ։

Սրանք ցրւելով Հայաստանի զանազան կողմերը, սկսեցին հայերէն լեզուով կրթել մանկտին։ Այս կարգի աշակերտներից էին Մովսէս Խորենացին, Դաւիթ Անյաղթը, Մամբրէն, Եղիշէն և ուրիշները, որոնք կոչւում են կրտսեր թարգմանիչներ։

Ս. Սահակ կաթողիկոսը մի կողմից դպրոցներ էր բաց ա-

նում, իսկ միւս կողմից իր շուրջը հաւաքելով ուշիմ աշակերտներին, թարգմանում էր եկեղեցական գրքերը։ Նրա ջանքերով երկրորդ անգամ թարգմանուեց ս. գիրքը։ Հայերէն այս երկրորդ թարգմանութիւնը կատարուած է այնպիսի խնամքով և գեղեցիկ-մաքուր լեզուով, որ նոյն իսկ օտարների վկայութեամբ համարւում է «զչիստ ամենայն թարգմանութեանց»։

Այս նոյն սիրուն հայերէնովն էր, որ Սահակ կաթողիկոսը գրեց աւագ-շաբաթի հոգեշունչ շարականները, որոնց լեզուի գեղեցկութիւնը և զգացմունքների խորութիւնը հաստատում են հեղինակի բանաստեղծական տաղանդը։

Սահակ կաթողիկոսը զգալով գործակիցների պակասութիւն, իր աշակերտներից ընդունակներին ուղարկեց Աթէնք, Աղէքսանդրիա ուսանելու։ Աշակերտները 6--7 տարի արտասահմանում սովորելուց յետոյ վերադառնում են Հայաստան և շարունակում են ս Սահակի և Մեսրոպի սկսած գործը։

Ս. Սահակ կաթողիկոսը իր ծերութեան օրերում հայ նախարարների մատնութեամբ բանտարկւում է Պարսկաստանում։ Բանտից ազատուելուց յետոյ հայ նախարարները զգալով իրանց սխալը, նրան խնդրեցին վերադառնալ հայրենիք և բարձրանալ կաթողիկոսական գահը, սակայն նա հրաժարուեց այս առաջարկութիւնից։ Նա հեռացաւ աշխարհից, առանձնացաւ մի այրի մէջ և կնքեց իր մահկանացուն 441 թւին։ Նրա դերեզմանը գտնւում է Տարօն գաւառի Աշտիշատ գիւղում։

81. Ո՞ՒՐ ԵՍ ՀԱՅ ԲԼԲՈՒԼ

Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ է կարօտ
Մեր հոգին էրւած, մեր սիրտը եարոտ...

Սև սուգ է պատել մեր կեանք ու օրին,
Սև թուխպ է կապել մեր սար ու ձորին,
Վա՛յ, սև գիշեր է մեր կեանքը մաշում,
Քո լոյս—երգերի կարօտն ենք քաշում.

Էլ մեզ չէս երգում գարնան առաւօտ.
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

Սիրտն է մղկտում, սիրտն է սեանում,
Ոչ ով մեր լացին ականջ չի անում.
Եթիմ կանգնել ենք գերեզմանիդ մօտ,
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

Բլբո՛ւլ, դու մեզ հետ տանջւում ու լալիս,
Մեր անյոյս օրին յոյս էիր տալիս.
Դու ասում էիր—ա՛զգ իմ, մի՛ սգա,
Յուսով եմ, քո վարդ—գարունն էլ կըգայ,
Բայց ա՛խ, չենք տեսնում գարուն վարդահոտ,
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

82. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՒ ՀԱՅ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ

I.

Հայերը ընդունելով քրիստոնէական կրօնը, հետզհետէ սկսեցին քաղաքակրթուել։ Առաջին դպրոցները բաց արաւ Գրիգոր Լուսաւորիչը։ Այդ դպրոցների նպատակն էր պատրաստել եկեղեցական պաշտօնեաներ։

Սակայն քրիստոնէական վարդապետութիւնը և հայկական դպրոցը չէին կարող զգալի օգուտ տալ, որովհետև հայերին պակասում էր մի շատ կարևոր բան—*սեպհական տառերը*։ Հայ եկեղեցում ժամասացութիւնը կատարւում էր յոյն և ասորի լեզուներով։ Ժողովրդի համար մութն էին մնում աւետարանի լուսաւոր մտքերը։ Իսկ դպրոցը. նա ևս իր հերթին տանջում էր երեխաներին օտար լեզուներով և առանձին արդիւնք չէր տալիս։ Զրկար այն հոգեշունչ մայրենի լեզուն, որի միջոցով միայն ուսուցիչը կարող էր թափանցել իր սաների սիրտն

ու հոգին։ Այսպիսով եկեղեցին ու դպրոցը գոյութիւն ունէին միայն անունով իսկ էապէս նրանք երկուսն էլ գրեթէ անօգուտ հիմարկութիւններ էին։

Հայոց տառերի գիւտը ոգի ներշնչեց հայ դպրոցին, եկեղեցուն, որով միաժամանակ մեծ զարկ տուեց հայկական առաջադիմութեանը։ Հայ լեզուի սեպհական տառերի գիւտը պատկանում է գլխաւորապէս Մեսրոպ վարդապետին, որի մականունն էր Մաշտոց։

Ծանօթանանք այդ մեծ մարդու կենսագրութեան հետ և տեսնենք, թէ նա ինչպէս գտաւ հայերէն այբուբէնը։

II.

Մեսրոպ Մաշտոցը Տարօն գաւառի Հացիկ գիւղից էր։ Փոքր հասակից աշակերտելով Ներսէս մեծին, սովորել էր հայ, յոյն, ասորի և պարսիկ լեզուները։ Իբրև լեզուագէտ և պատրաստուած անձն միաժամանակ նա առենադպրի պաշտօն կատարեց հայոց արքունիքում։ Սակայն շուտով թողեց նա այդ պաշտօնը, հեռացաւ աշխարհիկ կեանքից. վարդապետ ձեռնադրուեց և իր մի քանի աշակերտների հետ սկսեց քարոզել քրիստոնէութիւնն այն վայրերում, ուր նա դեռևս չէր արմատացել։ Այդ ժամանակ աւետարանը կարդացւում էր յունարէն կամ ասորերէն, որից ժողովուրդը բան չէր հասկանում։ Մեսրոպ վարդապետը նախ կարդում էր աւետարանի բնագիրը և ապա թարգմանում հայերէն, որով գործը այնքան դժուարանում էր մանաւանդ օտար լեզուներին անհմուտ մեր շատ հոգևորականների համար։

Ահա այս դժուարութիւնները նրա մէջ զարթեցրին մի խկապէս փայլուն միտք—գտնել հայկական տառերը և ս. գիրքը հայերէն թարգմանելով, մայրենի լեզուով հաղորդել նրան հայ ժողովրդին։

III.

Մեսրոպն այս միտքը յայտնեց այն ժամանակուայ կաթողիկոս Սահակ Պարթևին։ Կաթողիկոսը այս հարցը քննելու համար մի ժողով գումարեց Վաղարշապատում։ Ժողովին ներկայ էր նաև Վռամշապուհ թագաւորը։ Այս ժողովի նպատակն էր տեղեկութիւններ հաւաքել հայկական տառերի մասին։

Վռամշապուհ թագաւորը յայտնեց ժողովին, թէ Ասորիքում եղած ժամանակ լսել էր, որ Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ հայերէն տառեր կան։ Անմիջապէս մարդ ուղարկեցին յիշեալ եպիսկոպոսի մօտ և բերել տուին հայերէն տառերը։

Մեսրոպը և Սահակը սաստիկ ուրախացան տեսնելով իրանց երազած հայկական տառերը։ Նրանք շուտով հաւաքեցին աշակերտներ և սկսեցին այդ նոր այբուբէնով հայերէն սովորեցնել նրանց։ Այսպէս երկու տարի նրանք անդադար փորձեր էին կատարում, բայց դժբաղդաբար դրական հետևանքի չհասան։ Նրանք համոզուեցին, որ այդ նշանագրերը չեն արտայայտում հայ լեզուի բոլոր հնչիւնները։ Մնում էր պակասը

լրացնել։ Մեսրոպը՝ դիմեց իր ժամանակի ձեռնհաս անձերին՝ թէ երկրում և թէ երկրից դուրս, բայց ոչ մի տեղից օժանդակութիւն չըգտնելով, ինքն իր մէջ ամփոփուեց։ Յոյսը կորելով մարդկանցից, Աստծուն ապաւինեց։ Երկար որոնումներից յետոյ վերջապէս նա հասաւ իր նպատակին. դտաւ հայկական լեզուատար այբուբէնը 406 թուին։

83. ԾԵՐ ՈՒՌԵՆԻՆ

Հաստաբուն ուռին լալիս էր մի օր՝
Առուակի ափին կախուած գլխիկոր։
«Ինչո՞ւ ես լալիս, իմ ազիզ ընկեր»։
—«Է՜հ, խոր հառաչեց սգաւոր ուռին.
«Ես մատաղ լինիմ քո անուշ ջրին,
«Մէկ լաւ նայիր ինձ՝ տես ինչ եմ դառել.
«Կերել է ճիճուն, արևն ինձ վառել.
«Էլ ես չեմ ապրի, իմ դարը անցաւ,
«Տերևս թափուեց, ճիւղս չորացաւ։
«Թէ մի բան ունիմ սրտիս մխիթար,
«Արմատս ելած այն ոստն է դալար։
«Պահիր դու նրան քո անուշ ջրով,
«Զուգիր, զարդարիր մատաղ ճղերով.
«Ու թող քո վճիտ ջրերի միջից
«Իր դէմքը տեսնէ մատաղ ուռենին,
«Ու սիրտը լցի մանուկ հրճւանքով,
«Եւ քո խոխոջին ձայնակցէ երգով։
«Դէ՜հ, անուշ ընկեր, քեզ վերջին բարև,
«Եւ քեզ, ծերուկիս ժառանգ, նոր արև.
«Կացիններն առած՝ գալիս են մարդիկ,
«Որ ինձ կտրատեն, անեն վառելիք...

84. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ, որ եղաւ 432 թուին, Հայաստանի մի մասն ընկաւ պարսիկների ձեռքը, իսկ միւսը մասը՝ յոյների։

Հայաստանի նախարարները բաժանուեցին երկու խոշոր կուսակցութիւնների. մի մասը ցանկանում էր բարեկամանալ պարսիկների հետ և նրանց կարգ ու կանոնը մտցնել հայերի մէջ, իսկ միւս մասը, որոնց պարագլուխն էր երկրի սպարապետ Վարդան Մամիկոնեանը, ցանկանում էր սերտ կապեր ստեղծել յոյների հետ և նրանց օժանդակութեամբ յետ մղել պարսիկներին։

Այս վերջիններս իրանց անուանում էին ուխտապահներ։ Ուխտապահների հետ էր երկրի հոգևորականութիւնը և ժողովրդի լայն համակրանքը։

Ուխտապահները հակառակ կուսակցութեան պատկանողներին ուրացողներ էին անուանում։ Ուրացողների պարագլուխն էր Սիւնեաց Վասակ իշխանը։

Պարսկական արքունիքը դեռևս Շապուհ Բ-ի և Յազկերտ Ա-ի օրերից սկսած ամեն կերպ ձգտում էր հայերին հեռու պահել յունական ազդեցութիւնից և կապել Պարսկաստանի հետ։ Այս նպատակին հասնելու համար Պարսկաստանը աշխատում էր բնաջինջ անել քրիստոնէութիւնը և հայերին վարժեցնել կրակապաշտութեան։

Սակայն պարսկական թագաւորներից և ոչ մէկը դրական քայլեր չարաւ այս ուղղութեամբ։ Գործը այլ կերպարանք ընդունեց երբ գահ բարձրացաւ Յազկերտ Բ-ը։

Այս պատերազմասէր և ամբարտաւան թագաւորը գահ բարձ-

բանալուն պէս վճռեց ի կատար ածել իր նախորդների քաղաքականութիւնը, այսինքն, ոչնչացնել քրիստոնէութիւնը և Հայաստանը պարսկական մի նահանգ դարձնել։

Այս նպատակն իրագործելու համար Յազկերտ Բ-ը իր զօրքերով նախ յարձակուեց Միջագետքի յունական երկրների վրայ։ Անատոլ յոյն զօրավարը մեծամեծ ընծաներ տալով հաշտութիւն կնքեց պարսիկների հետ։ Այս կերպ յոյներին թուլացնելուց յետոյ, Յազկերտը մտադիր էր յարձակուել հոների և հայերի վրայ, բայց նրա Միհրներսէհ հազարապետը խորհուրդ տուեց զէնքի դիմելուց առաջ կրօնափոխ անել հայ նախարարները և ժողովուրդը։

Յազկերտ նախարարներին կանչեց Պարսկաստան։ Նրանք երեսանց ընդունեցին պարսկական կրօնը և վերադարձան Հայաստան։ Երկիր վերադառնալով նրանք ոչ միայն այդ նոր կրօնը չտարածեցին ժողովրդի մէջ, այլև դուրս քշեցին Յազկերտի մոգերին, որ եկել էին նոր կրօնը տարածելու։ Գիտենալով, որ այդ քայլը ծանր է նստելու իրանց վրայ, նրանք պատրաստուեցին զէնքով դիմադրելու պարսիկներին։

Սիւնեաց Վասակ իշխանը ամեն կերպ աշխատում էր խանգարել ուխտապահների գործը։ Պատմագրների ասելով՝ նա աւերում էր այն նախարարների երկրները, որոնք Վարդան Մամիկոնեանի հետ վճռել էին կռիւ դուրս գալ պարսից զօրքի դէմ։

Յազկերտ Բ-ը համոզուելով, թէ խաղաղ ճանապարհով անկարելի է հայերին կրօնափոխ անել, 451 թ-ին մեծ զօրք ուղարկեց Հայաստան։

Վարդան Մամիկոնեան հրաւէր կարդաց հայ նախարարներին զէնքով դիմադրելու թշնամուն։ Նրա շուրջը հաւաքուեց 66 հազար մարդ։ Դիմաւոր կռիւը տեղի ունեցաւ Աւարայր դաշտում, Տղմուտ գետի ափին։ Պատերազմին մասնակցում էին Ղևոնդ երէցը և Յովսէփ կաթողիկոսը, որոնք իրանց քարոզներով ոգևորում էին զինուորներին։

Վարդան Մամիկոնեանը քաջութեամբ դիմադրեց թշնամուն, մեծ կորուստ պատճառեց նրանց և ինքն էլ նահատակուեց շատ քաջերի հետ ի միասին։

Հայերի կողմից ընկել էին 1036 մարդ, մինչդեռ պարսիկները կորցրին 3544 մարդ։

Վերջացաւ պատերազմը բաց դաշտի վրայ։ Հայ նախարարները ամրանալով անառիկ բերդերի մէջ, շարունակում էին կռուել պարսիկ զօրքերի հետ և տեղ-տեղ մեծ ջարդ տալիս նրանց։ Կռուողների դլուխ անցաւ Վարդանի եղբայր Հմայեակը, իսկ նրա մահից մի քանի տարի յետոյ Վահան Մամիկոնեանը։

Պարսիկ թագաւորներից Վաղարշը համոզուելով, որ բռնի ուժով անկարելի է կրօնափոխ անել հայերին, Նիխոր իշխանին ուղարկեց Հայաստան հաշտութիւն կնքելու։ Այս հաշտութեան պայմաններից մէկը քրիստոնէական կրօնի ազատութիւնն էր։

85. ՏՂՄՈՒՏ

Մտաւ արև, Աւարայրին մութ պատեց
Սև ամպերով երկնից դէմքը քողարկուեց.
Բնութիւնը մի քուն մտած հեշտասէր
Վայելում է անուշութեան վառ ժամեր։

Չէ նուազում քաղցը սրինգն հովւական,
Թռչունների քնքուշ տաղեր լռեցան.
Ծաղիկները նիհրած փափուկ մարգերում
Երբեմն մեղմիկ հովի հետ են համբուրուում։

Բայց այդ քունը մօտ չէ գալիս հեշտագին
Ծեր Տղմուտի արիւնակոխ աչքերին
Այն սև օրից, երբ որ կուրծքը կուսական
Ողողուեցաւ արիւնովը հայութեան։

Անցան դարեր. դեռ Տղմուտը հեծելով
Գիշերները խանգարում է անվրդով
Աւարայրի անուշ քունը, և չունի
Մինչև այսօր նա ոգբակից իր վշտի։

Եւ ծերունին հառաչում է սգաւոր.
Արիւն դարձած կոհակները ալեոր
Գնում, գալիս, զարնւում են ափերին,
Անցած փառքը յիշեցնում են հայերին։

«Ձեր նախնեացը էլ չէք նման դուք հայեր,
Զունիք այլևս հայրենասէր այն ոգին.
Նոքա մեռան, և կուրծքերը անվեհեր
Արեամբ բուսած անմահ վարդեր պսակեցին։

Եւ անթառամ զարդարեցան պսակով,
Անմահացաւ այն վեհ հոգին արութեան.
Եւ հայրենեաց կեանք տուին արիւնով
Ահեղ մարտի դաշտում հայ մարդ, հայ կուսան։

Դուք ինչ արիք, դուք, փառաւոր նախորդաց
Ստրուկ ծնած, անփառք սնած զաւակներ.
Հայ սար, հայ գետ, հայ դաշտ օրայքդ ունչ առած
Պիտ սմօթով այրեն ձեր սև երեսներ»։

Եւ Տղմուտը հառաչում է սգաւոր.
Արիւն դարձած կոհակները ալեոր
Գնում, գալիս, զարնւում են ափերին,
Անցած փառքը յիշեցնում են հայերին։

86. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒՏԵՆԲԵՐԳԸ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՏԸ

I.

Հին ժամանակ, երբ դեռևս չէր կար տպագրութեան արհեստը, մարդիկ մի անգամ գրած գրքից արտագրում էին շատ օրինակներ և տարածում։ Հասկանալի է, թէ որքան դժուար էր գրքեր տարածելու այս եղանակը. յաճախ մի գիրք

արտագրելու համար աշխատում էին մի, երկու և դեռ աւելի տարիներ։

Ուրիշները փորձեցին տառերը փորագրել փայտէ տախտակների վրայ։ Փորագրուած տախտակին քսում էին սև մուրը, դնում քարի վրայ, մի թերթ թուղթ քաշում երեսին և պատուտակով վերևից սեղմում բարձը։ Փորագրուածը տպւում էր թղթի վրայ։

Այսպէս տպում էին գրքի իւրաքանչիւր երեսից որոշ օրինակներ և իրար միացնելով կազմում գրքեր։ Ինքը Գուտենբերգը այս ձևով մի փոքրիկ քերականութիւն տպեց։

Տպագրութեան այս նոր ձևը, ճիշտ է, աւելի հեշտ էր, քան ձեռքով արտագրելը, բայց դա ևս ունէր իր խոշոր անյարմարութիւնները։ Գրքի իւրաքանչիւր երեսի համար հարկաւոր էր փորագրել մի տախտակ, որը ուրիշ որևէ գրքի համար այլևս պէտք չէր գալու։ Մի գիրք տպելու համար հարկաւոր էր բազմաթիւ այդպիսի տախտակներ փորագրել, որ շատ դժուար էր, մեծ ծախսեր ու երկար ժամանակ էր պահանջում։

II.

Գուտենբերգն առաջինն էր, որ հասկացաւ տպագրելու այդ ձևի անյարմարութիւնը և իր ամբողջ կեանքը մաշեց

նրան բարեփոխելու համար։ Երկար փորձերից ու դիտողութիւններից յետոյ նրա մէջ յղացաւ մի փայլուն միտք. փոխանակ տախտակներ փորագրելու, որոնք միայն մի գրքի համար էին պիտանի, շինել առանձին տառեր փայտից կամ մետաղից։ Այդ շարժական տառերը մէկմէկու մօտ շարելով, կազմել բառեր, տողեր, ամբողջ երեսներ։ Իւրաքանչիւր շարուած երեսին մուր քսել և նրանից տպել բազմաթիւ օրինակներ։ Տպելուց յետոյ ցրել տառերը և դասաւորել ջոկ արկղիկներում. ա-երը մի տեղ, բ-երը մի ուրիշ տեղ և այլն։ Պարզ է, որ այս ձևը անհամեմատ աւելի հեշտ էր և արժան, որովհետև այլևս կարիք չէր կար հարիւրաւոր տախտակներ փորագրել մի գիրք տպագրելու համար, այլ հարկաւոր էր միևնոյն տառից շատ օրինակներ ունենալ և նրանցով տպագրել ամեն տեսակ գրքեր։

Շարժական տառերի այս հանճարեղ գիւտը պատկանում է Յովհաննէս Գուտենբերգին։

III.

Գուտենբերգը ծնուել է գերմանական Մայնց քաղաքում 1400 թ։ Նա մի աղքատ, բայց նշանաւոր ընտանիքի զաւակ էր։ Երիտասարդ հասակում նա շատ ճանապարհորդեց, ուսում առաւ, արհեստներ սովորեց։ Նրա սրտից արիւն էր հոսում, երբ դիտում էր իրան շրջապատող թանձր տգիտութիւնը և ամեն ջանք գործ դնում հեշտացնելու տպագրութեան գործը, որը մեծ զարկ կըտար լուսաւորութեանը։

Վերադառնալով հայրենիք, նա իր ընտանիքով տեղափոխուեց 1437 թուին Ստրասբուրգ քաղաքը, ուր և սկսեց տպագրութեան առաջին փորձերը։

Այս մեծ գործի համար նա զոհեց իր ժամանակը, իր ընդունակութիւնները, իր միջոցները և վերջապէս հասաւ նպատակին։ Նա ոչ միայն հնարեց տպագրութեան նոր արհեստը, այլև անձամբ աշխատում էր. տառեր էր ձուլում, ներկ պատրաստում, մեքենաներ շինում։

Այս մեծ գիւտը շուտով տարածուեց ամեն տեղ։ Բացուեցին նոր տպարաններ, տպուեցին հազարաւոր գրքեր։ Գուտենբերգի անունը հռչակուեց։ Անցել է այդ դէպքից 500 տարի և մինչև օրս էլ ամենքը երախտագիտական զգացմունքով յիշում են նրան։

Գերմանացիք նրա համար արձան կանգնեցրին Մայնց քաղաքում։

87. ԱՂԱՍԻՆ ԱՆԻՈՅ ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒՄ

I.

Տեսնողի առաջին մէկ տափարակ տեղ է բացուում յանկարծ, մէկ մեծ դաշտ։ Չորս կողմը սարերով պատած, աջ ու ձախ սեին տալիս, ու քանի գնում է մարդ, ամպ ու մառախուղ քաշուում, պարզում են, հէնց իմանում ես, թէ առաջիդ մէկ էնպէս քաղաք է բացուում, որ հազար-հազար կենդանի ունի միջումը, ու ցրտի կամ շոգի ձեռից յոգնած, ուզում ես որ շտապես, գնաս մէկ աստուածասէրի դռան վէր գաս, հանգստանաս, էլ ետ ճամփէդ բռնես, գնաս։

Մտքումդ ասում ես, թէ էս տեսածդ մէկ մեծ զօրեղ թագաւորի աթոռ պէտք է լինի։ Էստեղ ոսկին ու արծաթը աղբի հետ պէտք է խառն ընկած լինի, էստեղ օրը հարիւր քարւան ներս մտնի, հարիւրը դուրս գայ։

Հէնց իմանում ես, թէ ցերեկը փոշին ու մառախուղն է աչքդ բռնում, գիշերը, մութն ու խաւարն է քեզ խաբում, որ ինս, ջինս, մարդ, անասուն չես տեսնում, միայն գիշակեր ագռաւներն են աչքիդ սեին տալիս։

Մարդ չկայ մօտդ որ հարցնես, գիր չես կարդացել, որ իմանաս. մտքիդ հետ ընկած, տեսածդ հրաշք կարծելով՝ կամ աչքախաբութիւն, որ յանկարծ գլուխդ չես բարձրացնում, ախ, սիրելի հայազգի, ջանդ դող է ընկնում, կռներդ թուլանում, հէնց իմանում ես, թէ մէկ վիշապ, կամ հրոսակ հէնց էն սատանին է մտել, ու բոլոր կենդանիներին կամ կուլ տուել, կամ

սուրը քաշել, կամ գերի արել, ինքն էլ փախել. ուզում ես, որ աչքդ խփես, ետ դառնաս։

Ա՜խ, չէ՜ չէ՜, ետ մի՛ դառնար, ծուին էստեղից՝ հազար տարի աւել է, որ կորուել է. կա՛ց, մի՛ վախենար. անշունչ քարերն ու եկեղեցիքը մարդակեր չեն։

Աչքդ բաց արա, սիրտդ քեզ հաւաքիր, ու գլխիդ վայ տուր։



Էս սրբատաշ տաճարները, էս ահագին բերդը, էս քարերը քեզ կասեն՝ թէ սա է գոռող Անին, քո թագաւորների հզօր մայրաքաղաքը, որ էնքան էր իր հարստութիւնովը, իր փառքովը փարթամացել, ճոխացել, մեծամտել, որ հովիւն էլ եկեղեցի էր շինում, խաշնարածն էլ արծաթէ պայտով, կանաչ կօշիկներով էր ման գալիս, մուրացկանն էլ հացի փոխարէն՝ շաքար, սև փողի տեղակ արծաթ ու ոսկի էր պահանջում, որ եկեղեցի մտած ժամանակն էլ՝ իբր թէ՝ էնքան էին Աստուած մոռացել, որ կարճ վարդապետի առջևը բարձր դրքակալ էին դնում, բարձրը եպիսկոպոսի առջև՝ ցածը, որ կամ ձգւին, կամ կռանան, կամ չոգին, կամ գիրքը չըտեսնեն, ու իրանք ծիծաղեն, Աստուծոյ տաճարումը զարմանան։

II.

Առաւօտը որ լուսացաւ, Աղասու աչքը մնացել էր սառած, չէր իմանում աչքին հաւատայ թէ ոչ։ Եկեղեցիք, պարիսպ, բերդ, մինարէք՝ էնքան նոր, էնքան պայծառաշէն ու անբնակ։ Պատմութիւն չըգիտէր, որ իմանար, թէ էս ինչ քաղաք պէտք է լինի, տերտերին որ չըկանչեց ու պատմութիւնն իմացաւ, խելքը գլխիցը թռաւ...

Աղասին քաշուեց մի կողմը, թաշկինակը դրաւ աչքերին ու բերանը բաց արաւ.—

«Փառքդ շատ ըլի, ո՛վ Արարիչ Աստուած, էլ ո՞ւր ենք ասում, թէ մարդ քո սուրը հոգին ունի, քո պատկերն է, քանի որ շատ անգամ նրա միտքը քարից պինդ է, գլուխը՝ հատա։ Գոռ ու աւազակ էստեղ տարիներով բուն են դրել, էլի քո երկիրը նրանց տակովը չի արել, վրան պահել է, հէնց մեր ազգին է քո զուլումը հասել, որ չես թողում իրանց աշխարհքը շէն անեն, քո սուրբ անունը փառաբանեն, կեանք ազատեն ու կեանք վայելեն։ Չէ՜, Ամենակալ Արարիչ, դու քո ստեղծածը, քո որդին էդքան չես անարգիլ, չես ոտնահարիլ։

«Մարդս որ ծնւում է, մէկ գունդ մսից աւելի ոչինչ չենք տեսնում։ Տարիք են անց կենում, որ քիչ-քիչ ոտն է ըլում, քիչ քիչ լեզու, ուշ ու միտք ստանում, ձեռը բերանը տանելը սովորում։ Բայց վա՛յ էն երեխին, վա՛յ էն ազգին, որ աչքը էնպէս գոռում բաց կանի, որ լոյսի տեղ խաւար կըտեսնի, աչքը բաց՝ ուղիղ ճամփէն կըթողի՝ քարէ քար կընկնի։ Վա՛յ էն ազգին, որ բնական օրէնքը կըթողի, անբնականին կըհետևի, որ էնպէս խրատ ուռղ չի ունենալ, որ նրան հոգի տայ և ոչ թէ ունեցած հոգին էլ հանի։

«Արդեօք՝ որ լաւ կարդացողներ էին ելել, երեխանց ջոկ, ժողովրդին ջոկ, գիշեր-ցերեկ խրատ էին տալ, կարդացրել, լուսաւորել էին, հիմա մեր ազգը էս վիճակը կունենար, էս օրը կընկնէր։ Սարի անասունն էլ մեզանից լաւ է ապրում, թշնամուց, որսորդից կամ փախչում է, կամ վրայ թռչում, կռատում, գլուխը պահում։ Ծտի բունն էլ որ քանդում ենք,

ճժւժում, թևին, գլխին է անում։ Մենք մի ծոի չափ էլ չը-կանք, որ մեր բունը պահենք...

«Ի՞նչ օգուտ էն գիրքն ու աւետարանը, էն խաչն ու եր-կրպագութիւնը, որ մենք չենք հասկանում։ Գեանի տակին էլ շատ դանձ կայ, մեզ ի՞նչ։ Ա՜խ, մեր կարդացողներ, ի՞նչ կը-լինի որ ինչքան ժամանակ քնի, քեֆի հետ են անց կացնում, աւելի փողի թամահ անում, էսպէս բանի թամահ անեն, մեզ լուսաւորեն, իրանք էլ թշնամուց, աւազակից ազատուին. մեզ էլ ազատեն։

«Մարդս մէկ անգամ է աշխարհք գալիս. էնպէս պէտք է անի, որ էս աշխարհքից հեռանալիս՝ էս կեանքումը անունը յիշուի, ասնուի, են կեանքումն էլ հոգին փառաւորուի, լոյսի բա-ժին դառնայ։ Բայց ի՞նչ օգուտ, որ ասածս քարերն են իմա-նում։

«Ասենք՝ թէ տգէտ ժողովուրդը էս բանը լսել, ասում է, կարգաւորին ի՞նչ է ելել, որ նա էլ հանտատութիւն տալիս, թէ էսպէս հրաշալի քաղաքը անէծքով է կործանուել։ Առաջինը՝ սուրբ մարդու բերանից անէծք, դառը խօսք չի՞ պէտք է դուրս գայ. դուրս էլ եկաւ, Արարիչ, երեսս ոտիդ տակը, դու պէտք է մէկ մարդի խաթեր միլլիոն հոգի կորցնես։ Թէ պէտք է կորցնէիր, ինչի՞ ստեղծեցիր...

«Ա՜խ, հազար էսպէս ցաւեր կան սրտումս, բայց բերանս փակում են, չեմ կարում ասել»...

88. ՏԵՍՆՈՒՄ ԵՄ

Տեսնում եմ հիմի—լուռ երեկոյին
Բարակ ծուխ կելնի իմ հօր օճախէն
Եւ ուռիներս մարմանդ կօրօրւին,
Ծղրիտը կերգէ անտես խորշերէն։

Մեղմ ճրագի մօտ նստած է տխուր
Ծերունի մայրս՝ մանկիկս գրկում,

Մուշ-մուշ քնել է մանկիկս անդորր
Ու մայրս լռիկ աղօթք է անում։

«Ամենէն առաջ թող ինքը հասնի
Ամեն հիւանդի, հեռու ճամբորդի.
Ամենէն յետոյ թող ինքը հասնի
Քեզ, իմ խեղճ որդի, իմ պանդուխտ որդի»։

Անուշ ծուխ կելնէ իմ հօր օճախէն,
Մայրս կաղօթէ՝ մանկիկս գրկին.
Ծղրիտը կերգէ անտես խորշերէն,
Եւ ուռիներս մարմանդ կօրօրւին։

89. ՄԻ ՊԱՏԿԵՐ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

1877 տարւայ մայիս ամիսը մօտենում էր իր վախճանին։ Աղբակայ դաշտերից մէկի վրայ մի բանակ էր երևում՝ բազմա-թիւ վրաններից բաղկացած։ Մէջտեղը կար մի ընդարձակ հրա-պարակ, ուր անբացատրելի խռովութեան մէջ շարժւում էին զինուած տղամարդիկ, որոնց երեսները արտայայտում էին կա-տաղի անհամբերութիւն։ Նրանց ամեն մէկ շարժումը ցոյց էր տալիս, որ մի սարսափելի պատերազմի են պատրաստւում։ Վերջապէս գլխաւոր վրանի առջև կազմւեցաւ մի ամբիոն՝ թամբերը միմեանց վրայ դարսելով։ Մի պատկառելի ծերունի բարձրացաւ նրա վրայ, որ իր արտաքին կերպարանքով ներ-կայացնում էր մի անձնաւորութիւն, որ միևնոյն ժամանակ և բարձր հոգևորական է և՛ հզօր զինուոր։—Նա՝ և՛ Շէյխ էր, և՛ զօրավար։ Նա իր ձեռքում բռնած ունէր կարմիր դրօշակ։ Զինուած ժողովուրդը այս հրաշալի երևոյթը տեսնելով՝ այնպէս էր երևակայում, իբրև թէ իրանց հզօր պապերը կենդանացել են և ոգելից ճառ պէտք է խօսեն։

Շէյխի քարոզը սկսւեց օրհնութիւններով և փառաբանու-

թիւններով։ Ալլահի, Մուհամմեդի և նրա յաջորդների անունները արտասանում էին մեծ ջերմեռանդութեամբ։ Յետոյ սկսեց քաջալերել այսպէս.

«Ով Իսլամի որդիք, մեծ մարգարէն—փառք իր զօրութեանը-կոչում է ձեզ մի սուրբ գործի համար, կոչում է ձեզ պատերազմել իր կրօնի թշնամիների դէմ, որոնք սկսել են թափել Աստուծոյ ծառաների արիւնը։ (Եւ թող նզովեալ լինին նրանք)։

«Վհատութիւնը, երկչոտութիւնը և կասկածը թող հեռու լինեն ձեզանից, որովհետև երկիւղը Աստուծոյ զինուորների համար չէ։ Տէրը ինքը կրտայ ձեր բազուկներին զօրութիւն և թշնամու պարանոցները ձեր սրերի առջև կրկարտաւին, որպէս չորացած հասկը հնձողի մանգաղի առջև։ Դուք ձեր ձեռքով կբռնէք նրանց գնդակները և դէպի իրանց յետ կըդարձնէք։ Ձեր անձերը պաշտպանուած կըլինեն երկաթեայ պարիսպներով, որոնց ձեր աչքերը չեն տեսնի։ Ձեզ աջակից կըլինեն կոտորող հրեշտակների անհրևոյթ դունդերը, որոնց մարգարէն ձեզ օգնութեան կուղարկէ։ Մեծ է Իսլամի Աստուածը և բացի նրանից ուրիշը չկայ։

«Բոլոր դեաւուրները պիղծ են Աստուծոյ առջև։ Նրանց կայքը, ընտանիքը և ամեն ինչ, որ պատկանում է անհաւատներին, Աստուած մատնում է ձեր ձեռքը։ Յարձակեցէք, կոդոպտեցէք, այրեցէք և կոտորեցէք, որքանով կըլինայ ձեր սիրտը։ Աւարը և իր կրօնի թշնամիների արիւնը՝ Աստուած հալալ է անում սուրբ պատերազմի զինուորներին...

«Սուրբ կրօնի թշնամիների արիւնի հոսումը հաճելի է Տիրոջը։ Անհաւատների աւերակների ծուխը նա ընդունում է որպէս մի ողջակէզ, որից ծուխը ուղիղ բարձրանում է դէպի Յաւիտենականի աթոռը։ Կողոպտեցէք, որքան կարող էք դուք։ Եւ ձեր կոտորածների արիւնի իւրաքանչիւր կաթիլի համբանքով՝ դուք կըստանաք վարձ Աստուծոյ դրախտի մէջ։

Մեծ է ուղղափառների Աստուածը և բացի նրանից չկայ ուրիշը։

«Եթէ ձեր վեր առած զերիներից՝ ձեր սրտին հաճելի կըլինի ընտրել կնիկներ կամ աղջիկներ,—եթէ դուք ծառայեցնելու համար կընտրէք պատանի տղաներ ձեր ձեռքն ընկած դեաւուրներից,—Աստուած չէ արգելում ձեզ միայն այն ժամանակ, երբ նրանք կընդունեն Իսլամը։ Իսկ եթէ հաստատ մնացին իրանց մոլորութեան մէջ, ձեզ թոյլ է տրւում սպանել։ Իսկ ծերերին խնայել չկայ։ Անհաւատութիւնը նրանց մէջ ամրացած է իրանց ոսկորների նման»..,

Դեռ երկար խօսում էր Շեյխը. նա կանգնած էր ամբիոնի վրայ, որպէս Իսլամի մարմնացած ոգին, որպէս հալածասիրութեան և մոլեռանդութեան մի կենդանի օրինակ։ Նրա ձայնը սուր, և այն վայրենի ժողովրդին կարողացաւ ոգեւորել մարդկանց մորթելու համար։ Երբ վերջացրեց նա ճառը, կրկին դարձաւ դէպի բազմութիւնը այս խօսքերով։

«Աստուած ձեզանից ուխտ է պահանջում, և թող ձեզանից ամեն մէկը կատարէ իր երդումը»։

Երբ երդումը կատարեցին և բոլոր արարողութիւնները վերջացան, լսելի եղաւ թմբուկի ձայնը։ Ամեն մարդ վազեց իր ձին նստելու, վրանները հաւաքուեցան, և մի քանի ժամից յետոյ՝ ամբողջ բանակը պատրաստ էր ճանապարհ ընկնելու։ Նա շարժուեց, երբ Շեյխը իր ձին նստած՝ կարմիր դրօշակը ձեռին՝ առաջ ընկաւ։ Աւելի քան տասն հազար քիւրդեր հետևում էին այդ սարսափելի ծերունուն։

Այսպէս սկսուեց Շեյխ Ջալալեդդինի արշաւանքը դէպի տաճկական Հայաստանը։

Անցաւ մի ամբողջ շաբաթ։

Մի ճանապարհորդ էլ չէր ճանաչում իր ծանօթ լեռները։ Այժմ տեսնում է բոլորովին դատարկ, առաջ այսպէս չէր։ Խոտաւէտ արօտներում արածում էին հօտեր, ձորերի մէջ կազմուած էին խաշնարած հայերի վրանները, և հովիւների սրինգը հեռից հնչում էր թռչունների առաւօտեան ձայների հետ։ Այն ժամանակ հովիտների և լեռնադաշտերի վրայ հողագործ հայը, իր սովորական երգը երգելով, կամ վարում էր կամ հնձում։ Իսկ այժմ։—Այժմ ամեն գործ դադարել էր, ոչ մի շունչ չը-

կար էլ անց ու դարձ անող քարաւաններ չէին երևում, այլ միայն գիւղերի ճարակն ու ծուխը երկինք է բարձրանում։ Աւերակներ և ամայութիւն ամեն տեղ։

90. ԱՇՈՒՂ

Ասի՝ աշուղ՝ առ չունգուրդ,
Մեզ բան ասա սրտալի.
Կարօտ ենք քու անուշ ձէնին,
Մի բան ասա սրտալի.
Սրտի խօսք ենք ուզում քեզնից,
Որ վեր հանի մեր հոգին—
Ա՛ռ չունգուրդ, դարգոտ աշուղ,
Մեզ բան ասա սրտալի։

Գիտենք, որ դու միշտ տանջւում ես
Հազար ու մի ցաւերով,
Հայրենիքիդ խոր խոցերը
Համարում ես դարերով.
Չես լռանայ էդ խոցերը
Արտասունքի ծովերով...
Ա՛ռ չունգուրդ, ցաւոտ աշուղ,
Մեզ բան ասա վշտալի։

Լուռ մնալով մեր վէրքերին
Դու չես անի դեղ, դարման.
Արար աշխարհը գիտի՝ չըկայ
Մեր դարդերին չափ, սահման.
Մնջութիւնն էլ նշան հօ չի՞
Մի գովելի յատկութեան—
Ա՛ռ չունգուրդ, մեզ բան ասա,
Թող խօսքդ ըլնի ցաւալի։



Դիտեցէք այս պատկերը, պատմեցէք, թէ ով ի՞նչ է անում և նոյնը գրի առէք։

Էդպէս խօսքեր շատ ենք լսել,
Էլ կըլսենք անտրտունջ,
Մեր չըխօսկան ըլնելուցն է՝
Մնացել ենք անտէրունջ,
Լաւ է ազատ լաց ըլնիլը,
Քանց դարդ տանիլն անմռունջ,
Ասա՝ լսենք, ի՞նչ անենք, որ
Խօսքդ կըլնի ողբալի։

Տեսնում ես, որ մենք թմրած ենք,
Քունն է անուշ մեզ թլում.
Է՞ր ես դու էլ մեզ բոլորիս
Մաշող քնիցն յաղթլում,
Ա՛ռ չունգուրդ, տուր լարերին,
Կրակ վառիր մեր սրտում,
Մեզ ամենիս նոր շունչ տուող
Մի բան ասա սրտալի։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Ր.Հ. Публичная Библиотека
7/XI. 1922
Имени А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻ.ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ց Ա Ն Կ

	Երես
1. Առաջին դաս, Է. Դէ Ամիչիս	1
2. *Անպրագէտ, (Սիրոկոմլեա) Թարգ. Ց Յովհաննիսեան Շարադրական պատկեր. դպրոցի բակում	5
3. Մեր նոր ուսուցիչը, Է. Դէ Ամիչիս	8
4. Նաբէկի նժոյգը (շարադրութեան նիւթ) ձեռագիր (յատուկ անուններ գլխատառերով)	9
5. Կոյր մանուկներ, Է. Դէ Ամիչիս	10
6 *Փողոցի տղան, (Ադա-Նեգրի) Ց. Յակոբեան	12
7. Անձնազոհ ընկեր (շարադրութեան նիւթ)	13
8. Ինչով է երջանիկ լինում մարդ (Հնդկական զրոյց), Հ. Առաքելեան	14
9. *Մեծը. Գամառ-Քաթիպա	18
Շարադրական պատկեր, պտղատու ծառի փոփոխութիւնը տարբեր եղանակների համեմատ	20
10. Աղջիկն ու լուցկիները (Անդերսէն), Ա. Ծատուրեան	21
11. *Անիւի տակ, (Ադանեգրի) Ց. Յակովբեան և ձեռագիր (գլխատառ և կետադրութեան նշաններ)	24
12. Թանկագին մատանի, (շարադրութեան նիւթ)	26
13. Խորթ եղբայրս, Ա. Ահարոնեան	»
14. *Մայրիկիս, Աւ. Իսահակեան	31
15. Հոր հիւանդապահը, Է. Դէ Ամիչիս	32
Շարադրական պատկեր. մայրը խնամում է հիւանդ որդուն	36
16. *Մանուկ ոտան. ձեռագիր (դիմորոշ յօդեր) Արծիւեան	37
17. Աղբիւր, Ռ. Պատկանեան	»
18. *Բոյն քանդողի տունը Աստուած է քանդում, Հասս	41
Շարադրական պատկեր. տաքը հէքիաթ է պատմում	43
19. Հաւատարիմ շունը (շարադրութեան նիւթ)	44
ձեռագիր (տոզադարձ)	44
20. Երկնքի զանգակը, Նար-Դոս	45
21. *Կաղնին և եղէգը, Աթ. Խընկոյեան	48
22. Արցունքի աղբիւր, Գ. Աստուածատրեան	49
23. *Բլբուլին, Շ. Կուրղինեան	51
ձեռագիր (հրամայական, անցեալ կատ. և ապառնի),	
24. Տէրնդաս, Արտաշ	52
25. *Սարբոր, Վ. Միրաքեան	55
Շարադրական պատկեր. գիւղացու «Սար գնալը»	57
26. Փոքրիկ հայրենասէրը, Է. Դէ Ամիչիս	58
27. Արդար դատաստան (շարադրութեան նիւթ)	59
ձեռագիր (անցեալ անկատ. և անցեալ կատար.)	
28. *Հայրենիք, Աւ. Իսահակեան	61
29. Հայաստանի պանդուխտը, Մ. Նալբանդեան	»

30. *Պանդուխտի երգը, Ա. Ծատուրեան 63
ձեռագիր (ներկայ և ապառ. ժամանակ) . . . 65
31. Գիշերապահ Մկօի երազը, Կ. Մելիք-Շահնազարեան . . »
32. *Երկրի մշակներ, Ա. Ծատուրեան 68
ձեռագիր (յոգ. եր. ներ.) . 70
33. Իմ պանարամը, Կ. Մելիք-Շահնազարեան . . . . »
34. *Գիւղի ժամը, Յ. Յովհաննիսեան 76
35. Պայթիւն հանքում, Հ. Մելիք-Հայկազեան 78
36. *Թիթեղագործի մահը, (Ադա Նեզրի) Յ. Յակոբեան . 82
37. Մուրացկան, (շարադրութ. նիւթ) Տուրգենև 83
38. Մեռեալ տուն, Ֆ. Դոստոևսկի 84
39. *Մխիթարանք, Ա. Ծատուրեան 86
40. Գերի արծիւը, Ֆ. Դոստոևսկի » Սիբելի քոյրիկ, ձեռագիր նամակ (ածանցների մասին) 89
41. *Գերի արագիլը (Արանի), Յ. Յովհաննիսեան . . . 90
Շարադրական պատկեր. Թոչնորս երեխաներ . . 91
42. Ամենից թանկը, (շարադրութեան նիւթ) 92
43. Կարօտ, Ա. Նամալեան . . »
44. *Բառաձայն դաշնակցութիւն (Կրիլով) Այվազովսկու . . 94
ձեռագիր ոտանաւոր (ածական և թւական անուններ) 97
45. *Կկուն ու աքլորը, Ա.Թ. Խնկոյեան , , , . . . »
46. Գարնանային առաւօտ, Բաֆֆի, , , , . . . 99
47 *Ծագում է մանուկ... ձեռագիր ոտան. Վ. Միրաքեան 100
Շարադրական պատկեր. գարուն 101
48. *Գարունը եկաւ Գ. Մեսեան. 102
49. Ամառայ երեկոյ, Խ. Աբովեան, ձեռագիր (դերբայ և շաղկապ) . . . . . »
Շարադրական պատկեր. Ամառ 106
50: *Ամպերի քարաւանը, Դ. Դեմիրճեան 107
51. Անտառ Ս. Ակսակով . . »
Շարադրական պատկեր Անտառը և իր բնակիչները . , , , , , , , 109
52. *Գիշերը հասաւ, Վ. Միրաքեան 110
53. Աշուն, Ս. Ակսակով , , , »
Շարադրական պատկեր. Աշուն , , , , , , , , 112
54, *Կռունկներ, Պ, Մաճոռեան 113
55, Ձմեռ, Խ. Աբովեան , , »
56, *Ձմեռ, Հ. Հայրապետեան, 114
57, Դարիալի ձորը, Գ. Բաշինջաղեան . , , , , , 115
58, Ձորոխ, Դ. Դեմիրճեան , 116
59, Չինական Սիլինչի թագուհին Լ. Տոլստոյ , , , , 118
Շարադրական պատկեր. Թիթեռի ձուերի զարգանալը. 119
60, *Արծիւն ու ճիճուն, Արծիւեան , , , , , , , , 120
61, Ծովագնացութիւն, Կ. Մելիք-Շահնազարեան , , 121
ձեռագիր (դերանուններ և չակերտ).
Շարադրական պատկեր. շոգենաւ և առագաստանաւ. 125
62, *Նաւավար, Ա. Ծատուրեան 126
63, Լոր, Տուրգենև, , , , 127
64, Արագած, Ա. Ահարոնեան . 128
65, *Ալագեազ, Ա. Իսահակեան 130
66, Արաքս, Բաֆֆի , , , , 131
67. Դէպի Անի, Յ. Գեղամեան 133
68, *Նոր գարուն, Յ. Յովհաննիսեան . , , , , , , 136
69, Ծովի վրայ, Վ. Փափազեան 137
ձեռագիր (նախադաս. տեսակներ).
70 Երասխի վրայով, » » , 140
Շարադրական պատկեր. ծովային կենդանիներ , , 144
71, Դէպի փոքր Մասիսի գագաթը, բժ. Լ, Տիգրանեան 145
72, *Հայ ուխտաւորին, Յով. Թումանեան , , , , , 149
73, Վեզուվը, Ա. Ահարոնեան 150
Սիբելի Արշակ. ձեռագիր նամակ (նախադաս, տեսակներ.) , , , , , , 153
74, Դէպի Զանգլայ լիճը, Թ. Խզմալեան , , , , , 154
75, Սևանի վրայ, Յար. Թումանեան , , , , . , 159
76, Բօբինզօնը ծովի վրայ, ըստ, Ս, Թառայեանի , , , 159
77, Ինչպէս են մարդիկ թըռչում օդի միջով , , , 165
78, Լուսաւորչի, տոհմը Բաֆֆի 167
79, *Լուսաւորչի կանթեղը, Յ. Թումանեան , , , , , 169
80, Ս, Սահակ, Թ. Խզմալեան 170
81, *Ո՞ւր ես հայ բլբուլ, Ա. Ծատուրեան , , , , , , 172
82, Մեսրոպ մաշտոցը և հայ տառերի գիւտը, Թ. Խզմալեան , , , , , , , 173
33, *Ծեր ուռենին, Յ. Պետրոսեան , , , , , , , 176
84, Վարդանանց պատերազմը, Թ. Խզմալեան , , , , 177
85, *Տզմուտ, Յ. Յովհաննիսեան 179
86, Յովհաննէս Գուտենբերգ և տպագրութեան գիւտը Թ, Խզմալեան, , , , , , 180
87, Աղասին Անուշ աւերակներում, Խ. Աբովեան , , , 183
88, *Տեսնում եմ... Աւիս , , 186
89, Մի պատկեր Ռուս-Թուրքական պատերազմից, Բաֆֆի , , , , , , , , 187
90, *Աշուղ, Յ. Յովհաննիսեան 190
Շարադր. պատկ. աշուղ 191

2013
3700
<< Ազգային գրադարան >>
NL0060768

Պատրաստուում են տպագրութեան համար
«ԿԱՅԾԵՐ»-ի միւս տարիները։

Վաճառուում է Կովկասի բոլոր քաղաքների գրավաճառանոցներում և Ալեքսանդրապոլում կոզմոսների մօտ։

ԳՈՒՄՐՈՎ, ԳՅՈՂՆԵՐԻՆ ԼԻՍՈՒՄ Է ՁԵՎՏ։

Մեր հասցեն Александрополь, учителю Геворку Микаелянъ
Больш. Слабод. № 42.